

Утпѣ

556

1 $\frac{4}{3}$.





12

491.99
P-93
am

1

ՀԱՅԿԱԿԱՆ

Սերեք
556

ԲԱՌԱՔՆՆՈՒԹԻՒՆ

ՈՒՂՂՈՒԹԻՒՆԻ ԸՆԹԵՐՅՈՒԱԾՈՅ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆՅ ՆԱԽՆԵԱՅ

ԵՒ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՆ ԲԱՌԻՑ ԻՆՉ

561

ԳՐԵԱՅ

ՆՈՐԱՅԻ Ն. ԲԻԻՋԱՆԴԱՅԻ

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Պ. ԳԻՐԻՇՃԵԱՆ

ՊԵՐԱ, ՇԻՇԼԻ ՓՈՂՈՑ ԹԻԻ 5

— 1880 —

Ամենայն օրինակ Հեղինակին ստորագրութիւնը պիտի կրէ :

Ջողոճի 2. Բե-չմնդ-այի



556-2009

(4132 |
41

18552



Ա. Զ. Դ.

Առաջիկայ մատենիկս նուիրեմ անոնց որ ախորժելով պարսպին յընթերցումն մատենագրութեանց մերային նախնեաց, — յուսումն եւ ի մշակութիւն հայ լեզուի :

Ոչ սակաւ մթութիւնք եւ աղաւաղութիւնք գտնուին ի գիրս եւ ի թարգմանութիւնս մեր հին մատենագրաց, սկսեալ յԵզնկայ, ի Խորենացւոյ, յԱստուածաշունչ գրոց, յԱգաթանգեղէ եւ յՈսկերեանէ մինչեւ ի մատենագիրս խոնարհադոյն դարուց. եւ այս՝ երկու պատճառաւ. կամ յանհմտութենէ գաղափարողաց զձեռագիրս, եւ կամ յոչ ուղիղ իմանալոյ նոցին իսկ նախնեաց զօտարալեզու բնագիրս : Մատենկանս Առաջին մասին ԱՅՂ ուղղեմ շատ անհարագատ ընթերցուածներ՝ ծնունդք թերավարժ գրչաց՝ որ անչքեն, աղօտացնեն կամ բոլորովին խանգարեն զլեզու եւ զմիտս մատենագրին, թողլով այլում ժամանակի զուղղութիւնս վրիպակաց թարգմանութեան, որ խոր հմտութեան եւ երկարագոյն քննութեանց կարօտանայ :

Իսկ յԵրկրորդում մասին ի քննութիւն առնլով հինգ հայերէն լեզուի բառարաններ որ ծանօթ են ազգիս, քսան բառից նշանակութեան մասին ներկայացնեմ իմ զխտողութիւնքս, մերթ ամենեւին նոր մեկնութիւն եւ նշանակութիւն տալով, եւ մերթ ջրնջելով ոչ միայն նշանակութիւնք այլ եւ նոյն իսկ բառին գոյութիւնք :

Հարկ չէ ըսել որ այս ամենայն գրեալ է ըստ իմ սեպհական
առանձին տեսութեանցս եւ դիւտերուս : Շնորհակալ եմ այն բա-
նասիրաց որ ընդունին եւ հաստատեն ինչ որ ես առաջարկեմ երկ-
բայանօք եւ իբրեւ լոկ կարծիս եւ թուիս . շնորհակալ եմ մանա-
ւանդ անոնց որ ուղղեն իմ վրիպակներս : Այլում իմիք չեմ հետա-
մուտ ի բազում ամաց հետէ , բայց եթէ սրբելոյ զՀայ դպրու-
թիւնս եւ զՀայ բարբառ յամենայն օտար , կեղակարծ եւ անու-
ղիղ իմացուածոց . եւ որք ինձ նման՝ վառեալ սովին ցանկու-
թեամբ՝ աջակցին իմ աշխատութեանս կամ դիւրացնեն զայն ու-
րով եւ է օրինակաւ , անոնց անուանքն անջնջելի պիտի դրոշմին
ի միտս իմ եւ ի սիրտ :

Պերա , 23 մարտ 1880

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՌԱՔՆՆՈՒԹԻՒՆ

ՄՄԱՄՆ Ա

ՈՒՂՂՈՒԹԻՒՆՔ ԸՆԹԵՐՅՈՒԱԾՈՑ

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Ց Ն Ա Խ Ն Ե Ա Ց

Գ Լ Ո Ւ Խ Ա

ԸՆԳՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՔ

ՅՕԴՈՒԱԾ Ա

ՎՐԻՊԱԿՔ Ի ՆՄԱՆՈՒԹԵՆԷ ՆՇԱՆԱԳՐԱՑ

Հին գրչագրաց մէջ քանի մը նշանագրաց նմանութիւնն պատճառ եղած է որ անհմուտ գաղափարողք բառ բառի հետ շփոթեն կամ բոլորովին օտար բառեր ընթեռնուն, որով երբեմն խօսքին իմաստն կ'այլափոխի կամ չհասկցուե լու չափ կը մթանայ :

Նմանաձեւ նշանագիրք գլխաւորապէս ասոնք են . Ա և ՈՒ . - Գ և Գ . - Մ և Ս . - Մ և Տ . - Յ և Յ : Սկսիմ' մի ըստ միովէ իւրաքանչիւրէն օրինակներ յառաջ բերել :

Ա և ՈՒ

Ա՛՛՛՛՛՛, ուղղելի Ո-՛՛՛՛՛՛. բայ ստորին հայերէնի որ կը նշանակէ յուսադրել, սիրտ տալ, Ո-՛՛՛՛ կամ Ո-՛՛՛ (պարսկերէն ի-՛՛) բառէն, որ է յոյս : « Որ հոգս ունի՛, վարատէ զհոգսն և անհոգացո, և որ վախեալ է և երկիւղ ունի՛

«**Ֆէ** և **աներկիւղացո**» . Միւ. **Հերացի** , **Ջերմանց մխիթարու-**
թիւն . **Բ** . էջ 15 : **Ըստ** իս ուղղելի է «**Ֆէ**» . իսկ տպագիրն
կ'ուղղէ «**Ֆէ**» , որու կը հետեւին Նոր **Հայկազեանն** * և Առ-
ձեռն **Բառարանն** , որ կը գրեն Ա. **Ֆէ** , և կը մեկնեն . « **ան-**
ա և **անվեհեր կացուցանել** . **ամուքելով սրտապնդել** . **զո-**
րացնել որ չվախնայ » : Նոր **Հայկազեանին** մէջ կայ և կրա-
ւորական Ա. **Ֆէ** , որ կը մեկնուի՝ **համարձակել** , **յանդգնել** ,
անսաստել . « Մի՛ ՚ի սկզբան միանգամայն զամենայն ծան-
րալուր (ծանրանուր?) և դժուարակիր բեռինս վարուց ի
վերայ «**Ֆէ**» **հոսեցեն** ») . Յ. Մանդ . Ճառք , Ե . էջ 47 . բայց
տպագիրն ունի «**Ֆէ**» :

Ահաւասիկ Ու. **Ֆէ** և Ու. **Ֆէ** բառերուն երեք վկայութիւնք .
« Օրերս ի մահ մօտեր է ,
Կենացս «**Ֆէ**» հատեր է ,
Մարմինս յուժոյ թափեր է » .

Քթնայ խլաթեցի , Տաղ .

այսինքն՝ կենաց կամ ապրելու յոյս կտրուած է : — « Եւ թէ
երակն (հիւանդին) քան զմկան ագի բարակ լինի՝ ուժն ի
հատնել է . ապա թէ քան զմկան ագի հաստ է՝ «**Ֆէ**» կա հիւ-
ւանդին » . Բժշկարան ԺԳ . դարու : —

« Ինձ «**Ֆէ**» կայր և կուման վանց քո գալուտ ,
Ակն ունէր սիրտս ու մընար քո սուրբ տեսուտ ,
Նա բերին թուխտ մի գըրած յանկարծ մահու ,
Թէ ա՛ռ կարգա , եղբայր , ու տես որ չեմ գալու » .

Տաղ տխրական .

Ու. **Ֆէ** բառն թերեւս սոյն նշանակութիւնը ունի նաեւ
Գր . Մագիստրոսի ԾԳ . նամակին հետագայ հատուածին մէջ .

* Գործոցս ընթացից մէջ Նոր Հայկազեան կ'անուանեմ այն բառագիրքը
որ տպագրեալ է ի Ս . Ղազար յամին 1856-1857 երկասիրութեամբ Աւետի-
քեան-Սիւրմէլեան-Աւգերեան վարդապետաց , և կը կոչուի « Նոր Բառգիրք Հայ-
կազեան լեզուի » , առ ի զանազանել յայն բառագրոց զոր Մխիթար Աբբա-
հայր և իւր աշակերտք հրատարակած են յերկուս հատորս ի վեներտիկ ի աը-
պարանէ Անտոնի Պուլթոյի յամին 1749 (Ա . հատոր) և 1769 (Բ . հատոր) և
որ կը կոչուի « Բառգիրք Հայկազեան լեզուի » :

«Մի ուրեք այլ (շարժիր) այսր անդր՝ կամ սպառնալեօք կամ ուսեւօք» : Իսկ խոտրջրեցւոց արդի բարբառոյն մէջ Ուսեւ կը նշանակէ մխիթարանք, և Ուսեւ ասլ մխիթարել :

Աստղան, Աստղան . ծաղիկ ինչ լեռնական : Աստղան կը գրուի յԱգաթանգեղի Պատմութեան, ձե. էջ 481 . «Շուշանն և աստղան և յասմիկն, անխարն և սմնակն» . Իսկ ուրիշ ամէն տեղ կը գրուի Աստղան, որ թուի ուղղագոյն . «Եղեւ գթտութիւն երբեմն ի մէջ լեռնականաց և դաշտականացն ծաղկանց, զի հօրուան և մօրուան և աստղանն և այլք այս պիտիք ոչ տանէին պարսաւանացն դաշտականաց՝ արքայա ծաղկին, կակաջին և այլոց նմանեաց» . Մխիթար Գոշ, Առակք . Լ . - «Զվարդ, զմերուշան, զաստղան» . Յոհ. Երզնկացի, մեկն. Գերականի . - «Վարդենի, մանուշակ, զափրան, մնթուր, աստղան» . Գիրք վաստակոց . միր. էջ 142 . - «Ալ շապհո . աստղան» . Բժշկարան ԺԳ դարու . - «Աստղան ծաղիկն հալողի ներկին կ'ասեն . թուրքն աստղան լեւակ կ'ասէ» . Քիմիաբանութիւն, ձեռագիր որ կը պահուի յԱղգա յին Մատենագարանին Բարիդի :

Գոմաղեօ, թուի ուղղելի Գոմաղեօ . կը նշանակէ զօրա գլուխ կամ զօրասլետ, ինչպէս կը ցուցնէ կարգ բանին : «Ապա յետ այսորիկ գայր Գանուն ոմն Գոմաղեօ սպարա կրացն գնդին մանուէլեան զօրացն» . Փ. Բիւզանդացի, Ե . Լէ . էջ 243 : Հ. Արսէն Բագրատունի կ'ուզէ կարգալ Գոմաղեօ, անշուշտ ստուգաբանելով ի Գոմ արմատոյն, յորմէ կը ծագին Գումար և Գումարեմ բառք, և այնպէս կը գործածէ շատ տեղ Հայկ Գիւցազներդութեան մէջ .

«Գոմաղեօ զարհուրելի թաւամաղ լանջքքն փառնաւաղ» .

Բ. տող 215 .

«Գընդապետք և Գոմաղեօ բոլոր սպայիւք հարեալ խօ շիւն» . Լ. տող 667 .

տես անդ և Թ. տող 353 . ԺԳ. տող 109 . ԺԷ. տող 1205 :

Առձեռն Բառարանի երկրորդ տիպն կը գրէ . « Գամայեք .
գնդապետ , զորապետ . բայց աւելի ուղիղ կ'երեւայ Գո-
մայեք » :

Խաղէ , ուղղելի խաղէ , կը նշանակէ ազտ , ազտեղութիւն :
« Առանց պաճուճանաց պարտի լինել կուսանն , ընդ ազբ
և ընդ խաղէ գալ » . Ոսկեր . Ս. Տիմ . Ը . Յորդ . էջ 69 . Ի ծա-
նօթութեան կ'ըսուի թէ ուրիշ օրինակի մէջ խաղէ գրուած
է : Այս խաղէ բառս կը գտնուի նաեւ ի բառն Աղբախաղէ ,
որ երկու տեղ կը յիշուի ի գիրս փիլոնի Եբրայեցւոյ . « Քան-
զի յալս կուտեալ է խիխաւար և աղբախաղէ և ազբոց բաղ-
մութիւն , յորս սորել սուղանել սիրէ » . Յաղագս յառա-
ջախնամութեան , Բ . էջ 115 . - « Աւել ամելով զաղբախաղէն
ի բայ տանին , խնամ տանելով մաքրութեան » . Վասն քա-
հանայից Ահարոնեանց :

Սյլ է և խաղէ , այսինքն Հազբ , որոգայթի լար կամ
չուան :

Խառնընթաց , խառնընթաց : « Մինչեւ յանկարծակի և յա-
կան թօթափել ամենայն ինչ լինիցի , և ի մի վայր ապա
խառնընթաց ժողովիցին » . Ոսկեր . Եփես . Գ . էջ 694 : Թէպէտ
և խառնընթաց կարգալը խօսքին իմաստին չի վնասեր , բայց
Ոսկերերանի Մատթէի և Յոհաննու մեկնութեանց մէջ
խառնընթաց գրուած ըլլալով , թուի թէ հոս ալ նոյնպէս կար-
գալու է . « Ընդէր թողէք զքաղաքս և զտունս , և դուհ
ետուք խառնընթաց դիմեալ ամենեքեան յանապատան » .
Մատթ . Բ . Ժբ . էջ 557 . - « Համագունդ խառնընթաց առհա-
սարակ ամենեքեան ի վերայ դիմեն » . Յոհ . Ա . ա . էջ 579 :

Խառն ի խառն , խառն ի խառն : « Քանզի ոչ եթէ խառն ի խառն
ընթանան , այլ կարգաւ օրինաւորք են՝ ըստ գրական թուոց
մասանց մտրմնոյն » . Եղիշէ , յերեւումն Տեառն . էջ 318 :
Ուրիշ տեղ չեմ գտած խառն ի խառն , այլ միշտ խառն ի խառն :

Մուլի մանուկ, ուղղելի Մուլիմանուկ, որ է արաբերէն Ռուլիմ, Ռուլիման, գլ. Musulman : « Բայց երիցս երանելի ոմն երիտասարդ հասակաւ, ինքն տաճիկ, և ազգաւ պարսիկ. ելեալ զհետ սիրոյն Գրիստոսի հաւատոյն, եկն յարեւալի Պատրիկն Անձեւացի, և ինդրէր առնուլ զաւերուհական կնիքն . . . իսկ Վահրամ տեսանէր զնա մերձ առ սպանդանոցն, այն ինչ սուր ի վերայ բերեալ դահճին, ձայնէ բարձր և ասէ . Դու, մուլի մանուկ, ընդէր մեռանիս զուր և տարապարտուց. և նորա ճիշ բարձեալ ասէ . Գրիստոնեայ եմ. և նա եւս պնդէր և ասէր . Մի մեռանիր, մուլի մանուկ ես ». Թ. Արժրունի, Գ. դ. էջ 157. Կարգա մուլիմանուկ : Նոյն գրոց մէջ այս բառս գրուած է նաեւ մուլի մանուկ և մուլիմանուկ . « Յայնժամ իսկ և իսկ արագապէս թլվիատեալք եղեն մուլի մանուկ » . Գ. զ. էջ 177. — « Թողեալ զհաւատան որ ի Գրիստոսս, մուլիմանուկ գեն ստացեալ » . Գ. է. էջ 270 :

Շո֊ր, Շո֊ր : « Յորոյ վերայ ոչ քան զշո֊ր ժամանակս աւազակք ի վերայ հասեալ էին՝ օտարք ի հեռաստանէ » . Վարք Հարանց, Հ. Ա. էջ 229 : Ուղղելի կարծեմ շո֊ր :

Ույր, թուի ուղղելի Այր : Այս բառս չեմ գիտեր թէ նախնեաց որ մատենագրութեան մէջ կը գտնուի, բայց կը յիշուի Առձեռն Բառարանի երկրորդ տպագրութեան մէջ . « Ույր . Պլուտոն՝ դժոխքի չաստուածը » : Ես կարծեմ թէ կարգալու է Այր, համեմատ յունականին « Էրէս », զոր Հ. Արսէն Բագրատունի փոխած է ի Հայրէս Հոմերի իլիականին թարգմանութեան մէջ .

« Զի երեք ի Զրրուանայ եմք հարազաք, Ռէսայ ծընունդք » . Արամաշգ և ինքնըս ես, երրորդ Հայրէս սանգարապեա » . ԺԵ. տող 188 :

Պլուտոն, ուղղելի Պլուտոն (դէք դժոխոց) : « Իգնատիոս

ասէ . Որո՞յ աստուածոց . կարծեմ եթէ եղիպտացւոյն հրամայես ինձ զոհել, եղին և քաղի և կապկի . . . կամ պարսկականն հրոյ, կամ ծովային ջրոյ, և կամ սանդա-
րապետին Պղոսփոնի, կամ Հերմեայ գողախի՞» . վկ. սուրբ
Խզն . Անտիոքայ հայրապետի, Սոփերք Հայկականք, (Ս. Ղա-
զար, 1861) ԻԲ. էջ 151 : կարգա Պղոսփոնի :

Յո՞՞ն, թուի ուղղելի Յո՞ն . կը նշանակէ փառութիւն, նե-
խութիւն : « Բանդի և բազում իսկ հասակակիցք կնոջ ու-
րուք սիրեցելայ՝ թերեւս գեղեցկագոյն իսկ քան զնա յա-
ռաջագոյն մեռեալք, յեա միոյ և երկուց աւուրց հոտին,
և յո՞ն և թարախ և սրգունս ծնանին » . Ոսկեր. Մտթ. Բ.
թ. Յորդ. էջ 529 : Թերեւս ուղիղ ընթերցուածն ըլլայ
յո՞ն, վասն զի նախնեաց փերթողական բառերուն կարգը
կը յիշուի . « Յո՞ն, հոտ », և « Յո՞նոքէլ, հոտիլ » :

Գ և Գ

Գա՛վարս, թուի ուղղելի Գաաարայ . կը նշանակէ հոյն կամ
զողալ տղայն ծառը, որ կ'ըսուի նաեւ Հոյնի . գ.գ. Cor-
nouiller . տճ. Իլլըււննի ալլա՛ն : Սրբոյն Բարսղի կեսարացւոյ
վեցորէին Ե գրոյ 101 էջը կը կարդանք . « Եւ կաղնեաց
և Գա՛վարսից պտուղ՝ ճաշակս գլտորահամս ունին » . բայց ըն-
տիր ձեռագրի մը մէջ, զոր գտայ ի մատենադարանի Յ Յ .
Անտոնեան Հարց յԹրթաքէոյ, և որու վրայ երկարորէն
պիտի խօսիմ վեցորէին քննութեան մէջ, գրուած է Գաաա-
րայից . նոյնպէս ի լուծմունս ինչ վեցորէին գտած եմ . « Գա-
աարայից պտուղ . լծ. գարխսենի ծառն է » . թէպէտ և յոյն
բառն Բարսղի բնագրին չի նշանակեր գարխսենի, այլ
հոյնի, ինչպէս վերն ըսի : Մխիթար Ս.բրահօր աշակերտաց
Հայկազեան Բառագրոց երկրորդ հատորոյն մէջ կը գրուի
Գա՛վարս . նոյնպէս Նոր Հայկազեանն և Առձեռն Բառարանն
կը գրեն Գա՛վարս . նոյնպէս և Հ. Սրապիոն Էմինեան իւր Գաղ-

դիերէն - Հայերէն - Տաճկերէն բառագրոց մէջ Cornouiller բառին գիմաց : Հ. Արսէն Բագրատունի ալ Գաւառս կը գրէ ի թարգմանութեան Մշակականացն վիրգիլեայ .

« Զի տանձի փոխաբուսեալ՝ խընձոր անբուն բերէ
պատուաստ,
Եւ Գաւառս ապառաժուտ ի կարմիրակ շիկնի շըլոր » .
Բ. տող 33 :

Այլ է և Գաւառս (պարսկերէն կեալերս), տեսակ մը դեղին կորեակ մեծ հատերով . « Գարին և կորեակն , Գաւառսն և սպին » . Ագաթ . ձե . էջ 483 :

Գրեալէ՛ս կամ Գրեալէ՛ս , Գրեալէ՛ս . կ'երեւի թէ ի մասան ըլլայ՝ խեղճ ոլորմելի հագնիլ կամ թափառիլ : « Ի գրգլիս պատեալ , երիթացեալ , Գրեալէ՛ս , բրդգղեալ , քանզի միշտ ի բանտի մեռանէր (Պօղոս) » . Ոսկեք . Բ Տիմ . Գ . Յորդ . էջ 210 . - « Պահք են և Գրեալէ՛ս և դձձեղն առանց լուանալոյ և օծանելոյ » . Յ . Մանդ . Ճառք , Գ . էջ 36 . - « Գեմքն գեղնեալ (աղքատին) և թոշմեալք , և ամենայն մարմինքն Գրեալէ՛ս և երիթացեալք թափառի » . Նոյնն , Ե . էջ 52 : Իսկ յՈսկեքերանի Եսայեայ մեկնութեանն կը գրուի Գրեալէ՛ս . « Անգեօք և անքաղաք ընդ ամենայն աշխարհ շըլին (Հրէայքն) , ընդ ամենայն տիեզերս Գրեալէ՛ս թափառականք » . որմէ կ'առնու և Գաւիթ քահանայ իւր Եսայեայ մեկնութեան մէջ . « Զմտաւ ածիցէ զքաղաքին կործանումն և զցրումն խաչահանուացն , թէ որպէս Գրեալէ՛ս թափառին ասակալին ևս ընդ տիեզերս » : Առձեռն Բառարանի երկրորդ տպագրութեան մէջ Գրեալէ՛ս և Գրեալէ՛ս կը յուղարկուին ի Գրեալէ՛ս . կարօտ է քննութեան :

Գեղնման , Գեղանման , Գեղնմանութեան : Նոր Հայկազեանն որ միայն զԳեղնման կը յիշէ ի ստորեւ Գեղ բառին , պսպէս կը մեկնէ զայն . « Գեղնման . նման գեղով իւրք . նմանութիւն ուրուական նկարեալ . օրինակ . պատկեր . ստուեր » :

«Քանզի գեղնման են օրէնքն . այս զի ամենայն աւետիքն երկրաւորք գեղնման են հանդերձելոցն բարեաց , և ոչ եթէ կերպարանք կատարեալք էին նոքա , զի թերի էին» . Եփ. րեմ, մեկն. Եբբ. (Ս. Ղազար, 1836) Ժ. էջ 218. այն է բանն Առաքելոյ . «Քանզի զսուրբ հանդերձելոց բարեացն ունէին օրէնքն , և ոչ զնոյն կերպարանս իրացն» . Եբբ. Ժ. 1 : Նոյն բառն նոյնպիսի իմաստով կը գրուի Գեղաման և Գեղնմանոսիան Ոսկերերանի մեկնութեանց թարգմանութեան մէջ . «Իբրև մանկաւոյ այնպէս տայր նոցա հրամանն . դեղամանս ստուերազիրս գրէր , որպէս և մեք զարխարեասն զառաջինն» . Կողոս. Գ. Յորդ. էջ 569. - «Որպէս ի դեղնմանոսիան նկարէ գրէ ոք թագաւոր նշմարանօք , մինչչեւ զերանգան խառնեալ իցէ՝ ասեմք թէ զթագաւորի պատկեր գրեալ է» . Փիլիպ. Ժ. էջ 461 : Առձեռն թառարանի երկրորդ տպագրութեան մէջ Գեղաման բառն կը յուղարկուի ի Գեղնման . բայց թերեւս Գեղնմանը յուղարկել ի Գեղաման ուղիղ ևս ըլլայ :

Գեբմակ (ալիս) : Ներելի՞ է կարծել թէ այս բառիս հարազատ ընթերցուածն ըլլայ Գեբմակ , վասն զի արարերէն լեզուի մէջ դեբմակ , որ ըստ օրինաց տառագարծութեան հայ լեզուի կը վիճուի ի դեբմակ , կը նշանակէ աղինւ ալիւր յար և նման մերս գեբմակոյ . «Եւ այս ուժիկք էին Սողոմոնի ի միում աւուր . երեսուն քոռ նաչհոյ , և քառասուն քոռ ալիւր գեբմակոյ , և տասն եզն ընաիր , և քսան կով արօտաւ կան» . Գ. թագ. դ. 22 : Գեբմակ կը գտնուի նաեւ ուրիշ դրոց մէջ . «Ձյորեանն ետ քեզ Աստուած միայն , և դու ազգս ազգս ինչ հնարիս հնարել անախ , զնաչիհն և զխորակն և զգեբմակն և զճաղսն և զկտապսն» . Ոսկեր. Փիլիպ. Ժ. Յորդ. էջ 469. - «Եւ ի նմին եհաս և մաքսաւորն (Պետրոս)՝ բարձեալ գրաստու հաց գեբմակ ճաշոյ իւրոյ համար . . . իբրև եդին գեբմակ հացն ի կշիռն , հաւասարեաց կշիռն , և ասնն պայծառազգեստքն ցմաքսաւորն . երթ յաւել ի գեբմակ յայդ» . Վարք Հարանց , Հ. Ա. էջ 271, 272. - «Գեբմակ

հաց փշրեալ խառնէ և ուտէ»։ Մխ. Հերացի, Զերմանց մխիթ. իր. էջ 48 :

Գրայի կամ Գրոհ կամ Գրոհ տալ, Գրայի կամ Գրոհ տալ : Այս երկու ոճերս որ ստէպ կը գործածուին ի գիրս նախնեաց, մի և նոյն նշանակութիւնը ունին, այսինքն բազմութեամբ գիմել կամ յարձակիլ, խուռն ընթանալ : Կ'երեւի թէ հարազատ ընթերցուածն է Գրայի կամ Գրոհ տալ, վասն զի սանսկրիտ լեզուի մէջ, ինչպէս հազորդեց ինձ Յ. Հ. Ստեփանոս վ. Եազըճեան, հետամուտ սանսկրիտ լեզուի, որո՞ կամ որո՞ կը նշանակէ ընթանալ, ճեպով ընթանալ, փախչիլ . իսկ որո՞որո՞ կամ որո՞որո՞ կը նշանակէ ընթացք :

Գրահնդիկն, Գրահնդիկն. կը նշանակէ ըստ նոր Հայկազեանին «նիշ գունոյ գծագրեալ և դրոշմեալ հաստատութեամբ ի վերայ իրիք ի բնէ կամ արուեստիւ որպէս երակ ինչ», և կամ աշխարհաբար բացատրութեամբ՝ խարելով կամ այրելով եղած նշան մը :

«Սակաւ ինչ արեան նիշ ունելով յաչսն (Սմբատ)՝ որպէս Գրահնդիկն ի վերայ ոսկւոյ և ի մէջ մարգարտոյ ծագէր»։ Մ. Խորեն. Բ. ծբ. քանի մի օրինակք կը գրեն Գրահնդիկն : Մագիստրոսի և թղթոյն մէջ գրուած է. «Որպէս Գրահնդիկն շարամանաբար մակ ոսկւոյ մածեալ մատիտ մամբն» : Իսկ Պլատոնի Տիմէի սրամախօսութեան մէջ (Ս. Ղազար, 1877) կը գրուի Գրահնդիկն. «Եւ բազում անգամ վերստին հարցանելովս, իբրու նշանակք ինչ Գրահնդիկնով (ձեռագիրն ունի Գրահնդիկնով) անջինջ գրոյ յարասեւականք եղեն առ իս բանքն»։ էջ 89 : Հ. Սրապիոն Էմիլեան գաղղիերէն Email և Smalt բառերուն գիմաց կը գրէ Գրահնդիկն. տճ. ֆնէ : ֆննելի է ծագումն և ուղղագրութիւն բառիս :

Գրահնդիկն (զգանգակ). թուի ուղղելի Գրահնդիկնայանէլ, այսինքն (զանգակ) հնչեցնել, զարնել : «Ոչ զանգակ

նիւթոյ պղնձոյ Գանդալէցոցեալ, և ոչ քար ընդ վիրգս սալի առանց քաղցրութեան առ նոյն զարկուցեալ» . Գր. Նարեկացի, դբ: Թուի թէ կարգալու է Գանդալէցոցեալ, ինչպէս կը գրուի Ոսկերերանի Ա Տիմոթեայ մեկնութեան ԺԴ ճառին յորդորակին մէջ, երես 124. «Յորժամ հաւ զառաջինն խօսիցի, ոչ որպէս ասա՝ ի տունս խորդան ծառայք, դուրք փակեալ, և ամենքին նման մեռելոց կան ծանրարթունք, և պահայոյզն միայն զզանգական Գանդալէցոցանէ» :

Գրոանգար, ու զղելի Գրոանգար : Սերէոսի Պատմութեան 182 երեսը կը կարգանք . «Էւ զորդի նորա զանդրանիկ, որում անունն էր Սմբատ, կարգեաց արքայ ի պատիւ հօր իւրոյ, տուեալ նմա զիշխանութիւնն բնիկ տանուտէրութեանն ասպետութեան, և արար զնա Գրոանգար զօրաց իւրոց» . կարգա Գրոանգար, այն է լատին բառն Drungarius, անուն իշխանութեան ի Ստորին կայսերութեան : Տես Dronge և Drongaire Պէշլըէլի գաղղիերէն լեզուի ընդարձակ բառագրոց մէջ* :

Ղանգանոն, ու զղելի Ղանգանոն : «Էւ լինի ի նմա (ի կիպրոս) զանգանոն ի ցօղոյ անկեալ զխոտով, կռուի ի թափիչ վարոցս և ի մօրուս քօշից» . Մ. Խորեն. Աշխարհագր. էջ 603 : Այսպէս կը գրեն երկու օրինակք, ինչպէս նաև Նոր Հայկազեան և Առձեռն Բառգիրք, փոխանակ գրելու զանգանոն կամ լանգանոն, որ է յոյն բառն λանգանոն, գղ. Ladanum, տեսակ մը խիժ-ռետին (gomme-résine) որ լա. cistus ըսուած տնկոց տերեւներէն և ճիւղերէն կը ծորի : Այս զանգանոն վրիպակ գրութիւնն աւելի թիւրերով եղած է Աղանգանոյն ի Հայկազեան Բառգիրս Միսիթար Արբահօր աշակերտաց . իսկ

* Սերէոսի Պատմութեան նոր տպագրութեան մէջ զոր հրատարակած է Պ. Բերսովբէ Պատկանեան, (Պետերբուրգ, 1879) ուղղեալ է նոյնպէս Գրոանգար. «Գրոանգար, և ոչ Գրոանգար, որպէս էր ի տպագրին և ի ձեռագիր օրինակի մերում, է յն. Գրոանգար», Drungarius զինուորական պատիւն առ Բիւզանդացիս, այսինքն պեա վաշտի, Du Cange». էջ 202 :

Ս. Ղազարու տպագրին դրած Լափան բառն ինձի նորագոյն կը թուի և ընթերցուած յետին դարուց գրչադրաց :

Փլեդոննոս, թուի ուղղելի փլեդոննոս : « Գրէ և փլեդոննոս • Ամենայն թագաւորաց հուժկու եղեալ պարթեւն Արտաշէս, և ոչ միայն Ղլիւդացիս վանեալ և զկրիւսոս կապեալ, այլ յԵլենպոննատոս և ի Թրակէ զտարերացն փոխեաց զքնու թիւն » • Մ. Խորեն. Բ. Ժգ. Կայ փլեդոննոս, պատմիչ յոյն Բ դարու, ծնեալ ի Տրալլա քաղաք Լիւդիոյ . թերեւս առ այս պատմիչ կ'ակնարկէ Խորենացին :

Մ և Ս

Ս. Ղազարու վանաց Ագաթանգեղի Պատմութեան առաջին տպագրութեան մէջ գրուած էր Մարաղացոց տաղատ, էջ 624, որ յերկրորդ տպագրութեան ուղղուեցաւ Մարաղացոց տաղատ, ինչպէս արդէն նոյն գրոց խաւերէն թարգմանութեան մէջ (Ս. Ղազար, 1845) գրուած էր Satala յէջ 177: Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութեան մէջ երկու անգ կը յիշուի Մարաղ. իսկ ի Սերէոսի Պատմութեանն էջ 125 : Այս քաղաքս կը գըտնուէր ի Փոքր Հայս : — Մ. Խորենացւոյ Պատմութեան Ա. գրոց ԺԹ գլխուն մէջ Վարապետ անունն թուի թէ աղաւաղ ընթերցուած մ'է ևւ պէտք է գրել զատ զատ Վարաժ, Կար, երկու անուն, ինչպէս կը գրեն Յոհան կաթողիկոս Պատմիչ, « Ամբակ, Առնակ, Նորայր, Վարաժ, Կար », (տպ. Էմիլն, Մոսկուա, 1855, էջ 14) և Գրիգոր Մաղիսարոս : Տես ի ծանօթութեան մեծազիր Պատմութեան Խորենացւոյ . Նոյն Պատմութեան Բ գրոց է գլխուն մէջ « Եփթոնալ բառը պէտք է ուղղել Եփթոնալ, ինչպէս կ'ակնարկուի յիտալերէն թարգմանութեանն (Ս. Ղազար, 1845) էջ 111 : « Այլ առաջինն հաստատ ի զպոմից թագաւորացն առաջնոց, որպէս ևւ այժմ ի Վրաց աշխարհին, որ Եփթոնալ կոչի » . կարգա Եփթոնալ, որ վրացերէն Եփէ (թագաւոր) ևւ Ժուլ (զարմ) բառերէն բարդեալ կը նշանակէ՝ արքունի զարմ : — Մեծին Ալեքսանդրի Պատմութեան մէջ « Ղեւ կիպպոս լեանացի » ուղղեալ է լեանացի, էջ 15 :

Յիշեմ ուրիշ քանի մ'օրինակներ :

Անհատ պարմունիան, ուղղելի Անհատ պարմունիան : « Արդ կապեալ պապանձեացին որ զանհատ պարմունիանն ստեղծանեն յանհանճար մտացն իւրեանց, և կամին իւրեանց անգէտ գիտութեամբն հասու լինել անհասիցն » . Բրս . վեց . Բ . էջ 28 :
Ուղղելի է անհատ պարմունիան, ինչպէս կը գրուի արդէն Անտոնեան Հարց ընտիր օրինակին մէջ, և ինչպէս ուրիշ ամէն տեղ կը գրուի ի վեցօրէին . « Յառաջին անհատ պարմունիանց որ յանկ են ի ստութիւնն նոցա » . Գ . էջ 47 . « - « Բայց մեզ չէ ինչ դանդաղելի երկրորդել զանհատ պարմունիանն նոցա » . Զ . էջ 117 . - « Անհատ և ստայօղ պարմունեամբ » . անդ . էջ 121 . - « Հարկ իմն համարիմ երկրորդել զանհատ պարմունիանն նոցա » . անդ . էջ 122 . - « Անհատ և սնտաի պարմունիան » . անդ . էջ 134 :

Բաս, Բամ : Հինգերորդ դարու նախնեաց մատենագրութեանց մէջ ուրեք ուրեք կը գտնուի Բաս իբր նոյնանիչ Բամ և Բայ, շաղկապից : Ոմանք կարծեցին թէ Բամ, Բաս, Բայ պակասաւոր բայ մը կայ . (տես Հ. Թաղէոս Թոռնեան, Հատընտիր ընթերցուածք ի մատենագրութեանց նախնեաց, վիէննա, 1866, էջ 427, ծան. 1.) բայց և « նշանագրաց ամենամեծ նմանութիւնը գիտնալով, կրնանք թերեւս կարծել աւելի ստուգութեամբ որ Բաս գրուածն կարգալու է Բամ : Ահաւասիկ երկու օրինակք Բաս գրութեան . « Գու ոչ արարեր նոցա ողորմութիւն և ոչ իւրիք, ծերոց ծանրացուցեր զանուրս յոյժ, և ասացեր Բաս մինչեւ յաւիտեան կացից իշխան » . Ոսկեր . մեկն . Ես . - « Բայց զի դու չես յաշխարհէս յայսմանէ, զի քեզէն իսկ ասացեր Բաս յերկրէն յաշխարհէն ճենաց եմք, լեալք թագաւորք ի բնութենէ » . Փ . Բիւզանդացի, Ե . Լէ . էջ 241 :

Մեղան, ուղղելի Մեղան : « Ի ժամանակի յորում յիշեացեն որդիք նոցա զՄեղան իւրեանց, և զանտառս իւրեանց ի վերայ ծառոց վարսաւորաց և ի վերայ բլրոց բարձանց » . Երե-

միա, ժէ. 2: Կարդա զեդանս, ինչպէս կը դրուի ուրիշ
Թարգմանութեանց մէջ :

Մեֆէնս, ուղղելի Մեֆէնս : « Առաջ այս մեր Տեֆէնս, յորում կապեալ ծրարեցաւ հրաշաւորի խառնուած, գործելով ի մէջ Ժողովրդոց խեռաստամբակութիւն, զոր իգիպոս սպան բազում հոգս հոգացեալ » . Պատմ. Ալեքս. էջ 68. Բազմալեզուն 1877 տարուան Ա Պրակին մէջ, յորում հրատարակեալ է իամենիայ երգն բազդատութեամբ ընդ յունին, կը գրուի նոյնպէս Տեֆէնս, էջ 18: Կարդա Մեֆէնս, գլ . Sphinx:

Շերամ, Շերաս : Այս երկու ընթերցուածներէն որ է ուղիղն . Ստեփանոս Ռօշքայ կամենիցացի, որ ժէ գարու վերջը կամ ի սկիզբն ԺԸ ին յօրինած է Հայերէն-Լատիններէն ընդարձակ բառարան մը, Շերամ կը գրէ . ահաւասիկ երկու վկայութիւնք իւր բառարանէն . « Շերամ . որդն որ զապիրշում գործէ . լատ . Bombyx . Շերամ առնէ զապիրշում . Ալեք . լա » . - « Ապրէշ . որդն փոքրիկ յորմէ ի վեց ամիսս լինի շերամն, որ է ապրիշմագործ ճճին . լատ . Necydalus . Յապրիշէ լինի շերամն . Քաղ . » : Միտիթար Սբբահօր աշակերտաց Հայկազեան բառագրոց երկրորդ հատորոյն մէջ գրուած է յէջ 224 . « Շերաս . է որդն ապրշմի, զոր յատկապէս կոչմք շերամ . զսա Լատինք կոչեն Bombyx, և Յոյնք «Էրէ», յորմէ ծագի շերամն » : Մեր ձեռքը գտնուած նախնեաց մատենագրութիւններէն միայն սրբոյն Բարսղի վեցօրէին մէջ կը յիշուի այս բառս Շերաս գրութեամբ . « Քանզի յայնմ զեռնոյ որ կոչի շերաս, այսինքն կերպասարեր, գանձէ զվաստակս նոցա ի հանդերձս կակուղս և ի սպասս ազնըւականս » . Ը . էջ 177 . շերաս գրուած է նաեւ Անտոնեան Հարց ընտիր ձեռագրին մէջ : Նոր Հայկազեանն կ'ըսէ ի բառն Շերաս թէ ըստ յետնոց կը կոչուի Շերամ, և Անճին և Մետաքս բառերուն մէջ ալ շերամ կը գրէ : Բարսղի վեցօրէին հին ձեռագրաց մէջ քննելու է այս բառիս գրութիւնը :

Մ եւ Տ

Բարսղի Վեցօրէին մէջ, Գ. էջ 74, ձեռագրին Ասփաղջիտս գրածն ուղղեալ է Ասփաղջիտէս: — Նոյնպէս Ոսկեբերանի ճառից հատորոյն մէջ, էջ 584, Սաւրոս կամ Տաւրոս վրիպակ գրութիւնն ուղղեալ է Մաւրոս: — Մ. Խորենացւոյ Պատմութեան Գ գրոց ԼԵ գլխոյն մէջ կը կարդանք. « Եւ էր տեսանել իբրև զպարիսպ ինչ, յորոց յորովք ի ջղեայ եւ ի կաշեայ պահպանակաց զգեստուն զկարծրութեան վիմաց բերէին երեւոյթս. եւ ի վերայ նոցա անխաւած գէսք նշանք արձակեալք իբր զսաղարթ ինչ հովանաւոր ծառոց ». անխաւած գէսք կը նշանակէ առանց խալամի կամ առանց գլխու մագերը որ զարդ են զօրաց (գլխաւորապէս հեծելոց) սաղաւարաներուն: Ստեփանոս կամենիցացի Ժ եւ ր նշանագրաց նմանութենէն խարուելով, իւր Հայերէն-Լատիներէն բառարանին մէջ Խորենացւոյն անխաւած բառը կը կարդայ անխաւար, եւ կը մեկնէ. « Անխաւար. անսխալ, որ ոչ ունի զխալատ *. անխալամն. լատ. Inerrans, infallibilis ». ճրչափ կ'օտարանայ կը փոխուի խօսքին իմաստն մէկ գրոյ սխալ ընթերցմամբ: — Սերէոսի Պատմութեան Կ. Պօլսոյ տպագրին 8 երեսը գրուած է. « Սա ծնաւ զԲագամ եւ զԲագարս, եւ Բագարս ծնաւ զԲիւրս, եւ Բիւրս ծնաւ զԱսպատ ». Պ. Քերովբէ Պատկանեան իւր նոր տպագրութեան մէջ, երես 6, կ'ուղղէ Բագարս, Բիւրս, ամենայն իրաւամբք, ինչպէս կարծեմ:

Յիշեմ ուրիշ քանի մ'օրինակներ ալ:

Աճնին, ուղղելի Արննին. Աճնակալ, ուղղելի Արնակալ: « Յոյս հատուցման ի խոստացեալ աւետիան Բրիստոսի, եւ ի դատաստանացն ասնին անշէջ հրոյն՝ յիշատակօք յաւիտեանական չարչարանօք սպառնալով անաչառական, գալըս տեսմբն որդւոյն Աստուծոյ Յիսուսի Բրիստոսի ». Փ. Բիւզանդացի, Գ. դ. էջ 74: Ուղղելի է արննին, ինչպէս կ'ըսէ Հ. Արսէն Այտընեան իւր « Բնական քերականութիւն արդի

* Արագերէն լատին բառն է, որ կը նշանակէ սխալ, վրիպակ:

հայերէն լեզուի» (Վիէննա, 1866) բազմահմուտ գրուածին մէջ, երես 64, ծան. 1. «Բուզանդայ այս հատուածը՝ ի դատաստանացն «Բենին անշէջ հրոյն և այլն, սխալ օրինակութիւն կ'ենթադրենք փոխանակ «Բենին, ձեռագրաց Ժ և Կ գրերուն մեծ նմանութեանը պատճառաւ»։ Այսպիսի շփոթութիւն մը կայ նաև Վահրամ վարդապետի ԺԳ. դարու մատենագրի՝ ի Յարութիւնն Գրիստոսի ճառին մէջ, յորում «Բենակալ բառն «Բենակալ կարգացուած է։ Դատաւորաց գրոց Ե գըլխոյն 10 թուահամարին մէջ կ'ըսուի. «Հեծեալք յերիվարս ի միջօրէի, և սպիտակաց, երթեալք յատեանս «Բենակալաց»։ Ըսենք Վահրամայ տուած մեկնութիւնը. «Ի հզօր և «Բենակալ թագաւորաց և բռնաւորացն յատեանս . . . յիրաւի «Բենակալ ճանաչին առաքելականն խումբ . . . միտք մեր իբր «Բենակալ իմն են, յամենայնի զոր իմանալն կարեն՝ զնոսին ըմբռնեն . . . յատեանս «Բենակալացն», այս է Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, երեք անձանց և միոյ աստուածութեանն, վասն որոյ և «Բենակալաց ասաց և ոչ «Բենակալ»։ տես ի Նոր Հայկազեանն ի բառն Ամենակալ»։

Գիշերադէպ, ուղղելի Գիշերադէպ, այսինքնս երես : «Մեկնի այսպէս առակս. զի Գիշերադէպ են ոգւով ազգ. Պարսից, և եկեալ առ քահանայս՝ զպայծառութիւն կամին ուսանել ոգւով»։ Մխ. Գոշ, Առակք, ճշե : Կարդա Գիշերադէպ, ինչպէս կ'ըսուի նոյն առակին սկիզբը և վերջը. «Ճայեկ առ սագ ազերսէր, եթէ Գիշերադէպ գոլով ես՝ ի բնաւից պարսաւիմ, և դու այդքան սպիտակ և պայծառ լինելով, ազաչեմ զի ուսուցես ինձ նման քեզ սպիտականալ . . . և նա յանձն ոչ առնոյր զազգի մուսանալ զձայն, և մնաց նոյնօրինակ Գիշերադէպ» : Գիշերադէպ բառը Մխ. Գոշ կը գործածէ նաեւ իւր «Վասն ճշմարիտ և հաճոյ սպասաւորելոյ մարմնոյ և արեան Տեառն» խրատական գրուածին մէջ. «Զսրբութեան տաճար ոգւոյս լցի աւազակօք խիտից, մերձենալով յոգիս պղծութեան Գիշերադէպ տեսլամբ» :

Այլ է և Գիշերաբեր, գէտ կամ պահապան գիշերոյ .
« Եւ քանզի առանց Գիշերաբերոյ էր քաղաքն , մտեալ ի
ներքս՝ սուր ի վերայ առն եղեալ անողորմ կոտորեցին զա-
մենեսին » . Ար . Լաստիվ . ԺԵ . էջ 61 :

Զեֆեղէմ, ուղղելի Զեֆեղէմ . Զեֆեղ պահեմ, ուղղելի Զեֆեղ պա-
հեմ : « Եթէ հայրն յորդոնյն արարածս ոչ խնայեաց՝ այնու զի
ի ձեռս չարին մասնեաց , որդին զիւրան զիա՞րդ ոչ զընդայ-
ցէ : Առ տկարութեանն ինչ թէ առ չարակամութեան : Եթէ
առ տկարութեան շնչեղեցէ , ապա ոչ այժմ թաղաւորել է
նմա , և ոչ ի վախճանի՝ որպէս ասեմն՝ յաղթել կարէ » .
Եղնիկ , էջ 125 : Ամենայն բառագիրք շեֆեղէ կը կարդան և կը
մեկնեն՝ խնայել , ի գութ շարժիլ , վտանգէ ազատել , և նոյն
իսկ Հ . Արսէն Բագրատունի կը գործածէ Զեֆեղէ իւր գրուա-
ծոց մէջ , ինչպէս ի թարգմանութեան Պոսիւէի դամբանա-
կանին ի Հենրիկէ Աննա . « Եւ այնչափ չզընդայ ընդ նոսա
(Աստուած) , զի շեֆեղ պարտ բաշխի տալ զնոսա ի խրատ
այլոց » . էջ 54 . բնագիրն կ'ըսէ . « Et il les épargne si peu
qu'il ne craint pas de les sacrifier à l' instruction du reste
des hommes » : Ես կարծեմ թէ կարդալու է « ելէ տկարու-
թեան շնչեղեցէ » , և կ'իմանամ՝ « թէ որ տկարութեան
պատճառաւ չի կրնար հաստատուն , ամբողջ , անվտանգ
պահել իւր արարածները » . տես և յէջ 7 , ուր կ'ըսէ նոյնպէս
Եղնիկ . « Որ ոչ այնու միայն զարմանալի է , զի ածն ի չգոյէ
ի գոյ զչգոյսն , և եցոյց յոչնչէ յինչ զչէսն , այլ զի և անարար
և անխաբոս պահէ զլեալսն » , ինչպէս որ կ'ըսէ Ոսկերերան
ալ իւր Եսայեայ մեկնութեան մէջ գրեթէ մի և նոյն բառե-
րով . « Նոյնպէս և Աստուծոյ մի միայն ընդ այն զարմանայցես ,
զի զանչափ մեծութիւն մարմնոյ երկնից ի չգոյէ ի գոյ ած
և եցոյց , այլ զի յետ երեւեցուցանելոյն հասարակուն և անարար
պահէ » : Զեֆեղէ նշանակուած է նաեւ ի լուսանցի մեկնու-
թեան Մատթէի Ոսկերերանի , ուր օրինակն կը գնէ շեֆեղէմ .
« Յորժամ զամենայն թողեալ և շուրջ գայցես տոկոսիս

ժողովել, զիոխոցն զվաշխս զեփեղէ, վաճառացն նիւթս
 յաճախել» . Ա. ժե. Յորդ. էջ 229: Ընտիր չեմ համարիր
 նոյն գրոց ի ճառին Յորդորակին մէջ, երես 331, զեփեղ
 պահել գրութիւնը, քանի որ ի լուսանցին կը նշանակուի զեփեղ
 (կարդա զեփեղ) և բարիզեան օրինակն ալ յայտնապէս կը
 գրէ զեփեղէ. «Եւ եթէ ցանկանայցես եւս ընչից, անդր
 փոխես, ուր մարթիցի զեփեղ (կարդա զեփեղ) յամուր բեր-
 դին պահել, ուր չիցէ ինչ որ գամագիտ կարիցէ լինել» :
 Նոյնպէս խոսելի կարծեմ Ոսկերբերանի Ա Տիմոթեայ մեկ-
 նութեան Ժ. Գ. ճառին յորդորակին մէջ, երես 122, զեփեղ
 պահել գրութեամբ, մինչդեռ ուրիշ օրինակ և Նոր Հայկազեանն
 կը դնեն զեփեղ պահել. «Յողիս սերմանես, ուստի ոչ ոք ինչ
 կարիցէ առնուլ, այլ պինդ ունին և զեփեղ (կարդա զեփեղ)
 պահեն բազում հաւապտեօք և մեծամեծ փութով» : Տես
 նաև Ոսկերբերանի Եբրայեցւոց թղթին մեկնութեան Դ
 ճառին մէջ, երես 478, «պահել զեփեղ և անարաս» . Նոյնպէս
 ի գիրս Պիտոյից երկու տեղ . «Մինչ այս ամեթ և զեփեղ
 պահեցի կարգ» . Դ. ա. էջ 387. «Միշտ ի յարձակմանէ զրկու-
 զացն մարտակից եղեալ իւրոցն մանկանց ամենայնիւ զեփեղ
 պահել» . Ժ. բ. էջ 562: Փիլոնի Լինելութեան գրոց մեկնու-
 թեան մէջ ալ (Ս. Ղազար, 1826) կ'ըսուի, Բ. ծղ. էջ 134.
 «Քանզի անզեփեղէսք են և անհաստատք և գողգոջտք մեր
 կամքս» : Ոսկերբերանի մեկնութեանց թարգմանիչն ուրիշ
 տեղ փոխանակ զեփեղ պահելու կ'ըսէ յարի պահել զփոշո-
 վետսք, յամուր պեղում պահել, հաստատան պահել, անարաս պահել :

Լեփեփ, ուղղելի Լեփեփոն : «Եւ իմ տեսեալ զի ի վաղուց
 հետէ վախճանեալ էր նա, հանեալ զԼեփեփոնն զսր ունէի՛
 պատեցի կիտոյն զմարմին սրբոյն» . Վարդ Հարանց, Հ. Բ.
 էջ 464: Նոր Հայկազեան և Առձեռն Բառագիրք ոչ ուղիղ
 ընթեռնուն Լեփեփ. իսկ ծագումն բառիս ոչ է յարաբականէն
 լեփա կամ ի պարսկականէն լեփալէ, որպէս կը համարի Նոր
 Հայկազեանն, այլ թուի ի յունէն. Պէշըրէլ իւր ընդարձակ

5556-2008
 4132
 41



գաղղիերէն բառարանին մէջ կը գրէ Lebéton, Lebéton կամ Lébétonaire և կը մեկնէ. « espèce de tunique sans manches que portaient les solitaires de la Thébaïde », այսինքն՝ պատմութեան առանց թեզանեաց զոր կը զգենուին միայնա, կեացք թեբայիդայ :

Խրատ, ուղղելի Խրատ : Մարութայի ի վկայսն Արեւելից ճառին մէջ գրուած է յերես 95. « Հալածումն քրիստոնէից բորբոքէր, նեղութիւնն զօրանայր, գաւազանն սաստկանայր, Խրատ՝ յորդորէր, եկեղեցիք տապալէին » . կարգա Խրատ, ինչպէս քիչ մը վարը կ'ըսէ, էջ 97. « վախեալք ի Խրատու՝ ծերոց և թաքեալք ի գաւազանէ իմաստնոց » . Գասալան և Խրատ բառերը երկու տեղ ի միասին կը յիշէ :

Սյլ է և Խրատ, յորմէ կ'եննեն բառքն իրամակարկատ, իրամահատ, իրամապահ, և այլն :

Կարակի կերակրոց, ուղղելի Կամակի կերակրոց, այսինքն ախորժելի կամ համեղ կերակուրներ : « Արտամերժեալ ի բաց ընկեցեալ զկարակի կերակրոց *, մեկնէր հեռանայր եւս ի հասարակ կերակրոց՝ ի հացէ և յըմպելոց ջրոց, սակաւապիտութեամբ լոկ բանջարով զհարկաւոր պէտսն վճարեալ » . Յոհ. կթ. էջ 100. Նոր Հայկազեանն եւս կը կարդայ զկարակի կերակրոց և կը մեկնէ զանայնոսն . բայց ես կը կարդամ զկարակի կերակրոց, և Յոհան կաթողիկոսի խօսքը կ'իմանամ այսպէս . « ոչ միայն ախորժելի կամ համադամ կերակրոց չէր մօտենար, այլ և ոչ հասարակ հացի և ջրոց » : Կամակի կերակուր ածականօրէն գործածած է Յոհ. Երզնկացի իւր Մատթէի մեկնութեան մէջ. « կերակուր ախորժ և կամակ անճանց և տեսուն իւրեանց ընծայեալ » :

Յեմար կուսանի, ուղղելի Տարակուսանի : « Արդ զի՞նչ առնիցես եղկելիդ և թշուառականդ զդառնութիւնդ սաստիկ

* « Զկարակի կերակրոց » կը գրուի և Երուսաղէմի տպագրին մէջ (1867), էջ 229 :

յիմար Կոստանայն յաւուր չարաչար քո վախճանիդ, յորժամ պահանջիչք ոգւոյդ քո անողորմք եկեալ ահագին կերպարանօք ի վերայ քո հասանիցեն վութանակի տաղնապաւ զոգիդ քո յափշտակել ընդ մարմնոյն»։ Յ. Մանդ. Ճառք, ԺԹ էջ 146: Ի ծանօթութեան կ'ըսուի թէ ուրիշ օրինակաց մէջ գրուած է Գարհոսանայն. այս է ըստ իս հարազատ ընթերցուածն, վասն զի յիմար կուսանք հոս բան չունին: Անշուշտ օրինակի մը մէջ Գարհոսանայ գրուած է, և ընդօրինակողին մէկն Գարհոսանայ կարդալով ուղեր է ուղղել յիմար Կոստանայ:

Ջամուկ, ուղղելի Ջափուկ: «Իշխան ոմն վրվէռ անուն՝ սոցին Ջամուկ կանանցս եղբայր կամարար եղեալ»։ Ար. Լաստիվ. ԻԳ. էջ 102. կարդա Ջափուկ:

Ռեփին, ուղղելի Ռեֆին: «Եւ առեալ ընդ իւր յընչից իւր որչափ կամեցաւ, և ծալեալ ծրարեալ՝ Ռեփին ետ ցաղջիկն ասելով. Լծակից իմ և քոյր, ա՛ռ զսա աւանդ քեզ»։ Վարք Հարանց, Հ. Ա. էջ 143: Անշուշտ կարդալու է Ռեֆին, իբրեւ Ռեֆին կամ Ռեֆին, որ կը նշանակէ գրաւական, գղ. Arrhes, Gage, իտ. Caparra, տճ. ֆէյ. «Ռեֆին չտան, և զգինքն չվճարեն»։ Մխ. Գոշ, Գատաստանագիրք. — «Առնու առհաւատչեայ, այսինքն Ռեֆին»։ անդ. — «Առնու ի գնողէն Ռեֆին»։ անդ. — «Կորուսանէ միայն զոր ինչ Ռեֆին ետ»։ անդ.:

Ա՛յլ է և Ռեփին, յն. Ռեփինի, լատ. Resina, գղ. Résine, արբ. բաֆինէճ, որ է շոճիէն (գղ. pin), եղեւինէն (գղ. sapin), հերձիէն (գղ. lentisque), բեւեկնիէն (térébinthe) ծորած գիւրավառ և իւզոտ նիւթն:

Տոճակ, ուղղելի Մոճակ: «Ի Գոճիկ և ի մթխկաց կերակրին ի խնամոցն Աստուծոյ՝ մինչ ի դառնալ ծնողացն»։ Վարդան, մեկն. Սաղմոսաց: կարդա ի Տոճիկ կամ ի Տոճակէ, ինչպէս կը գրուի ուրիշ տեղ. «Մուն. մանր տիգ կամ Տոճակ, որ է

մթեղ» • Երեմիա Մեղրեցի • - «Պիծակ • Տոճակ կամ մթեխ» •
Նոյնն • - «Մճակի ծառ • թեղի» • Բժշկարան Ասարայ Սեբաս-
տացւոյ • այն է գղ • Orme ըսուած ծառն ։

Յ Ե Ծ

Նոր Հայկազեանին մէջ յիշուած Յորան, Յոֆինածե՛ճ եւ Յո-
ֆինընէաց բառերն ըստ ստուգագոյն քննութեանց ուղղեալ են
Յորան, Յոֆինածե՛ճ եւ Յոֆինընէաց Առձեռն Բառարանի եր-
կրորդ տպագրութեան մէջ ։

Յիշեմ քանի մ' ուրիշ օրինակներ ։

Զօրացն Գեղեցիկ, ուղղելի ՂԱրայն Գեղեցիկ « Եւ զաշիկ արա-
րեալ յայնկոյս քան զվանտոսպ, ի տեղ ոջն արձանաշար
քարակարկառ գողաձեւ միջոցի երկուց բլրակաց որ հայի
յերկվարաց արկման (?) դաշտն ի վերայ Լեզւոյ գեղջն, որ
ըբացն Գեղեցիկ առասպելաբանեն սպիանած? վերայն (վերացն?)
սպանելոցն (?) ի մանկանցն Շամիրամայ » • Թ. Արծր. Գ. Ժբ.
էջ 242. կարգա որ ՂԱրայն Գեղեցիկ ։ Թ. Արծրունի անշուշտ
կ' ուզէ ըսել. « ուր կ'առասպելաբանեն թէ Շամիրամայ
բորքերէն սպանեալ Արայն Գեղեցիկ բժշկուած է իւր վէրքե-
րէն » ։ Երանի թէ ընտրելագոյն ձեռագիր մը պարզէր ուրիշ
քանի մի յայտնապէս աղաւաղեալ ընթերցուածներ, որ այս
հետաքրքրական հատուածս կը մթայնեն ։

Համար Լ յար, ուղղելի Համարեցար ։

« Քանզի պատեհ համար Լ յար նախ դիմամբ

Զօգտակարսն քո արարածոց

Ոչ յեղուլ ամենազգի շփոթմամբ » •

պատառիկ Պիտիդեայ վեցօրէին հրատարակեալ ըսողա-
տութեամբ ընդ յունին ի ԲազմաՎեպի, 1875, էջ 124. ի ծանօ-
թութեան կ'ըսուի. « խառնակ է բանդ » ։ կարգա համարեցար ։

Յասականի՛, Յասանակի՛: Նոր Հայկազեանն մի և նոյն նշանակութիւնը կուտայ այս երկու բառերուս ալ, այսինքն աւել, հասնիլ, դիմանալ. յայանի է թէ երկուքէն միոյն ընթերցուածն խանգարեալ է: «Յառաջ քան զՂրհեղեղն պայազատութիւնք աղգաց մի ըստ միովէ ի տասներորդ-թիւ համարոյ ձգեալ յասականեցան» . Եւս. Քր. (Ս. Ղազար, 1818) Հ. Ա. էջ 108. — «Մակեդոնացւոց իշխանութիւնն մինչեւ ի Հռովմայեցւոց վախճան առնլոյ՝ յասակեցազայս ձեւ օրինակի» . անդ. էջ 326:

Գանկադոյն, թուի ուղղելի Գանկադոյն: «Թէ ընդէր, վասն զի ի Քաղղէացւոց և յԱսորեստանեաց մատենից ցանկադոյն են մեր իրք, ի յունականէն կամեցաք մեք ցուցանել» . Մ. Խորեն. Ա. բ. Նոր Հայկազեանն ևս կը կարգայ ցանկադոյն, և ցանկ բառէն կը ստուգաբանէ առաւելագոյն, յաճախագոյն. բայց թերեւս ուղղագոյն ըլլայ կարգալ ցանկադոյն ըստ այլոց ձեռագրաց, և ցանկ բառէն ստուգաբանել աւելի յարմար, աւելի պատշաճ, աւելի մերձաւոր, այսինքն թէ «Քաղղէացւոց և Ասորեստանեաց մատենքն աւելի պատշաճ կամ աւելի մերձաւոր են մեր աշխարհին մէջ հանդիպած անցից, քան թէ յունականքն»:

Յասան իցեն, թուի ուղղելի Յասանիցեն, այսինքն Յասանիցեն: «Էւարդ աես զմուրուրութիւն աղջկանն (դատերն Հերովդիսայ), և զկատաղութիւն լկուոյն. որում շնորհակալն պարտ էր լինել, զի վրէժս թշնամանաց նորա պահանջէր մարգարէն (Յոհ. Մկրտիչ), — քանզի ըստ օրինացն մեծ թշնամանք են որդւոց, եթէ մարք ի տայգերաց ցասան իցեն, — իսկ նա գործակից եւս լեալ, և ընդ նմին զմենքենեայս և զորոգայթս սատանայի կազմէր, և պարգեւս սատանայական հայցէր» . Ոսկեր. Մամ. Բ. իգ. էջ 685: Ինձի կ'երեւի թէ փոխանակ ի Կայգերաց ցասան իցեն կարգալու պէտք է կարգալ ի Կայգերաց ցասանիցն, Յօսնեմ կամ Յօսեմ կամ Յօսում բայէն որ կը

նշանակէ կին պղծել, պոռնկիլ: Այս կարծեացս վրայ աւելի հաստատուեցայ երբ Բազմալեպէ 1875 տարւոյն Դ Պրակն ձեռքս անցնելով և կարդալով այն յօդուածը՝ որոյ վերնագիրն է «Ընդհանուր տեսութիւն մը նախնեաց թարգմանութեանց վրայ դատաստան ընելու», էջ 352-357, յօդուած՝ որ անցողակի ըսելով՝ ծայր ի ծայր ինձի հակառակ գրուած է, անդեկացայ որ Ս. Ղազարու վանքը յԱրիստակէս վարդապետէ և յաշակերտէ նորին Եփրեմայ մեկնութիւն մը կը գտնուի Մատթէի Աւետարանին քաղեալ յՈսկերեբանէ, յորում սոյն հատուածս գրեալ է այսպէս. «Քանզի ըստ աւրինացն մեծ թշնամանք էին որդւոց եթէ մարք ի տայգերացն յասանիցն»: Անտոնեան Հարց մանադարանը յՕրթաքէջ գտայ ուրիշ ձեռագիր մը Արիստակէս վարդապետի և աշակերտին Եփրեմայ մեկնութեան, գաղափարեալ յամին 1810 յօրինակէ գրելոյ ի թըւին ՊԳ (1355), յորում նոյնպէս գրեալ տեսայ. «Քանզի ըստ օրինացն մեծ թշնամանք էին որդւոց եթէ մարք ի տայգերացն յասանիցն»: այս օրինակիս մէջ, փոխուելով ի հ, և ցն վերջաւորութիւնն ի ցն, այնչափ աւելի կը մօտենանք յասանիցն կարդալու որչափ որ կը հեռանանք յասանիցն ընթերցուածէն: Իսկ Ստեփանոս Կամենիցացի իւր Հայերէն-Լատիներէն բառարանին մէջ ի բառն Տագր կը գրէ. «Քանզի ըստ օրինացն մեծ թշնամանք էին որդւոց եթէ մարք ի տագերաց յասանիցն»: որով ևս քան զևս կը հաստատուի իմ կարծիքս յասանիցն կարդալու: Անաեզի կը համարիմ թէ հարազատ ընթերցուածն ըլլայ «եթէ մարք ի տայգերաց յասանիցն», թէպէտ և «կ'ուզեմ» կամ թէ «կրնամ» հասկընալ Դանիէլի մարգարէութեան ԺԳ գլխոյն 10 թուահամարին խօսքը, յորում կ'ըսուի. «Ինն երկոքեան հարեալ ի նմա, և չպատմէին միմեանց զգոտիւրեանց, զի պատկառէին պատմել զասանիցն իւրեանց»: Ըստ իս՝ ընդիրն մայրերուն վրայ չէ որ պարզապէս կը ցանկան տայգրներու, որով և իրենց որդւոց ալ մեծ թշնամանք ը-

րած չեն գտնուիր, այլ տայգրներուն վրայ որ իւր ուղիքն կ'ապահանեն զմայրերը, որով և որդւոց ալ իրօք մեծ լինամանս կ'ընեն, վասն զի այլ է ցանկութիւն, և այլ ցանկութեան գործադրութիւն: Այսպէս կը հասկընար անշուշտ և Յոհանն Երզնկացի իւր Մատթէի մեկնութեան մէջ, որ փոխանակ յօանէցն բայի դիւրահասկանալի բառ մը գործածել ուզելով կը դնէ «մոսանայցն» . «Եթէ մարք ի տայգերաց մոսանայցն» . յայտնի է որ մեր լեզուին մէջ «մոսանայցն» ոչ միայն կը նշանակէ կարգուիլ, աշխարհ մտնել, այլ և մերձաւորիլ, գալ ի խառնս: Արդէն Հերովդէսի և Հերովդէայ պատմութիւնն ալ կը վկայէ որ այդ երկուքը պարզ ցանկութեան սահմանէն անցած էին, և կ'սպրէին իբրեւ այր և կին. անոր համար կը յաւելու Ռսկերբերան . «Աղջկանն . . . թաքչել պարտ էր՝ յաղագս ծանականաց մօրն և անօրէն ամուսնութեանն» . էջ 686 : - Թուի թէ Յոհաննայսինքն Յօանէ՛ բայն ալ վրիպակաւ գրեալ կը գտնուի Յոսանէ՛ . տես Յոգնիմ ի Նոր Հայկազեանն :

Գալով Բագմա՛լիպն յարձակողական յօդուածին, այսչափ միայն կ'ըսեմ իմ անանուն ընդդիմախօսիս որ փոխանակ զիս ազարտել ուզելու՝ իւր ժամանակը շատ աւելի օգտակար կերպով անցուցած կ'ըլլար եթէ փոյթ տանէր սորվիլ նախնեաց մատենագրութեանց հին ձեռագիրները անսխալ կերպով կարդալ, որպէս զի իւր աչաց առջեւ յոյն բնագիրներ ունենալով հանդերձ «եփնիսը մեփնիս» չկարդայ ի Պատմութեան Ալեքսանդրի, և համարեցորը՝ համար և յար ի Պիտիդեայ վեցօրէին. տես ի վեր անդր, էջ 13, 20 :

ՅՕԴՈՒԱԾ Բ

ՎՐԻՊԱԿԲ

ԵՐԿՈՒ ԿԻՅ ԲԱՌԵՐՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՄԷԿՄԵԿՈՒ ՀԵՏ ՇՓՈԹԵԼԷՆ ԿԱՄ ՄԻՈՅՆ ԳԻՐԸ ՄԻՒՍԻՆ ՏԱԼԷՆ

Ձեռագրաց ընդօրինակողք երբ որ հայերէն լեզուի քաջ տեղեակ չեն ըլլար, նոր տեսակ սխալ մ'ալ կը գործեն յաճախ, որ է՝ երկու քովէ քով գանուած բառերուն անդամները իրարու հետ շփոթել, կամ գիր մը որ նախընթաց բառին մասն է յաջորդին գլուխը կապել, յաջորդին ալ առաջին գիրը նախընթաց բառին վերջը կցել առանց ամենեւին յարմարութեան, որմէ յառաջ կուգան զգալի խանգարմունք մտաց բանին, կամ սցնպիտի բառեր որ լեզուին մէջ գոյութիւն չունին : Ոսկեբերանի Մատթէի մեկնութեան մէջ կայ սցնպիտի վրիպակ մը, զոր ուղղած է նոր Հայկազեանն ի բառն Նպաստ . « Ոչ ոք զոր սիրէ, նպաստ չաշխի տայցէ » գրուած է սոյն գրոց Գ. հատորոյն 9 երեսը . ուղիղն պիտի ըլլայ « Ոչ ոք զոր սիրէ՞ նպաստ չաշխի տայցէ » : Պարտբաշխի տալ զոք կը նշանակէ գզ . Sacrifier կամ livrer quelqu'un : Ահաւասիկ ուրիշ օրինակներ ալ :

Անփոփոխ անուն, ուղղելի Անփոփոխ անուն : « Ո՞ր է ծնընդեանն անփոփոխ անունն, և ո՞ր տանել կարէ զհաստատութիւն մարդկան ծննդեանն, անյայտ սերմանցն սերմանեցելոյ » . Փիլին, Յղ. Յառաջախնամութեան, Ա. էջ 40. լատիներէն թարգմանութիւնն Հ. Մկրտչի Աւգերեան կը գնէ . « Ubi est natalitiorum nomen immutabile ? » կարգա անփոփոխ անունն, այսինքն անփոփոխ կանոն, օրէնք :

Ճերմանտ և սարկեաստտ, ուղղելի Ճերմանտ և սարկեաստտ : « Իսկ գիշակեր հաւուցն որ յորոյ կեան և ճերմանտ և

«արկեսաւոր սուան»։ Բրտ. վեց. Բ. էջ 161: Նոր Հայկազեանն
կը կարծէ թէ Սարկեսաւոր գոյական բառ է և կը նշանակէ
«ճասուռն, մագիլ սուր, սայրք եղնգանց»։ Նոյնպէս Առ-
ձեռն Բառարանի երկրորդ տպագրութիւնն կը գնէ. «Սար-
կեսաւոր կամ Սարկեսաւոր. թռչնոց ըլլունկին ճանկերը»։ Իսկ
ես վեց տարի առաջ հազորդած էի իմ կարծիքս բարեկամ
ներէս ոմանց որ փոխանակ ճերանոանք և սարկեսաւոր բառե-
րուն պէտք է կարգալ ճերանոանք և սարկեսաւոր, և վեցօրէին
խօսքը իմանալ այսպէս. «Իսկ գիշակեր թռչնոց որ որսով
կ'ապրին, յափշտակիչ ճիրաններ ալ տրուեցան», արկեսաւոր
համարելով ածական ճերանոանք բառին և ստուգաբանելով
արկանեմ և արանեմ բայերէն, վասն զի գիշակեր թռչունն ճի-
րանը նետելով կ'առնու կը յափշտակէ իւր որսը։ Ոչ սա-
կաւ ուրախացայ Անտոնեան Հարց ընտիր ձեռագրին մէջ
իմ կարծեացս համաձայն ճերանոանք և սարկեսաւոր որոշ որոշ
գրուած տեսնելով։ Արկեսաւոր բառին կազմութեան նման է
նաեւ Տարկեսաւոր և Հասկեսաւոր բառերուն կազմութիւնն։ Ըստ
Ստեփանոսի Կամենիցացւոյ և ըստ Նոր Հայկազեանին՝
Արկեսանկ կամ Արկեսանիւթիւն բառն ալ, որ կը նշանակէ կին
կամ ազջիկ յափշտակել և փախչիլ, կը ստուգաբանի արանեմ
և անկանեմ ի փախուստ։

Մաղխեալ, Գ. Ժ. Կ. ուղղելի Մաղխ, Բարբ. Ժ. Կ. Գաղիանոս
բժշկապետի բառերուն հաւաքում մը գրած են նախնիք
այբուբենական կարգաւ, յորում կը յիշուին զանազան
տնկոց, թռչնոց, անասնոց, հիւանդութեանց և անդամոց
անուանք, գործ՝ ինչպէս կը թուի՝ Ժ. Ա. կամ Ժ. Բ. դարու. այս
բառերուս մէջ կը յիշուի. «Մաղխեալ. Գ. Ժ. Կ.»), յորմէ Նոր
Հայկազեանն ալ կ'առնու կը գրէ. «Գ. Ժ. Կ. թուի որպէս ումկ.
կճատ, մոմպատ»։ Նոյնպէս Առձեռն Բառարանի երկրորդ
տպագրութեան մէջ կը գրուի. «Գ. Ժ. Կ. կճատ, մոմպատ,
կամ կակղցած մոմ»։ Բայց ոչ է այնպէս. փոխանակ «Մաղխեալ,
Գ. Ժ. Կ.» կարգալու պէտք է կարգալ «Մաղխ, Բարբ. Ժ. Կ.»։

որ թոււի պրս. պերկի-ժեո, է գղ. Galbanum ըսուած խէժն, որ հայերէն կ'ըսուի նաեւ Քաղբան կամ Չարհոտ, ամ. գանը = Ահաւասիկ քանի մի վկայութիւններ, յորս մաղի և քարթժաո կը մեկնուին քաղբան. «Այլ կինա, չարհոտ կամ մաղի» . Բժշկարան ԺԳ. դարու. — «Բարկժաո . քաղբանի» . անդ . — «Մաղիին (մաղթ ինք ?), որ է զանի» . Բժշկարան . — «Հոյզ . մաղի» . Քերթողական բառգիրք . — «Հոյզ . խիժ կամ լացուր կամ կուիզ կամ մաղի» . անդ . — «Խայտղան և ուետին . դեղ վիրի կամ կատրան կամ մաղի» . անդ : Հ. Սրապիոն էմի- նեան գղ. Sarcocolle ուետինը կ'անուանէ Գժաո, փոխանակ ըսելու Անծրութ, որ է բնիկ հայ բառն՝ պարսկերէն էնդե- րո-ի բառէն առնուած :

Այլ է պարսկերէն կեշաո, գղ. Gentiane ըսուած խոտն, որ հայերէն կը կոչուի Բող :

Նեղարար հեո, ուղղելի Նեղ արանեո, այսինքն նեղ ճանա- պարհ : «Ո՛վ հօտ մեծի հովուին և առաջնորդին կենաց, որ նեղարար հեոին յընդարձակն տանի» . Վարք Հարանց, Հ. Բ. էջ 671. կարգա նեղ արանեոն, ինչպէս կ'ըսուի նաև Գրի- գոր Աստուածաբանի Աղքատութեան ճառին մէջ . «Նեղ հա- նապարհա ընդ արձակութիւն տանի անդ երանութեանն» : Ի ծանօթութեան կը նշանակուի թէ ուրիշ օրինակ մը կը գրէ նեղ արանեոն, ճիշդ ինչպէս որ Նոր Հայկազեանն Ոս- կեբերանի Եսայեայ մեկնութեան մէջ կը կարգայ Անարհեո փոխանակ կարգալու Անարանեո . «Պատրաստ արարէք զճա- նապարհս Տեառն և ուղիղ արարէք զչաւիղս նորա, քան- զի անիւն և անարհեո (կարգա անարանեո) էին շաւիղքն» : Տեա և Մարութայի ի վկայան Սրեւելից ճառին մէջ . «Քննեա- ցուք զճանապարհս մեր, տեսցուք զի լցան գայթակղու- թեամբ, փշաբերք, խոտակիցք, անիւն և անարանեո» . էջ 146 : Առձեռն Բառարանի երկրորդ տպագրութեան մէջ ջնջելի է բառն Նեղարար, որ կարծեմ միայն Հարանց վա- րուց վերոյիշեալ վրիպակ ընթերցուածէն առնուած է :

Ջրակոյոր աւելուակ, ուղղելի Ջրակոյոր աւելուակ : « Սյուր և Ջրակոյոր աւելուակայ ջրկայ գասակարգութիւնն եռաբերկրեցին վերածնութեամբ գալստեամբ Որդւոյն Սատուծոյ » . Թէոգորոս Գովենաւոր , Գովեսա ի սուրբ կոյսն , (Ս. Ղազար , 1833) էջ 175 . կարգա Ջրակոյոր աւելուակայ : Բառարանաց միջէն ջնջելի է Աւելուակ բառն , որ կը գրուի իբր հոմանիշ կոյսնի :

ՅՕԴՈՒԱԾ Գ

ՎՐԻՊԱԿԲ

ԲԱՌԻ ՄԸ ԱՌԱՋԻՆ ՆՇԱՆԱԳՐԻՆ ՆԱԽԸՆԹԱՅ ԲԱՌԻՆ ԾԱՅՐԸ ,
 ԿԱՄ ՎԵՐՋԻՆ ՆՇԱՆԱԳՐԻՆ ՅԱԶՈՐԴ ԲԱՌԻՆ ՍԿԻՋԲԸ
 ԿՐԿՆՈՒԵԼԷՆ ԿԱՄ ԶԿՐԿՆՈՒԵԼԷՆ

Նախնեաց մատենագրութեանց մէջ շատ անհարազատ ընթերցուածոց պատճառն ուրիշ բան չէ բայց եթէ գաղափարողաց անմտագրութիւնն , որոնք երբեմն բառի մը առաջին նշանագիրը նախընթաց բառին ծոյրը կը կրկնեն ուր պէտք չէր կրկնել , կամ ուր որ նախընթաց բառն ալ նոյն նշանագրով կ'աւարարի՝ իրենք կը մտնան գրել , երբեմն ալ ընդհակառակն բառի մը վերջին նշանագիրը կրկնել կը գրեն յաջորդ բառին սկիզբը որ նոյն նշանագրով չի սկսիր , կամ եթէ կը սկսի՝ զանց կ'առնեն գրելը :

Օրինակներ չեն պակասիր . սկսիմ ի սիրեւոյն իմմէ յեղնըկայ :

« Յամենայն կողմանս վարդին , և ընդհանուր արշաւին , և ընդ բնուս պանան » . էջ 18 : Ընդ բնուս կը գրուի նոյնպէս Հ. Թագէոս Թուոնեանի Հատընտիր նախնեաց ընթերցուածոց մէջ , երես 10 : Ես կարծեմ թէ կարգալու է ընդ բնուս ,

«Անան բայի առաջին գիրն «է վրիպակաւ կրկնուած ըլլալով
քննութեան վերջը. նախնիք ուրիշ տեղ եղակի ընդ քննութեան կը
գրեն, ինչպէս կը տեսնուի հետեւեալ վկայութիւններէն .
« Թէ և մարդկան իսկ կամրցիս ցուցանել, թաքստայտ, զի
բազում պատուով յայնժամ ամենեքեան տեսանիցեն, յոր-
ժամ Աստուած յայտնիցէ և յարգիցէ և քարոզ ընդ քննութեան
հրաման տայցէ կարգալ » . Ոսկեր . Մտթ . ԺԹ . էջ 303 . -
« Ընդ ամենայն աիեզերս շրջեցաւ, ընդհանուր և ընդ քննութեան
քարոզեաց » . Ոսկեր . Բ Տիմ . Թ . էջ 262 . - « Հուշակ հարեք
քննութեան վասն իրացդ գործելոց » . Ոսկեր . մեկն . Ես . -
« Էր, ասէ, երբեմն մինչ ընդ քննութեան խաւար և ջուր էր, և
էին անդ այլ ինչ գաղանք » . Եւս . Քր . Հ . Ա . էջ 22 . -
« Մինչ դեռ խոստաւ և ջուր էր ընդ քննութեան, և գաղանք միայն
էին ի նմա » . անդ . էջ 24 :

« Եւ եթէ զնախանձուէն եւս ճշտութեամբ քննիցեն՝ թէ ուստի
եղեւ, ասացուք՝ եթէ յառաւելութենէ զմարդն պատուելոց » . Եղնիկ, էջ 45 : ճշտութեամբ կը գրուի նոյնպէս Հ . Թա-
դէոս Թուոնեանի Հաաբնաիւր ընթերցուածոց մէջ, երես 13 :
կարգա ճշտութեամբ . « Էն՝ քննիցեն բառին է : Նախնիք ուրիշ ամէն
տեղ եղակի կ'ըսեն ճշտութեամբ քննել, ճշտութեամբ քննել » . « վասն էր
ճշտութեամբ քննիցեն զուղղութիւնս ինչ քո » . Ոսկեր . Մտթ . Ա . Գ .
Յորդ . էջ 38 . - « Յորժամ զիւրոց մեծամեծ մեղաց անփոյթ
առնիցէ, և զայլոց փոքունան ճշտութեամբ քննիցէ » . անդ . ԻԳ . էջ
361 . - « Եթէ զայնպիսի ինչ ճշտութեամբ պարտ իցէ քննել » . Ոսկեր .
Տիմ . Գ . Յորդ . էջ 309 . - « Չէ ժամ զայն ճշտութեամբ քննել » . Սե-
բեր . Թ . էջ 181 . - « Ահա համարք կան և պատիժք և ճշտութեամբ
քննել » . Յ . Մանդ . Ճառք , Թ . էջ 82 : Ըստ այսմ եղակի
են միշտ Ստուգիւ, Ստիպով, Տաղնապաւ, Գտակաւ, Ճըշ-
մարտիւ, Հաւաստեաւ, Արդարեւ, Սերտիւ, Սեղմիւ, Նմա-
նեւ, Գիւրով և թեթեւով մտկայաներն : Նոր Հայկազեանն
կը յիշատակէ միայն իբր անսովոր Ստուգիւ մտկայ յոգ-
նակի ի Պատմութենէ Գրիգոր Երիցու շարացարողին Մաս-

Թէոսի Ուռհայեցւոյ, բայց և այն կ'ուղղուի Սարգիսի տպագրին Երուսաղեմի (1869), էջ 536. «Սարգիս ոչ կարա-
յաք ի վերայ հասանել պատճառին»: Անմտադրութեան
հետեւանք համարելու է Հ. Արսէն Բագրատունւոյ ճշդիւ-
գործածելը ի Յառաջաբանի Մշակականացն վիրգիւեաց,
էջ 10. «Հայկեանս բարբառոյ ոչինչ կարծեմ պակասէ ի
յիշատակեալ հանգամանացդ ի լաւութիւն թարգմանու-
թեան. ոչ բուականութիւն ի բացատրել զամենայն ինչ
ճշգրտօրէն ճշդիւ- և անօր փափկութեամբ իմաստից, ոչ
պերճ վսեմախօսութիւն, ոչ անարտօնութիւն զօրութեան և
ոչ առատութիւն ճոխութեան, միայն թէ ի գրիչ ճարտար
գիպիցի»:



«Եւ զուարճասցին իրրեք զխոս ջրօրէի և որպէս զու-
ի մէջ ջրոց գնացից» . Ետպիսի վեճ. Ուղղելի է ուրի,
ինչպէս կը դնէ յոյնս. ուրի բառին նն մոռցուած է յա-
ջորդ ի նախդրին պատճառաւ:

«Եւ զիարդ, ասեն. Արրահամ կամ Յուլբ շէ՞ արդա-
րացան» . Ոսկեր. Մտթ. Ա. իա. էջ 335: Թուի շէ՞րդ .
յաջորդ «արդարացան» բառի պատճառաւ «րդ» միանգամ գը-
րուած է: Իսկ փ. Բիւզանդացւոյ Ե գրոց ի՞նչ գլխուն մէջ,
Երես 223, «Եւ «րդ արդար դատաստանօք քովք մերժեցեր
զնոսա ի գրախտէն փափկութեան յայս աշխարհ ուստի
ստեղծեր», «րդ աւելորդ կը համարիմ և յաջորդ «արդար»
բառէն շփոթած: - «Ընդէր մեծամտիցես, ս՛վ այր դու, զի
ի կանու Բարձրան նստիցիս, և լուծք ջրեաց ձգիցեն» . անդ .
ԻԳ. Յորդ. էջ 377: Ուղղելի է «ի կանու Բարձրան նստիցիս»: -
«Եւ եթէ այնմ՝ չհաւատայցես, «ար» ինչ իրօք ան զհան-
դամանս հանդերձերցն» . Բ. թ. էջ 526: Ուղղելի «ար»
ինչ իրօք»:

«Զի տան ուրեք զժառայ նորագին թէ ոչ նախ փոր-

ձեռքերն, չառնեն իմիք հաւատարիմ» . Ոսկերք . Ա Տիմ . ԺԱ . էջ 87 : Կարդա « ղի է տան ուրեք » : - Չիչխեն (ծառայքն) աւելի ինչ քան զպէտան առնուլ , բազում անգամ թերեւս և «սկառ քան զչափն» . անդ . ԺԶ . Յորդ . էջ 149 : Կարդա «սկառ քան զչափն» : - «Սու մարդարէիւքն սուտ մարդարէքն , առ առաքելովքն սուտ առաքեալքն , . . . և յայնժամ թեւդաս և Սիմոն , և առաքելքն և այլք եւս » . անդ . Բ Տիմ . Բ . էջ 243 : Կարդա « առաքելքն , ինչպէս արդէն ըսաւ քիչ մ'առաջ . տես և ի մեկն . Կողոս . Թ . էջ 624 . «Առ առաքելքն չէր այնպէս » :

«Մի զտիգս մերկանալ , մի զայտս ցտել , Ք' թուխս հա մակել» . Ոսկերք . Փիլիպ . Գ . Յորդ . էջ 380 : Կարդա «Ք' է թուխս համակել» :

«Եւ ընդ այն զի՞նչ շարժանալ է իցէ , ուր զի և առ Տիմո թէոս գրէ՝ եթէ Զքո անձն սուրբ պահել» . Ոսկերք . Կողոս . Բ . էջ 614 : Կարդա « զի՞նչ շարժանալ իցէ » :

«Քանզի մեք հօր սրբոյ և յսպիկ նախանձուէ գիպե յաք» . Սեբեր . Ե . էջ 88 : Կարդա « յսպիկ է նախանձուէ » :

« Հրամայեսցես հրատարակիս (հրատարակառ) քարոզ կարդալ թէ Գողթազդ ոչ եթէ զխորհուրդ ինչ արքունի ի վեր եհան , և ոչ թէ վասն այլ ինչ յանցանաց մեռանի , այլ վասն քրիստոնէութեան » . Վկ . Ծմաւոնի եպիսկոպոսի , Սովերք Հայկահանք , Ի . էջ 35 : Կարդա հրատարակառ . Կարդա բառի սկզբան Կէն վրիպակաւ կրկնուած է հրատարակառ ի վերջը :

« Իսկ շնորհատուր Հոգւոյն լցեալ զնա , գիտութեանն էր ազբիւրացեալ զամենայն լեւեալն ցոյս ահանջացն և սրախն երկրին » . Փ . Բիւղանդացի , Գ . Ժբ . էջ 30 : Կարդա լեւեալն ցոյս : Տես և յեղիշի մեկնութեանն Յեսուայ , Ժ .

էջ 175 • «Հարկ է ընդ երկու ցնցող» ակնմայ ի ներքս մտա-
նել, և ընդ ձայնական հնչումն ի սիրտն աղղեւ » : — «Յայնմ
ժամանակի խնդիր ելանէր արքայն Արշակ առհմին զորովա-
րաց աղղին քաջայն Մամիկոնենից » . անդ . Գ . բ . էջ 66 :
Կարգա է խնդիր :

« Զի պէտս օգտութեան հաստատեաց զնոսա Արարիչն » .
Բրտ . վեց . Ե . էջ . 90 : Կարգա շէ է դէր » , ինչպէս կը դնէ և
Անտոնեան Հարց ընտիր օրինակն : — « Կէսքն վտառ վտառ
երամ երամ շրջին , և կէսքն ցիր և ցան ի մէջ խորոց ծո-
վուն իբրեւ մոլեկանս բանդագուշեալս յաճեալ սահին » .
անդ . Է . էջ 139 : Կարգա « յաճեալ սահին » , ինչպէս կը դնէ
և Անտոնեան Հարց ընտիր օրինակն :

« Զի առ քաղաքօքն երկօքումբք և առ ամենայն նա-
հանդաւն նոցունց քաղաքաց՝ անցանէր Ռոմոս գետ բա-
զում յորդութեամբ ջուրց իւրոց » . Եւս . Պամ . (Ս . Ղաղար ,
1877) Ե . ա . էջ 322 : Ուղղելի Բոդոնոս , գղ . Rhône . բն մնու-
ցուած է նախընթաց անցանէր բային պատճառաւ . իսկ յէջ
344 ուղիղ կը գրուի Բոդոն . « Ընկեցին զնոսա ի Բոդոն գետ
որ անցանէր ընդ այն » :

« Յեզեկիէլ գրեալ է՝ եթէ Սատակելոց էր Աստուած
զտունին առաջին իբրու զմարդիկ կարգաբանի , և զուարճա-
ցուցանէ զայլ մարդիկ՝ որ ի կռապաշտութեան աւերեալ
և ցամաքեալ էին » . Եփր . Աւետ . (Ս . Ղաղար , 1836) էջ 290 :
Նոր Հայկազեանն կ'ուղղէ արգաբանի :

« Զոր և ինքն իսկ ասէ , եթէ և յեդէ նաքարակիտն
ինդրեսցի » . Յ . Մանդ . Ճառք , ԺԳ . էջ 115 : Կարգա յեդէն :

« Բայց և հանգչին արդարեւ ըստ այս մարգարէութեան
ոչ ամենեքին , այլ կատարեալքն յառաքինութեան ուղիք » .

Մ. Խորեն. Ա. դ. : Կարգա « ըստ այսմ մտրդարէութեան » :
-« Այլ ետ տեղի աղխին նորա և ռոճիկ ի կերակուր , փոփոխելով փեղ ի տեղւոջէ ցբովանդակ ամս » . անդ . Բ. ձա :
Կարգա « փեղ ի տեղւոջէ » , ինչպէս ունին արդէն ուրիշ օրինակք :

« Քանզի և ոչ բարիդ առնելով դոցա՝ կարասցես զիս Բարեկամս ստանալ , և ոչ չար ինչ առնելով սակս այնորիկ թշնամի » . Պտմ. Ալեքս. էջ 93 : Կարգա Բարեկամ : Իսկ յէջ 5 « Կռոնոսս « փեղ » » գրուածն ուղղեալ է « փեղ » :

« Որպէս եղէք աստուածաբար կենդանացուցիչ մեռելութեանս իմոյ , և յարուցեալ ՚ի միջի արարէք , կամէի թէ զբովանդակ անձնս յարուցեալ էր , և ոչ զկէսս » . Դ. Փարպեցի , Պատմութիւն , էջ 537 : Ի՞՞ աւելորդ է և յաջորդ է Քլէն շփոթած :

« Նա փրփուր ի բերանոյն արձակիցէ , և սա լոյ՛ նեխեալ ժահահոտութեամբ անըմբերելեալ լցեալ » . Ոսկեր . ընդդէմ արբեցութեան , Ճառք , էջ 125 : Կարգա լոյ՛ն :

ՅՕԴՈՒԱԾ Դ

ՎՐԻՊԱԿՔ ԿԻՏԱԴՐՈՒԹԵԱՆ

Անսխալ կիտագրութիւնն ընտիր ձեռագրի մը գլխաւոր յատկութիւններէն մին կրնայ համարուիլ , վասն զի առանց յարմարութեան գրուած ստորակէտ մը կամ միջակէտ մը , մինչեւ իսկ բութ մը , խօսքին իմաստը կ'այլալայէ , թէ որ բոլորովին չի խանգարեր : Յաջորդ օրինակք բաւականապէս կը հաստատեն այս ըսածս :

«Եւ որ հարիւրեմեանն մեռանիցի՝ մեղաւոր և անիծեալ կոչեսցի»։ Եսայի, կե. 20: Ըստ կարծեաց Նորին Սրբութեան Ամենապատիւ Տ. Ներսէս Պատրիարքի պիտի ուղղուի այսպէս. «Եւ որ հարիւրեմեանն մեռանիցի մեղաւոր՝ անիծեալ կոչեսցի»։ Քննելի յայլ թարգմանութիւնս Եսայեսայ մարգարէութեանն։

«Յորժամ սովորեսցի ոք հաւատալ այնպիսի իրաց (կախարդաց), բազում անգամ ըստ խաբեբայից մտաց պատահէ, և բազում անգամ չպատահէ ինչ. և չպատահելն ոք չնայի, այլ թէ յանկարծ դուն ուրեք գիպիցի։ Այնպիսի ինչ կանխագէտ զօրութիւն առ իս՝ որ հաւատացեալս եմ՝ աժ զայնպիսիսն»։ Ոսկեր. Բ Տիմ. Ը. Յորգ. էջ 254: Թուի ուղղելի. «այլ թէ յանկարծ դուն ուրեք գիպիցի այնպիսի ինչ կանխագէտ զօրութիւն։ Առ իս՝ որ հաւատացեալս եմ՝ աժ զայնպիսիսն»։

«Կենաց անուն բազում ինչ նշանակէ, որպէս մահուն։ Իսկ են կեանք մարմնոյ, են կեանք և մեղացն»։ Ոսկեր. Փիլիպ. Գ. էջ 376: Ուղղելի է. «Կենաց անուն բազում ինչ նշանակէ, որպէս մահուն իսկ. են կեանք մարմնոյ և այլն»։

«Առ առաքելովքն չէր այնպէս, այլ ստէպ անցանէին զվաղուցն ուսելովք, և զուսեալսն՝ այլոց վարդապետս կայուցանէին. և այնպէս կարացին ընդ ամենայն աշխարհ շրջել, եթէ զմեզ ի միում վայրի կապիցէք։ Ո՞րչափ ինչ վարդապետութեամբ կարօտ ոչ կարծիցէք զեղբարսն ձեր որ ի շէնսն և յազարակսն իցեն, նա և զվարդապետսն նոցա. այլ դուք բեւեռեալ ունիք զիս առ ձեզ»։ Ոսկեր. Կողոս. Թ. էջ 624: Ուղղելի է. «Առ առաքելովքն . . . և այնպէս կարացին ընդ ամենայն աշխարհ շրջել։ Եթէ զմեզ ի միում վայրի կապիցէք, ո՞րչափ ինչ վարդապետութեամբ կարօտ և այլն»։

«Այս ուրեմն և այնու զատանայի դործ գործես, և նենդութեամբ ընդ մարմնոյն Գրիստոսի գնաս, զի ընդ եղբօրն խանտաս չար: Եւ այն իսկ չար է, զի որոյ չէ ինչ մեղուցեալ՝ և մարանչիցի ոք» • Ոսկեբ. Կողոս. ԺԱ. Յորդ. էջ 653: Ուղղելի է. «զի ընդ եղբօրն խանտաս: Չար և այն իսկ չար է և այլն»:

«Ասացիք թէ ոչ տեսանէ Տէր զայս ամենայն, և որ ինչ նման է սոցին բանիցս: Չայս բանս խօսեցաւ սուրբ ծերունին Դանիէլ» • Փ. Բիւզանդացի, Գ. Ժդ. էջ 41: Ուղղելի է. «Ասացիք թէ ոչ տեսանէ Տէր: Չայս ամենայն և որ ինչ նման է սոցին բանիցս, զայս բանս խօսեցաւ և այլն»: Տես նաեւ ի նոյն գիրս յէջ 79. «Չայս և այսպիսի ինչ, և որ ինչ այսմիկ նման էին բանք, խօսէր հանապազ» • - «Չայս ամենայն բանս, և որ ինչ այսմ և սմին ինչ նման էին բանք, խօսեցաւ սուրբն Ներսէս» • էջ 86. դարձեալ յէջ 92, 197, 217, 258:

«Նստի հանապազ, և խորհի պատահարս չարեաց և դիպումն փորձութեանց նախանձորդին: Ըղձանայ, շրջի մտախորհ յուռմարեալ, և երկնէ իբրեւ ծննդական» • Յ. Մանդ. Ճառք, ԺԳ. էջ 108-109: Ուղղելի է. «դիպումն փորձութեանց նախանձորդին ըղձանայ. շրջի մտախորհ և այլն»:

«Չոր յիշատակեսցուք ի կարգի պատմութեանս յորժամ զորդի ի հօրէ ծննդաբանելով ազգաբանիցեմք զբովանդակին: Իսկ զհայաստանեացս նախարարութիւնս, զամենեցուն զուստն և զգիարդն յայտնելով համառօտ, որպէս հաւաստի ի յունականս ոմանս կայ պատմութիւնս» • Մ. Խորեն. Ա. ա: Այս հատուածս կաղ է և մութ՝ պատճառաւ զքովանդակն և իսկ բառերուն մէջ մտած վերջակիտին. ուղղելի է. «Յորժամ զորդի ի հօրէ ծննդաբանելով ազգաբանիցեմք զբովանդակն իսկ զհայաստանեացս նախարարութիւնս և ըն»:

« Վասն որոյ առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ զմեզ առաքեցին յՍղեքսանդրիայ՝ ի լեզու պանծալի, ի ստոյգ յօդանալ ճեմարանին վերաբանութեան: Գլ. կբ. ի վարդապետսն, յինքն և ի ճանապարհորդութիւն ուսմանն, օրինակաւ երկնային զարդու»։ Մ. Խորեն. Գ. կա: Խորենացւոյ Պատմութեան մնայլ մասերէն մին ալ այս է. ամենայն թարգմանիչք միտք յօգնեցուցած են վերաբանութեան ճեմարանը հասկընալու համար. ես յուսամ թէ բաւական կրնայ պարզուիլ այս հատուածս՝ կիտաղրութիւնը ուղղելով այսպէս. « Վասն որոյ առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ զմեզ առաքեցին յՍղեքսանդրիայ՝ ի լեզու պանծալի, ի ստոյգ յօդանալ ճեմարանին »: Հոս կը վերջանայ ԿՍ գրքուիսն. իսկ վերաբանութեան բառը վերաբանութեան ուղղելով կցելու է ի սկիզբն վերնագրի յաջորդ գլխոյն. « Վերաբանութիւն ի վարդապետսն, յինքն և ի ճանապարհորդութիւն ուսմանն, օրինակաւ երկնային զարդու »: Վերաբանութեան կը համապատասխանէ յոյն եբբ'ուլոս բառին, յորմէ կ'երևէ գաղղիականն Épilogue, որ է բովանդակութիւն (résumé) կամ վերջաբան ճառի մը և մասնաւորապէս մատենի մը. Խորենացւոյ Պատմութեան Գ գրոց ԿԲ գրքուիսն յայտնապէս վերջաբանի ձեւ ունի: Ի գիրս Պիտոյից նոյն մտքով կը դրուի ի վերայ բան կամ ի վերայ բանի. « Եւ աւարտեսցես զպէտսն դուզնաքեայ ի վերայ բանի »: Ս. էջ 341. « Եւ ապա զ'ի վերայ բանին՝ ի կատարման ըստ պատճառի »: Ե. էջ 413. « Եւ (դենել) զ'ի վերայ բանին պատճառին ձայնակցեալ »: Զ. էջ 445 :

Գ Լ ՈՒ Խ Բ

ՄԱՍՆԱՒՈՐ ԲՆԵՈՒԹԻՒՆ

ԳՐԱՆԻ ՄԻ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆՅ ՆԱԽԵՆԱՅ

Մինչեւ հիմա խօսեցայ ընդհանուր և համառօտ տե-
սութեամբ անհմուտ գաղափարողաց քանի մի տեսակ վրի-
պակներուն վրայ, որոնց կը պատահինք յաճախ ի ձեռա-
գիրս: Հիմա խօսքս մասնաւորելով կը մխիմ ի քննութիւն
մեր հին մատենագրաց ոմանց հրատարակեալ գրուածոց,
եթէ հեղինակութեանց և եթէ թարգմանութեանց կար-
գէն, հաւատարիմ մնալով իմ ծրագրիս. ըսել կ'ուզեմ թէ
կը հետազօտեմ միայն այն սխալները որ արդիւնք են թե-
րավարժ գրչաց: Եթէ գիմենք հին պատմութեան, հին
աշխարհագրութեան, հին սովորութեանց և բարուց աղ-
գաց, եթէ յայց ելնենք Հայաստանի և Հայաստանէն դուրս
գտնուած ազգային վանորայից՝ մեր նախնեաց գրուածոց
ընտրելագոյն ձեռագիրներ վնտուելու համար, եթէ ձեռք
առնունք յոյն և ասորի բնագիրներ և բաղդատենք մեր
երանաչնորհ նախնեաց թարգմանութիւնքը, աներկբայելի
է թէ շատ անիմանալի համուածք պիտի լուսաբանին և
շատ մ'ալ անհարազատ կամ անյարմար բառեր և ասու-
թիւններ պիտի սրբագրուին: Հետագայ ուղղութիւնք,
որ պարզապէս ծնունդ են իմ անդրադարձութեանցս, թե-
րեւս ունենան իրենց յարգը և կարեւորութիւնը յայս
հմտից. սիրելի է ինձ կարծելը որ այս ուղղութեանց եթէ
ոչ ամէնը՝ գէթ մեծագոյն մասն վաւերանայ կամ հայագի-
տաց վճռով, կամ ընտիր գրչագրաց ստոյգ և հաւաստի
վկայութեամբք:

Ահաւասիկ անուանք այն մատենագրութեանց զորս կը
քննեմ ի ստորեւ յաջորդաբար.

Ա. Եղնիկ Կողբացի, Ընդդէմ աղանդոց (Ս. Ղազար,
Բ տպագր. 1863):

բ. Յոհան Ոսկերեբրան, մեկնութիւն Մատթէի Աւետարանին, 3 հատոր (Ս. Ղազար, 1826) :

— Մեկնութիւն թղթոցն Պօղոսի, 2 հատոր . բ հատորոյն վերջը դրուած են Ոսկերեբրանի Երկբայական Ճառքն (Ս. Ղազար, 1862) :

— Ճառք (Ս. Ղազար, 1861) :

գ. Սերբերիանոս Եմեսացի, Ճառք (Ս. Ղազար, 1830) :

դ. Մարութա, Ճառ ի վկայան Արեւելից, ի կարգի Մովերաց Հայկականաց, հատոր ի (Ս. Ղազար, 1854) :

ե. Ագաթանդեղոս, Պատմութիւն (Ս. Ղազար, Բ տպագր. 1862) :

զ. Փաւստոս Բիւզանդացի, Պատմութիւն (Ս. Ղազար, 1832) :

է. Բարսեղ Կեսարացի, վեցօրեայ (Ս. Ղազար, 1830) :

ը. Յոհան Մանդակունի, Ճառք (Ս. Ղազար, Բ տպագր. 1860) :

թ. Մովսէս Խորենացի, Պատմութիւն, մեծադիր (Ս. Ղազար, Բ տպագր. 1865) :

— Գիրք Պիտոյից :

ժ. Փիլոն Եբրայեցի, Յաղագս Յառաջախնամութեան (Ս. Ղազար, 1822) :

— Յաղագս բան ունել և անասուն կենդանեացդ :

ժԱ. Պատմութիւն Ալեքսանդրի (Ս. Ղազար, 1842) :

ժԲ. Եղիշէ վարդապետ, Ճառք (Ս. Ղազար, Բ տպագր. 1859) :

ժԳ. Ղազար Փարպեցի, Պատմութիւն (Ս. Ղազար, Բ տպագր. 1873) :

— Թուղթ առ վահան Մամիկոնեան :

ժԴ. Սերէոս Եպիսկոպոս, Պատմութիւն ի Հերակլն (Կ. Պօլիս, 1851) . նոր տպագրութիւն ի ձեռն Պ. Գերովմէի Պատկանեան (Պետերբուրգ, 1879) :

ժԵ. Թովմա Արծրունի, Պատմութիւն (Կ. Պօլիս, 1852) :

ժԶ. Վարք Հարանց, 2 հատոր (Ս. Ղազար, 1855) :

Ժէ. Արիստակէս Ղաստիլերոցի, Պատմութիւն (Ս. Ղազար, 1844):

ԺԸ. Մխիթար Գոշ, Առակք (Ս. Ղազար, Բ տպագր. 1854):

ԺԹ. Մխիթար Հերացի, Զերմանց մխիթարութիւն (Ստորին հայերէն) (Ս. Ղազար, 1832):

Ի. Գիրք վաստակոց (Ստորին հայերէն) (Ս. Ղազար, 1877):

Ա. ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՅԻ

ԸՆԴԴԷՄ ԱՂԱՆԴՈՅ

1. «Ապա եթէ ինչ յարարածոց՝ որ գեղեցիկ է՝ այն իբարւոյ արարչէ կարծիցի ոմանց, որպէս Յունացն հեթանոսաց և արանց մոգուց և հերձուածողաց» . էջ 9: Թուի թէ գլխագիր գրելու է Արանց, որպէս թէ Արեւոյ . «Յունացն հեթանոսք, Արանց՝ մոգք» : Արանց այս մտքով կը գտնուի և յայլ գիրս նախնեաց . «Եւ անտի սակաւիկ մի ոգի առեալ, դարձեալ ելեալք մարտնչէին, մինչև անմի զգորսն Արանց առնէին» . Փ. Բիւզանդացի, Ե. Ե. էջ 202. – «Ապա յառաջ կայր և խնդրէր պարգեւս Ուռնայր ի Շապհոյ արքայէն Պարսից և ասէր, թէ կամ լիցի քեզ, Արանց քաջ*, զի և ինձ պարգեւ հրաման տացես, զի Հայոց գնդին Պապայ արքային ես ինձէն ելից իմով գնդովս նահատակ» . անդ . Ե. դ. էջ 192. – «Եւ Միհրանայ պատասխանի տուեալ ասաց, թէ Արանց քաջ, զկուին զոր Հազարաուխտ մեօք

* Հինգերորդ դարու մատենագիրք ըսած են Քալարանց նաև Հայոց մեծաց արքայից և Հռովմայեցւոց կայսերաց համար, ինչպէս Ագաթանգեղ ի յառաջաբանի Պատմութեանն, էջ 27. «Մանաւանդ վասն քո հրամանիդ, Խալարանց Տրդատ, արքայ Հայոց մեծաց». տես և ի Մ. Խորենացւոյ Պատմութեանն, Գ. իբ. և ի Գործս Առաքելոց, Գլ. իե. 24, 25: Բայց Ղ. Փարպեցւոյ իւր Պատմութեան մէջ յատկապէս Պարսից թագաւորին համար տեղ մը Արանց Խալարանց և ուրիշ տեղ Արեւոյ Խալարանց, թերեւս ներքին ըլլայ կարծելը որ Արանց թէ՛ Փ. Բիւզանդացւոյ 192 երեսը և թէ՛ նորին ինքեան Փարպեցւոյ 485 երեսը դրուած է փոխանակ Արեւոյ. այս կարծիքս ե՛ւս առաւել կը հաստատուի Փ. Բիւզանդացւոյ 202 երեսին մէջ ըստովը «Մինչև անմի զգորսն Արանց առնէին», ուր խօսքը Պարսից վրայ է:

հանդերձ ընդ վահանայ արար, և թէ վահանայ իւր զօրքն
անդ եղեալ էին, թուի թէ տանէր զյաղթութիւնն»։ Ղ. Փարս-
պեցի, Պատմութիւն, էջ 483. իսկ յէջ 259 կ'ըսէ. « Արեւի-
քաջ, մի յածեսցին միաք. քո յայլ խորհուրդ » :

2. « Զորոց զբարւոյն կողմն յորմզդէ դնեն, զարջառաց
և աշխարհ և զայլոց պիտանացուաց, և զչարին կողմն յՍրհ-
մնայն, զգայլոց և զգազանաց և զճճեաց վրասակարաց » .
էջ 132: Ուղղելի աշխարհ :

3. « Եւ ոչ յորժամ զազնուականի ուրուք զորդի յա-
զակատանս հասեալ տեսանիցէ ոք, և ասիցէ՝ թէ կորու-
սանելոց է զինչսն հայրենիս, նա ինչ իցէ պատճառք վատ-
նելոյ ընչիցն » . էջ 164: Կարծեմ կարդալու է հարեալ:
Նոյնպէս կը կարծէ նաեւ Հ. Սրապիոն Էմինեան, որ իւր
Գաղ. - Հայ - Տճկ. բառագրոց մէջ se Débaucher բացին առ-
ջեւ կը դնէ. « Յանառակութիւնս, յազակատանս հարա-
նէլ » : Եզնըկայ հատուածին քով դնելու է Ռակերերանի
հետեւեալ հատուածը « ի Գանանացին և ի Փարաւոն » ճա-
ռէն, Հ. Բ. էջ 709. « Թէ կանխաւ գիտիցեմ զչարն թէ
լինելոց է չար, ոչ նախագիտութիւնն իմ արար զնա չար .
որպիսի ինչ ասեմ. եթէ տեսանիցեմ բազում անգամ զայր
ոք երիտասարդ ի հօրէ մնացեալ ժառանգաւոր յուր ըն-
չից, և տեսանիցեմ զնա ի խրատուէ ի բաց կացեալ և փախ-
կացելոցն կենակից, ի տեսարանս յորդորեալ, ի ձիա-
մարտութիւնսն պարապեալ, վաղվազակի ի տեսանելն ա-
սեմ. սա ի սուղ ժամանակի ցրուէ զինչս իւր, սա զհայրենի
ժառանգութիւնն կորուսանէ. ոչ վասն զի յառաջագոյն
տեսի՝ տպաւորեցի ինչ, այլ ի բարուցն նշանակեցի » :

4. « կէսն ի փառս և կէսն յանարգանս, և մի Խերն յա-
նոյչս և միւս Խերն ի դժոխս » . էջ 210: Թուի թէ կարդա-
լու է Խերն, այսինքն Կոչն: Թեր բառը ուրիշ երկու տեղ

կը գործածէ Եղնիկ. « Աստուած ընտրեաց զբարին ի մի Բեր, և զչարն մորախառն ի միւս կողմն ». էջ 27. — « Յորմէ կուսէ արեգակն իցէ, յայնմ Բերէ սկսանի ի նմա լոյս ծնանել ». էջ 200 : Սրբոցն Կիւրղի Ալեքսանդրացւոյ թուոց մեկնութեան մէջ, որ կը կարծուի թարգմանեալ յեղնըկայ, գրուած է. « Տայ նմա խօսել զինչ ինքն կամեսցի, և լինել ի Բերէ իսրայելի » :

5. « Ձի յորժամ զնորա Տեճարոյ Կարին գծծեսցուք, և հանցուք զնա յաչաց իւրոցն խաբեցելոց, ապա ցուցցուք թէ ո՞վ Աստուած է, և զի՛նչ նորա արնարածք ». էջ 241 : Թուի ուղղելի Տեճարոյ Կարձի. իմաստն է՝ « երբ անոր պատիւը կամ համբաւը (իբր գղ. Autorité, Crédit) կտարենք, և իրմէ խաբուածներուն աչքէն հանենք զինքը և այլն » : Նախնեաց ուրիշ մատենագրութեան մը մէջ կը գտնենք « ի Կարձի Տեճարանոց ուրուք քնասակար լինել » ոճը, որ կը նշանակէ՝ մէկուն պատիւը կամ աղէկ անունը կտարել :

Տես ուրիշ ուղղութիւնները էջ 16, 27, 28 : Տես և 41 երրորդ ուղղութիւնը :

Բ. ՅՈՂԱՆ ՈՍԿԵՐԵՐԱՆ

ՄԵԿԿՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

Մատթէի մեկնութեան Բ գրոց ժԲ երորդ ճառին կատարածն եւ յորդորակին ակիզքն թերի է յօրինակին Ս. Ղազարու : Հ. Արսէն Բագրատունի թարգմանած է այդ թերի մասը, զոր կը ծանուցանէ թէ ի յառաջաբանին եւ թէ ի կարգին մասնաւոր ծանօթութեամբ. տես էջ 565 : Նոր Հայկազեան եւ Առձեռն Բառարանաց մէջ յիշատակեալ Հեղինակիր անուկանն, ինչպէս և Քաղաքովին մակբայն, զոր կը յիշէ Առձեռն Բառարանի երկրորդ տպագրութիւնն, գիւտք են Հ. Արսէնի գտնէ ևս ցարգ նախնեաց մէջ չեմ գտած այս երկու բառերը :

6. (1) « Խուժդուժքն մինչչեւ տեսեալ էր զնա, այնչափ ճանապարհս հատին վասն նորա. դու և ոչ յետ տեսանելոյ՝ նախանձաւոր լինիցիս նոցա, այլ թողեալ զնա յետ տեսանելոյն՝ ընթանաս զի շէն հոպիտոս տեսանիցես » . Ա. է. Յորդ. էջ 107: Կարելի՞ է կարդալ շէն, այսինքն շէնասն. նախնեաց Գերթողական բառերու կարգին մէջ կը յիշուի . « Մէ՛ս . կատակք » :

7. (2) « Զի ի ճգունսն բազում ինչ է որ քոքիէ զցաւսն . բազմացն խրախոյսք, մօտակացացն յարգանք » . Ա. Ժե. էջ 220. Ի ծանօթութեան կ'ըսուի . « յոյնն « քոքի » : Ուղղելի է քոքիէ : Փոքիէ, որ կը նշանակէ մխիթարել, դիւրել, և քոքիէ, որ ըսել է մխիթարութիւն, կը գտնուին նաեւ Ոսկերքերանի Եսայեայ մեկնութեան մէջ . « Կամի Տէր ի ձեռն նորա քոքիէ ի ցաւոց անձինն նորա . . . քոքիէ ի ցաւոց անձինն իւրոյ, զի բազմացն հաւատք՝ քոքիէ լինիցին ցաւոց նորա . . . զցաւսն քոքիէ՝ զյարութիւնն յայտ առնէ » :

8. (3) « Զոր օրինակ վրէժ խնդրել՝ զամենայն ինչ հաւկառակ երկոցունց դործէ . . . և ղյատման բոցն եւս բորբոքէ, և բազում անգամ ի մահ եւս տայ մտաբերել, յորժամ եւս յառաջ մթերիցին « շէն » » . Ա. Ժը. էջ 286: Ուղղելի է « շէն » : Դ ճառին յորդորակին մէջ կ'ըսէ, էջ 57. « Պարարիցես զմարմինսդ իբրեւ զՆորի, և « շէն » մթերեալ պահիցես իբրեւ զուղտ » : Ուրիշ տեղ կ'ըսուի . « Ոչ մթերել « շէն » », « Ո՞ր մթերեալս ունէին » . տես նաեւ Գ. Փարպեցւոց Պատմութեան մէջ, երես 173. « Վասն մթերից առաջին « շէն » զոր ունէին առ միմեանս իշխանն Սիւնեաց Վասակ և տէրն Ամատունեաց Վահան » :

9. (4) « Զի թէ դու Հրեայ անուանեալ ես, ասէ, և արհամարհուեալ ես յորէսն » . Ա. իդ. էջ 379. Ի ծանօթու-

Թեան կ'ըսուի, «ի լուս, հրահանգուցեալ» : Թուի ուղղելի յան-
 Էօցեալ կամ յանկուցեալ, ինչպէս կ'ըսուի Ոսկերբերանի Յոհան-
 նու մեկնութեան մէջ, Բ. զ. «Հրէայ անուանեալ ես, և
 յանկուցեալ ես յորէնան» : Իսկ ի մեկնութեան Հռովմայեցւոց
 նոյն սուրբ վարդապետին, Զ. էջ 8, կ'ըսուի. «Յեցեալ ես յօ-
 բէնան», համեմատ բնագրին. տես Հռ. Բ. 17 :

10. (5) «Ոչ եթէ բնութեանդ ինչ մեղադրութիւն է, և
 ոչ իրացն կարգի, այլ մեզ որ զամենայն վերոյ է վերոյ հարեալ
 քիչիւն, որ մեղկիմք» . Բ. զ. Յորդ. էջ 478. յէջ 417 կ'ըսէ.
 «Չամենայն վեր է վերոյ հարեալ եղծանն» : Թողլով վերոյ է վերոյ
 ընթերցուածը որ խանդարեալ կ'երեւի, քիչիւն ուղղելի է
 քիչիւն, այսինքն եղծանն : Նոյնպէս յաջորդ վկայութեան
 մէջ. «Եթէ զայս կորուսանիցեմք, զամենայն ինչ զմեր
 քիչիւն եղծանեմք» . Ոսկեր. Հռ. Ժ. Գ. էջ 182, ուղղելի է քիչեւ
 ինչպէս կը գրուի ուրիշ տեղ. «Վասն այնորիկ ամենայն
 ինչ եղծաւ, ամենայն կարգք քիչեցան» . Ոսկեր. Ա. Տիմ. Թ.
 էջ 72. - «Վասն այնորիկ ամենայն ինչ մեր ի վայր կործա-
 նեցաւ, և ամենայն ինչ եղծաւ քիչեցաւ» . անդ. Ժ. Զ. Յորդ.
 էջ 150. - «Յորժամ սա զամենայն կազմիցէ և նա զբնաւ
 քիչիցէ, նորա է յոռութիւն և ոչ սորա» . Ոսկեր. Եփես. Ի. Բ.
 Յորդ. էջ 922 :

11. (6) «Զի մի և մեզ Սողոմայ իրքն պահեցին, և Գոմո-
 ռայ անցք անցանիցեն» . Բ. Ժա. Յորդ. էջ 555 : Թերեւս
 ուղղագոյն, ընթերցուածն ըլլայ պապահեցին : Իսկ պապահել
 գրուած փոխանակ պահելայ տես 89 երրորդ ուղղութիւնը :

Տես ուրիշ ուղղութիւնները էջ 6, 17, 21, 24, 29 :

ՆՈՐԻՆ ՄԵԿՆՈՒԹԻԻՆՔ ԹՂԹՈՅՆ ՊՕՂՈՍԻ

ՄԵԿՆՈՒԹԻԻՆ ԱՌ ՏԻՄՈԹԵՆՍ Ա. ԹՂԹՈՅՆ

12. (1) «Քանզի շատախօս դրշուս է ազդն (կանանց),

վասն այնորիկ ամենայն իւրիք ցածուցանէ» : Թ. էջ 72 : ի ծանօթութեան կ'ըսուի . « զանորոշ գրութիւն յօրինակին մարթ էր ընթեռնուլ և շարշար » : կարելի՞ է արդեօք շարշարն ալ կարդալ շարշար » :

13. (2) « Եւ այն զի՞նչ իցէ առ այժմու կանոնով » : Թ. էջ 72 : ի ծանօթութեան կ'ըսուի . « յոյնն կանոնքս » : Ուղղելի է կանոնով, գործիական հոլով կանանի բառին :

14. (3) « Եթէ որ ուսուցանել պարտ իցէ՝ հրաման տայցես, ծաղր կայցես, նոյնպէս եթէ ուր հրաման պարտ իցէ տալ՝ ուսուցանիցես, զնոյն ամօթ կրես » : ԺԳ. էջ 105 : Ուղղելի «-ր, ինչպէս քիչ մը ետքը կ'ըսէ : Ձեռագրաց մէջ շատ անգամ «-ր և «-ր, «-ր և «-ր այլ ընդ այլոյ կը դրուին . ահաւա սիկ քանի մի օրինակք . « Բաժակն «-ր է, առեն . բաժակն մնաց, զբաժակն չմեկնեաց » . Սեբեր . Թ. էջ 164 . ուղղելի «-ր . - « Արարեալ ի պէտս ողջակիզացն հինգ գուբս ջրոց, որ զփորոտին լուանային և զճարսն սրէին » . Ոսկեր . յԱնգամալոյժն, Հ. Բ. էջ 849 . ուղղելի «-ր . - « Որ գեանն Երասխ հատեալ զքարանձաւս լերանց անցանէ ընդ խոխումն ձիգս (կարդա ընդ խոխումն ձիգս) և նեղս » . Մ. Խորեն . Ա. Ժբ . ուղղելի «-ր . - « Գնացեալ ի գաւառն Մոկաց, . . . որ և մեծ սքանչելիս կատարեաց Աստուած ի ձեռնն նոցա պատուական սուրբ խաչիւն » . Մ. Խորեն . Պատմ. Հռիփս . էջ 300 . ուղղելի «-ր . - « Առ եզերքն շնեկովք գետոյ արարեալ զիւր զօրու բանակատեղս, որ և աստուածային տեսչութեան լինէր արժանի » . Ղ. Փարպեցի, Պատմութիւն, էջ 11 . ուղղելի «-ր . - « Եւ դարձեալ եթէ այլուր եւս դիպեցի ժամանալսն և ըսպէս համար՝ արտաքոյ տանն որ ծնաւ մանուկն » . Բրս . վեց . Զ. էջ 118 . ուղղելի «-ր . - « Մեկնեցան խաղացին գնացին միանգամայն երթեալ ի տեղին «-ր նկատեցաւ նոցա ի բնակութիւն հրամանաւ Աստուծոյ » . անդ . Գ. էջ 73 . ուղղելի «-ր . - « Եւ պարգեւ ընդ պարգեւի շնորհէր նմա Սո-

ղումն հանդերձ բազում իրօք, և վայրս ինչ ի Գալիլեացոց աշխարհին «-ր Բաբուղայն կոչի» • Եւս • Քր • Հ • Ա • Էջ 174 • ուղղելի «ր, ինչպէս կ'ակնարկէ արդէն տպագիրն • - «Գաւառս պարդեւելով զՂրճն, որ շուրջ զնովաւ, և զլեառն Տաւրոս, «-ր և Սիմ, և զկղեսուրն ամենայն» • Մ • Խորեն • Բ • Ը • Թուի «ր = վ • Լանկուա կը թարգմանէ • «Le mont Taurus, avec le Sim» • Իսկ Լըվայլեան տը Ֆլուովալ՝ «Le mont Taurus, y compris le Sim» = Թերեւս ուղղագոյն թարգմանութիւնն ըլլայ • «Le mont Taurus, qui s'appelle aussi Sim» :

15. (4) «Տեսցուք զինչ իցէ մարդ : Արտաքինքն ասեն • երբ է խօսուն, մահկանացու, մտաց և հանճարոյ ընդունիչ» • ԺԳ • Յորդ • Էջ 112 : Ուղղելի է երէ, գ-ղ • Animal : «Չայր և զկին մի ինչ երէ գիտէ կոչել, և ոչ ուրեք որոչէ ազգս յազգաց՝ յորէնսդրութեանն» • Ոսկեր • Մտթ • Ա • ԺԵ • Էջ 270 • - «Մարդ է կերպարն մեծ և հրաշալի, քան զամենայն ստացուածս Աստուծոյ պատուականագոյն» • Ոսկեր • Ճառք • Էջ 66 :

16. (5) «Բարևոք է մարգարիտ, այլ ի միտ առ շնորհայն, և ի խոր ծովու ընկեցեալ կայր վայրապար • բարևոք է ոսկի, բարևոք է արծաթ, այլ ի միտ առ զի հող և մոխիր էին և են» • ԺԷ • Յորդ • Էջ 159 : Ուղղելի թուի «շնորհայն շնորհայն է», ինչպէս քիչ մը ետքը կ'ըսէ «զի հող և մոխիր էին և են» :

17. (6) «Լիրբ լեր, ասէ, և անամթ և ձիւ և յանդուդն» • ԺԸ • Յորդ • Էջ 167 : Ուղղելի է ձիւ, ինչպէս կ'ըսուի Ոսկերեբրանի Բ • Կորնթացոց մեկնութեան մէջ • «Յորժամ լիրբ և ձիւ իցես իբրև զշուն» • և յԵւսեբեայ Բրոնիկոնին, Հ • Ա • Էջ 4 • «Զի զորս լրբել ձիւլ յայնպիսի դատարկ քրննութիւն յօժարեն՝ արդելուցու» : Լիրբ և ձիւ, արեւել ձիւլ ի միասին դորժածուած են :

Տես ուրիշ ուղղութիւններ և էջ 4, 17, 30 :

ՄԵԿԵՆՈՒԹԻՒՆ ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ Բ ԹՂԹՈՅՆ

18. (1) « Մի տաղնապիցիս , ասէ , ի ժամանակի է վերայ Վշրայ եկեւց » . Ա . Յորդ . էջ 173 : Թուի ուղղելի Վշրայ է վերայ եկեւց , ինչպէս կ'ըսուի ի մեկնութեանն Մատթէի . « Մի տաղնապետացուք ի ժամանակի Վշրայ է վերայ հասանելոյ » . Ա . Ժ . էջ 152 :

19. (2) « Զամենայն Աստուած դարմանէ , և բնաւն ի նոյն է խնամակալ » . Ը . Յորդ . էջ 252 : Ուղղելի է « բնաւն նոյն է խնամակալ » :

Տես ուրիշ ուղղութիւններ և էջ 7, 30, 33 :

ՄԵԿԵՆՈՒԹԻՒՆ ԱՌ ՏԻՏՈՍ ԹՂԹՈՅՆ

20. (1) « Եւ եթէ զտունն առնում յարայոց արկանեմ , այլ (այն ?) ի վեր է քան զամենայն լլկանս » . Զ . Յորդ . էջ 338 : Թուի ուղղելի յարարոց , բացառական հոլով Արարք բառի : Եփեսացոց թղթոյն մեկնութեան մէջ կ'ըսէ . « Եթէ մշակ ոք էր և չապականէր ինչ և չհատանէր յարարոցն , ոչ նենգէր և ոչ գողանայր և այլում տայր » . ԺԶ . էջ 839 : Տես և ի Մատթէի մեկնութեանն « բնաւն յընչեց ոճը . « Եթէ յընչեց կամիցի բնաւն , նախ քան զնորա սպառնալիսն առեր հրաման արհամարհել զինչսն » . Ա . իդ . էջ 384 :

ՄԵԿԵՆՈՒԹԻՒՆ ԱՌ ՓԻԼԻՊՅՅԻՍ ԹՂԹՈՅՆ

21. (1) « Գողանայիր զաղքատաց , և զի մի յեւս չարիս մտաբերիցես՝ և այն ֆես համբերէր , և սակայն զքեզ ոչ հաւանեցոյց » . Զ . Յորդ . էջ 413 : Ուղղելի է՝ այն էս : Ասոր հակառակ Զենոբայ Ասորոց Պատմութեան մէջ (Ս . Ղազար , 1832) կը գրուի ֆես փոխանակ գրելու ֆես . « Այլ ըստ սիրոյ մտերմութեանդ քո զոր ունիս սու մեզ , աղա-

չեմ զի Դ Է— ընձայս այլ մատուցանես ինձ » . էջ 9 . կրնայ ըսուիլ Դ Է—, բայց ընտրելագոյն կը համարիմ Դ— ընթերցուածը . քննելի ի ձեռագիրս :

22. (2) «Միտ գիք որպիսի ինչ ճշգիւ և գտահաւ վարս ունէին, և իբրեւ շնորհակարէլ Դ Է— և օրինակս և օրէնս շընչաւորս » . ԺԲ. Յորդ . էջ 485 . կարծեմ ասկէ առած կը գրէ Առձեռն Բառարանի երկրորդ տպագրութիւնն . «Նախանկարէլ առաջուց օրինակ եղող» : Ըստ իս ուղղելի է «Նախանկար Էնչ Դ Է—», ինչպէս քիչ մը վերը կ'ըսէ . «Նախանկար Էնչ Դ Է— և զպատկերն ողջոյն նկարէին» : Տես դարձեալ Նախանկար Դ Է—, մեկն . Բ Տիմ . Ը . էջ 245 . Տիտ . Գ . էջ 313 . Եփես . ԺԵ . էջ 836 :

Տես ուրիշ ուղղութիւնները էջ 30, 33 :

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿՈՂՈՍԱՅԻՈՅ ԹՂԹՈՅՆ

Այս թղթոյս մեկնութեան մէջ երկու բառեր պատուաւ առած են, զորս օտար կը համարիմ եզնրկեան հայկաբանութենէն որով գրեալ են Ոսկերեանի Պօղոսի թղթոց մեծագոյն մասին մեկնութիւնքն . այս բառերս են Գերազանցեմ եւ Աստուծոյ Ե ճառին յորդորակին մէջ, երես 582, կը կարդանք . «Տես զհակառակ միմեանց սքանչելիսն որ զմիմեանս Գերազանցեն» . ի ծանօթութեան կ'ըսուի . «խանգարեալ էր բառը յօրինակին . եղաւ ըստ յունին» . Ձեմ կարծեր որ հոս թարգմանիչն Գերազանցեմ բայ գործածած ըլլայ, որ ուրիշ ամէն տեղ կ'ըսէ անցանել, անցանել զանցանել, Գլէլ . տես օրինակի համար Փիլիպ . Է . Յորդ . էջ 450 . «Այլ թերեւս պէտքէս արուեստիք (հարատանայցես) . եւ մզ ոք յայնմ զմեղուօք զճարտարիօք անցանցե . . . այլ թերեւս բարանկ ինչ հանդերձիք . այնու սարդք իսկ անցանեն զանցանեն գրեւ . այլ թերեւս ոտի՞ց արագութեամբ . եւ այնու եւս անասունք Գլէն» : Ոսկերեանի Յոհաննու մեկնութեան մէջ կը գտնուին Գերազանցիկ եւ Գերազանցութիւն, բայց չեմ կրնար ըսել թէ ոսկերէն գարու թարգմանու-

Թեան բառեր են ասոնք թէ Գրիգոր Վկայասիրի աշակերտին՝ Կիրակոս վարդապետին՝ Թարգմանութեանը: Իսկ է ճառին մէջ, երես 594, կը կարգանք. «Քանզի ոմանք ասորանօր դնեն զստիւքան» . ի ծանօթութեան կ'ըսուի . «յօրինակին գըրեալ է ասորանայ» . իսանգարեալ բառ կ'երեւի ասորանայ, ըսցցես չեմ կրնար ընդունիլ որ ուղիղ ընթերցուածն ըլլայ ասորանօր, բառ՝ եթէ չեմ սխալիր՝ բոլորովին անծանօթ եղբրկեան հայկաբանից:

Տես եւ Բարսղի Վեցօրէին քննութեան մէջ Ներքործեմ, Ճարտասանութեան, Նօսրաբոյս, Նկատարեակ եւ Արհմարանի բառերուն համար ըրած դիտողութիւնս:

23. (1) «Քանզի չէ ընդործեմ է համար, զնոսա որ զակամայ չարչարանան կրիցեն, և որ զկամաւ, զերծուցանել ի վշտաց. զի նա ողորմելոյ արժանի է, և սա ստեղծութեան» . Դ. էջ 563: Ուղղելի ընդ օր համար, ինչպէս կ'ըսէ ստեղծութիւն տեղ, զոր օրինակ ի մեկնութեան Ա. Տիմ. Ժ. Դ. էջ 118. «Քանզի չէ ընդ օր համար զիւրն անտես առնել և զօտարն»:

24. (2) «Այլ յորժամ ի վշտի իցեմք և գոհանայցեմք, այն է զարմանալի: Յայնժամ ի նմին վիշտան այլք հայհոյիցեն և բամբասիցեն և մեք գոհանայցեմք, տես որչափ առաքինութիւն է» . Ը. Յորդ. էջ 616: Ուղղելի թուի յորժամ, ինչպէս ըսաւ քիչ մ'առաջ:

25. (3) «Ազար յամենայն հոգոց, բերկրեալ և ընդ երկինս եւեթ հայի, անդր Երեւոս արձակեալ թուչել» . Ժ. Յորդ. էջ 640: Ազար բառի համար կ'ըսուի ի ծանօթութեան. «յօրինակին գըրեալ էր յապա. եղաւ ըստ յունին» : Թուի թէ յապա կրճատեալ մնացած է փոխանակ գըրելու յապահով. տես ի Մատթէի մեկնութեան Ոսկերեբանի . «Որ ի հոգոց յապահով իցէ» . «յապահով ի մըրկէ» . իսկ Երեւոս թուի ուղղելի Երեւոս — Ահաւասիկ քանի մ'ուրիշ օրինակներ կրճատեալ բառերու . «Եւ զարթուցեալք դարձ ի քուն կամին մտանել»:

Ոսկեր. ի Զարէոս, Հ. Բ. էջ 735: Կարդա դարձեալ. — «Վասն զի ոչխար անդրոշմ է երախայն, և ամենատուն ամայի և ազրաց օթեւան ամենեցուն» . Ոսկեր. ճառք. էջ 153: Կարդա առանց, ինչպէս կ'ըսէ քիչ մը ետքը. «Ղամէնտունն զայն զամայի, զառանց դրաց» . — «Եւ ոչ Քարտաքին դիւթիւքն վարին, այլ և անձանց եւս ուռութս ուսանին» . Յ. Մանդ. ճառք, ԻԶ. էջ 193: Կարդա Քայն:

Տես ուրիշ ուղղութիւնները էջ 30, 33, 34. տես և 41 երորդ ուղղութիւնը:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՓԵՍՍՑԻՈՅ ԹՂԹՈՅՆ

Ներսէս Լամբրոնացի իւր Պատարագի մեկնութեան մէջ (Ս. Ղազար, 1847) երես 487, ամբողջապէս կը դնէ Գ ճառին յորդորակը, զոր և կը մեկնէ հատուած հատուած: Կան քանի մի ընթերցուածք որ ընտրելագոյն կը թուին յօրինակին Լամբրոնացուոյ . յիշեմ միայն երկուքը:

Ա. «Ձեռք նորա ի բարերարութիւնս համարչակեալ, օգուտս եւեթ դործէին» . էջ 699. Լամբրոնացի՝ համակ յճեալ. էջ 488: Բ. «Մի ինչ յայն ապաստան լինիցիմք եթէ միանգամ եղեաք անդա՛ք մարմնոյն . որ չիցէ պիտանացու մարմնոյն, ի բաց կտրի: Իսկ կամացն անդամ եթէ չյարիցի ի մարմնն, որպիսի ինչ չարչարանս կրիցէ» . էջ 700: Թերի է բանն, զոր Լամբրոնացու օրինակն այսպէս կը լրացնէ . «Մի ինչ յայն ապաստան լինիցիմք եթէ միանգամ եղեաք անդա՛ք մարմնոյն . եթէ քննեան անդամն որ չիցէ պիտանացու մարմնոյն՝ ի բաց կտրի, իսկ կամացն անգամ եւայլն» . էջ 489:

26. (1) «Մանաւանդ եթէ սպանութիւն գործեալ իցէ, և է վերայ գայցէ, այն իսկ միայն բաւական է զնա կորուսանել» . Դ. Յորդ. էջ 712: Ուղղելի է է վեր գայցէ, այսինքն յայտնուի, ինչպէս կ'ըսէ ի յորդորակի թ ճառին, էջ 776. «Քանզի այնու փախչի ամենայն բարեկամ եթէ խորհուրդինչ է վեր գայցէ»:

27. (2) « Եթէ ոչ հիւսանց ձեռք և կամայլոց արուեստա-
կանաց շիջուցանիցեն զՎերո-Ռիւն նորա (հրոյն), ոչ զբարե-
կամս ճանաչէ և ոչ զթշնամիս ընտրէ » . ԺԲ. էջ 802 : Թուի
ուղղելի զՎերո-Ռիւն :

28. (3) « Այլ յորժամ լիցես երկիւղ, որ ինչ աշտո և
պատշաճ իցէ՝ երկիւղ զայն պահանջես ջիր, մի՛ իբրեւ յա-
ղախնոյ, քանզի մարմին քո է » . Ի. էջ 889 : Ուղղելի յաշտոնէ :
Տես ուրիշ ուղղութիւն մը և յէջ 4 :

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՈՑ ԹՂԹՈՑՆ

29. (1) « Եւ արդ որում պատասխանատուութեան ար-
ժանի գտանիցիմք, յորժամ նորա հովանին և հանդերձքն
զմահ հալածական առնէին, մեր և ոչ աղօթք անգամ զախտս
կարեն յափրացոցանել » . Ը. Յորդ. էջ 63 : Թուի ուղղելի յա-
փոցանել, այսինքն մարել, փարատել : Նոյնպէս Բարսղի
վեցօրէին Ե ճառին մէջ, երես 89, ուր կ'ըսուի « Զի եղի-
ցին ցածուցիչք և յափրացոցելս ցաւոց մերոց », Անտոնեան
Հարց ընտիր օրինակն կը դնէ յափոցելս :

30. (2) « Զի ոչ եթէ կերակուր ընդ բերան փսխէ,
այլ բանս հայհոյութեան, թշնամանաց, պատերազմաց,
մահուան, բիւր ինչ անդուստ ի ներքուստ (կարգ՝ ի վե-
րուստ այսինքն յերկնուստ, ինչպէս կ'ըսէ յոյն) կազմեալ փայ-
լատակունս՝ գլխոյն իւր երան » . ԺԳ. Յորդ. էջ 165 : Ուղղելի
է գլխոյն եղերան : Տես և ԻԳ ճառին յորդորակին մէջ, երես
346. « Բազում ինչ գլխոյն եղերան բանս կուտէ » . նոյնպէս
ի մեկնութեան Եբրայեցւոց թղթոյն, Ե. էջ 483. « Յորժամ
աջողեսցի մեծութիւն չարին, գլխոյն եղերան է » :

31. (3) « Եւ յետ այսորիկ զամենայն փիլիսոփայական
աւանդութիւնն հանդերձ աշխարհաւս այսուիկ ծանոյց

նոցա, որպէս զսարդ-իոստայն իմն և զաղայոյ շաղփաղփոնս» .
 ԺԴ. էջ 177: Թուի ուղղելի շաղփաղփոնս : Նոյնպէս ի Մատ-
 թէի մեկնութեան, Գ. ԺԳ. էջ 55, «Քանզի զայնպիսի ինչ
 խորհել՝ կարի իսկ շաղփաղփոնսն է», կը կարդամ շաղփաղ-
 փոնսն, հանգոյն Նոր Հայկազեանին : Առձեռն Բառարանին
 երկրորդ տպագրութեան մէջ եթէ այս երկու վկայութիւն-
 ներէն առած կը գրուին Չաղփաղփոնս և Չաղփաղփոնս՝ բա-
 ռերն, ջնջելի կը համարիմ :

32. (4) « Զքառասուն մանկունսն զայնոսիկ որք դազա-
 նակուրք եղեն և ոչ ի տղերձ հասակէ անտի գտին ներել
 Ռոջան » . ԻԵ. Յորդ. էջ 360 : Ուղղելի ներել Ռոջան . Ոսկերե-
 ղանի թարգմանիչն ուրիշ տեղ ստէպ կ'ըսէ ներել Ռոյոնսն .
 « Զի՛նչ պատասխանատուութիւն ունիցիմք , աղէ ասա . զո՞ր
 ներել Ռոյոնսն » . Ոսկեր. Մտթ. Ա. ը. էջ 122. - « Որո՞ւմ ներելայ
 Ռոյոնսն լինիցիմք արժանի » . անգ. Թ. Յորդ. էջ 136 . -
 « Մեզ որպիսի՞ ինչ ներել Ռոյոնսն կայցէ » . անգ. ԺԷ. էջ 283 :

33. (5) « ԶՊօղոս յանկարծակի ի դրանէ իւրմէ հանդերձ
 Պետրոսիւ յափշտակեալ ընդ առաջ Տեառն » . ԼԲ. էջ 419 .
 ի ծանօթութեան կ'ըսուի . « յոյնն ի դադանէ » : Թերեւս ի դրա-
 նէ սխալմամբ գրուած ըլլայ փոխանակ ի դրէ . դէր գերեզ-
 մանի մտքով շատ տեղ ըսուած է ի նախնեաց :
 Տես ուրիշ ուղղութիւն մը յէջ 42 :

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՈՀԱՆՆՈՒ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

Ոսկերերանի քանի մի գրուածոց կրկին թարգմանութիւն
 ունինք ի նախնեաց, մին ոսկեղինիկ գրչաւ Նզնրկայ դասուն,
 միւսն՝ յետին դարերու գործ : Այսպէս է Ա. Յոհաննու Աւետա-
 րանին մեկնութիւնն, յորմէ միայն հատակոտորք կը յիշուին Բ
 հատորոյն 579 - 609 երեսներուն մէջ, եւ Բ. ճառն ի Յովնան,
 հատոր Գ, երես 26 - 45 . փոխանակ ոսկեղինիկ թարգմանու-
 թեան պատուաւոր տեղ շնորհելու եւ յետին դարուց թարգ-

մանութիւնը մանր գրով ամփոփելու ի ստորեւ իջիցն, երկու-
անգամ ալ հակառակն եղած է: Կան ուրիշ երեք ճառք Ոսկե-
բերանի, Ա. ի սուրբ Խաչն Քրիստոսի, Հ. Բ. էջ 762. Բ. յղ. Սպաշխարութեան, Հ. Բ. էջ 861. Գ. միւս եւս ճառ յղ. Սպաշխարութեան, ճառք, էջ 46, որք յայտնապէս կը կրեն ընտիր հայկաբանութեան կնիքը, թէպէտ բաւականապէս խանդարեալ յայլ եւ այլ ճառքներու: Փափազելի էր որ այս երեք ճառերուն հնագոյն օրինակներն փնտռուէին եւ բոլորովին զատելով միւս ճառերէն՝ առանձին փունջ մը կաղմուէր:

Խօսքիս կարգն կը բերէ որ այսպիսի դիտողութիւն մ'ընեմ նաեւ Որոմպիանու Առակաց թարգմանութեան վրայ, որ հրատարակեալ են Միխիթար Գոշի Առակաց հետ: Այս թարգմանութեան ժամանակն յայտնի չէ, բայց կրնանք կարծել որ Թգարէն առաջ է, վասն զի Թովմա Արծրունի իւր Պատմութեան մէջ, Գ. ա. էջ 157, կը յիշէ ԺԳ առակը. վայելչութիւն դարձուածոց, ընտրութիւն բառից, համառօտ եւ կորովի ոճ մը, մասնաւոր համեղութիւն մը կ'ընծայեն այս հնգետասան առակաց. հնգետասան կ'ըսեմ, վասն զի սկսեալ վեչտասաներորդէն հայերէն լեզուն բոլորովին կը փոխուի, կ'անդարդանայ, կ'անշքի, պարզ ըսեմ՝ կը ռամկանայ: Այդ ԺԶ - ԻԳ առակք մասն են Աղուեսագրոց կամ Վարդանայ առակաց:

34. (1) « Զի այս զուր տարապարտուց և խառն առատանէր մտացն առատութիւն » . Բ. էջ 592: Ուղղելի խօսք ինչպէս կ'ըսուի դարձեալ սոյն գրոց մէջ. « Զուր տարապարտուց և խօս առատութեամբ զինչսն կորուսանեն . . . զինչ կամիցիս առնել նոցա այնչափ ծախ խօս առատութեանն » . տես խօս ի նոր Հայկազեանն: Ըստ այսմ փ. Բիւզանդացւոյ Գ. գրոց Բ. գլխուն մէջ, երես 66, ուր կ'ըսէ « Զի պառակտեալք և քակտեալք էին յընդանութեանէն և յամենայն գործոց Հայոց ի ժամանակս խառնութեան Տիրանայ », թուի թէ կարգալու է խօսութեանն:

Գ. ՍԵՔՆԵՐԻԱՆՈՍ ԵՄԵՍԱՅԻ

ՃԱՌՔ

Զ ճառին մէջ, երես 114, չորս անգամ դրուած է *դեպոսիտ* վտխանակ *դեպոսիտ* . յառաջ քան զիս նշանակած է զայս Հ. Թադէոս Թոռնեան իւր Հատընտիր Ընթերցողածոց մէջ, երես 361: — Է ճառին մէջ, երես 126, ձեռագրին Եօֆնեան գրածն ուղղեալ է Եօֆնեան . կարծեմ պահելի է Եօֆնեան, որ կայ նաև Փիլոնի Լինկուլթեան գրոց մեկնութեան մէջ: — Ը ճառին մէջ, երես 154, ձեռագրին *Կասոս* գրածն ուղղեալ է *Կիւրոս*, ոչ ի դէպ . *Կասոս* է արեւելեան անուն Կիւրոսի, օրինակ իմն պարսկերէն լեզուի մէջ, յորում կ'ըսուի *Գեամէս* . Ալեքսանդրի Պատմութեան մէջ ամենուրեք *Կասոս* կը գրուի, եւ Փ. Բիւզանդացւոյ Պատմութեան մէջ եւս կը յիշուի «*Կասոսական տոհմ*», այսինքն «*Կիւրոսական տոհմ*» . Գ. իթ. էջ 147: — Ժ ճառին թուի թէ երկու թարգմանութիւնք կան նախնեաց, մին յանուն Սեբերիանոսի, միւսն յանուն սրբոյն Բարսղի Կեսարացւոյ . առաջինն ընտիր հայկաբանութիւնն Ե դարու, երկրորդն խառն հելլենաբանութեամբ, Պիտոյից գրոց եւ Փիլոնի ոճով . արդէն Ժ ճառին սկիզբը դրուած ծանօթութիւն մը կը վկայէ թէ «*այս ճառ կայ եւ ի կարգս մասենիցն սրբոյն Բարսղի, հա. Բ. երես 115*» : Ահաւասիկ պատառիկ մի սոյն ճառիս՝ ըստ երկուց թարգմանութեանց . Սեբերիանոսինն է ձախ կողմինը, տպագրին 194 էջը . իսկ աջկողմեանն է սրբոյն Բարսղի, զոր ես գտած եմ Նոր Հայկազեանին մէջ ի բառն Անդրանամ :

Գիշերք առանց քնոց են այնոցիկ՝ որ հսկեն յաղօթս . այլ դժուարագոյն եւս է այնոցիկ՝ որ հսկեն ի մեղս :

Գիշերք անքունք որք կանխենն յաղօթս ի գիշերին . այլ յոյժ դժնդակագոյնք եւ տընեցելոցն յանդրանամն :

Իցիւ թէ սոյն երկու թարգմանութիւնք դէմ առ՝դէմ հրատարակուէին :

35. (1) «Բոյժ» գտանէ հերձուածողն . տեսաննն, ասէ , զի նովաւն՝ սպասաւորութեան գուշակ է » . Ե. էջ 96 : Բոյժ կը դնէ նաեւ Նոր Հայկազեանն , որ և կը մեկնէ . « արմատ Բուծանելոյ . բուծումն . դարման . սնունդ . ճարակ » : Թուի թէ ուղղագոյն ընթերցուածն է Բոյժ կամ Բոյժ , ինչպէս կը գրուի ուրիշ երկու տեղ ինոյն գիրս : « Բոյժ իմն ի բանիս գտանեն հերձուածողացն աշակերտք » . Բ. էջ 16 . - « Եւ այնու Բոյժ իմն գտանեն հերձուածողքն » . Դ. էջ 68 : Բոյժ կայ նաեւ Ոսկեբերանի Եփեսացւոց մեկնութեան մէջ . « Եթէ մեք գազանիցեմք ընդ նմա , նա չիչխէ գազանել . և եթէ մեք թուլամորթք լինիցիմք , նա Բոյժ գտանէ » . ԻԲ. Յորդ . էջ 923 :

36. (2) « Եւ արդ զի՞նչ յայտ ընդդէմ հակառակութեան բանիցն կամիցի առնել , յորժամ ճշմարտութիւնն անձին միաբան գտանիցի հանապազ » . Թ. էջ 166 . ընդդէմ հակառակութեան կը գրուի նաեւ Հ. Թադէոս Թոռնեանի Հատընտիր ընթերցուածոց մէջ , երես 381 : Ուղղելի է ընդդէմ հակառակութեան . հատուածին պարզ շարքն այս է . « Եւ արդ զի՞նչ կամիցի յայտ առնել ընդդէմ հակառակութիւն բանիցն » : Ընդդէմ հակառակութեան , որ կը նշանակէ գղ . Contradiction , կը կրկնուի նոյն ճառին մէջ քիչ մը ետքը . « Դարձեալ ըստ բանիցն ընդդէմ իմն հակառակութեան թուի , զի խառնեալն և անապակ ամենեւին իսկ չեն միմեանց նման » . երես 177 : Տես նաեւ Ոսկեբերանի Ա Տիմոթեայ Ե. Բ. ճառին յորդորակին մէջ , երես 101 . « Ոչպա ուրեմն բարի է ազահն , և որչափ աճէ ազահութիւնն՝ եւս քան զեւս զազահն ի բարութիւն ածիցէ . տեսաննն զընդդէմ հակառակութեան » :

37. (3) « Առ ոտն հարկանէ և արհամարհէ և իշտի զարհաւիրս մահու » . Թ. էջ 169 : Ուղղելի է իշտի , այսինքն՝ արհամարհէ , որ կայ երեք տեղ Ոսկեբերանի թարգմանութեանց մէջ : Առձեռն Բառարանի երկրորդ տպագրութիւնն

կը նշանակէ թէ իշարեմ և թէ իշարեմ, առաջինը ջնջելի կը համարիմ:

Տես ուրիշ ուղղութիւնները էջ 30, 43, տես և 41 երորդ ուղղութիւնը:

Կ. ՄԱՐՈՒԹԱ

ՃԱՌ Ի ՎԿԱՅՍՆ ԱՐԵՒԵԼԻՑ

38. (1) « Եւ կիսոցն՝ եղէզն հերձեալ հանգոյն հասարակացն դնէին շուրջ, և պնդէին լարօք ընդ անդամնն, և մի մի ձգէին հանէին հանդերձ մորթովքն և մնօքն և ջղօք » . էջ 79: Կարծեմ կարդալու է հասակացն: Նոյնպէս ի Բարողի վեցօրէին. « Սկսանին փոքրկանալ ստուերք տարերց երկրի և կարճել շուքն (կամ շուքք) հասարակաց ի միջօրեայ ժամանակի . . . ստուերք հասարակաց մարդկանն յերկոցունց կողմանցն երեւին » . Զ. էջ 125, 126. ուղղելի է հասակաց, ինչպէս կը դնէ և Անտոնեան Հարց ընտիր օրինակն:

39. (2) « Առիւծն անագին գոչէր և ելանէր ի չարաշուք ճորենոյն, (յ) արձակել և յափշտակել և բեկանել զեզինս հարկեացն որոտայր » . էջ 90: Ուղղելի է ճորենոյն. ճորէ կը նշանակէ գազանաց որջ, և է ակնարկութիւն բանին երեմիայի. « Եւ առիւծ է ճորենոյ իւրմէ սատակել զազգս » . դ. 7. յորմէ կ'առնու և Յոհան կաթողիկոս իւր Պատմութեան մէջ, երես 110. « Ածեն առաջի իբրեւ զուլ մի յայծեաց զայն որ իբրեւ զառիւծ է ճորենոյ իւրմէ ելեալ վարանէր վատնել վարատել զազգս »:

40. (3) « Գնացին ծերք համեստութեամբ Նոյսրակեալ, և մեք խակք և տղայք մնացաք առանց հանճարոյ » . էջ 98: Կարելի է կարդալ Նոյսրակեալ, ի Նպար կամ Նպարակ բառէն, այսինքն՝ հետերնին պաշար առած: Համեստատէ Ղ. փարպեցւոյ Պատմութեան հետեւեալ վկայութեանց հետ:

« Որով նպաստեալ վառեալ զինու չողւոյն՝ յուղարկելն յաստուածատունկ վայելչութեան դրախտն » . էջ 210 . - « Նպաստեալ յուղարկեաց զնոսա իւր սայոգ և արգար ոգւոյն օրհնութեամբ ի դործ պատերազմին » . էջ 372 :

Այլ է և նպաստեալ ի նպատակ բառէն , այսինքն՝ սահմանեալ , որոշեալ . « Ի լրմանն նպաստեալ սահմանեալ պահոցն՝ դարձեալ ի փայտն մերձեցեալ » . Զաք . կթ .

41 . (4) « Ո՞վ լիցի վատահ ի քեզ , ծով , ի յուզել ալեացդ և ի ճրկեալ զբօսանացդ » . էջ 101 : Ուղղելի ճրկել : Զեռալ գրաց մէջ շատ անգամ փոխանակ անորիչ դերբայի կը դրուի անցեալ դերբայ . ըստ իս ուղղելի է ամենուրեք : Ահաւասիկ քանի մի օրինակք յընտիր մատենագրաց , յորս փոխանակ անցեալ դերբայի կարգալու է անորիչ դերբայ . « Զի թէ զնոցայն փնասակարութիւնն . . . սպասեալ պարտ իցէ , որչափ ևս առաւել զմարդկան մեղանչականութիւն » . Եղնիկ . էջ 147 . - « Եթէ ի բազմապատիկ մահս դժբախտ հասանէր հանապաղ , չէր պարտ ամենայնի համբերել » . Ոսկեր . կողոս . Բ . Յորդ . էջ 544 . - « Քանզի ոչ կարէ հայր յայն պիսի տանջանս տեսանել և շղթայեալ » . Ոսկեր . մեկն . Ես . (տես Հ . Թադէոս Թոռնեան , Հատընտիր ընթերցուածք , էջ 286) . - « Եթէ միս էր՝ եփեալ կամ խորովեալ պիտոյ էր » . Ոսկեր . ճառք , էջ 834 . - « Զոր և Տէրն իսկ ասէր՝ թէ Եկի ի կոտորեալ զօրէնսն և զմարգարէս » . Ագաթ . խգ . էջ 298 . - « Վասն փոքր կարծելոց ֆամայ զամօթ հօրն յայտեալ անկաւ ընդ անիծիւք » . Յ . Մանդ . ճառք , ԻԶ . էջ 203 . - « Եւ եկեալ տէրն Մամիկոնեանից և սպարապետն Հայոց վահան հրաժարեալ ի թագաւորէն Արեաց վաղարշու » . Դ . Փարպեցի , Պատմութիւն , էջ 536 : Երբեմն եւլ գրուած կը գտնուին նաեւ եւ վերջացած ածականներ , օրինակ իմն . « Յարուցանել զմեռեալն և ածել ի լոյս շնորհաբարեալ » . Սեբեր . Բ . էջ 15 . կարգալ խորհրդեալ . - « Եւ սուղ ինչ պղերգացեալ , եկն օտարն՝ անարգեալ ցանկութիւնն դազանայինն այն » . Ոսկեր .

ի Սաղմոսն յիսներորդ, Հ. Բ. էջ 667. կարգա անարգել ցանկութիւնն, ինչպէս կ'ըսուի ուրիշ տեղ. «Յայնմանէ անարգել ցանկութիւնն ծնանի, և ի ցանկութենէն պոռնկութիւնն». Ոսկեր. Ճառք, էջ 132:

Շատ անգամ ալ փոխանակ անցեալ դերբայի գրուած կը գտնենք անորիշ դերբայ, ինչպէս հետագայ օրինակաց մէջ. «Իսկ եթէ ոք յոչինչ զԱստուծոյ զպատուիրանսն համարիցի, յորժամ իջել ընդ բանասարկուն մարտնչիցի՝ վաղ վաղակի կործանի». Եզնիկ, էջ 58. - «Բայց էին ի նոցանէ ոմանք, որ բնաւ ամենեւին այլ ինչ կերակուր չէր հաշտել նոցա ի մանկութենէ իւրեանց, բայց լոկ բանջար և ջուր». Փ. Բիւզանդացի, Ե. իր. էջ 223. - «Փոքր համարեցաւ կայէն զանընտիրսն մատուցանել պատարագ, և խորել անարգել եւ յերեսացն Աստուծոյ». Յ. Մանդ. Ճառք, ԺԴ. էջ 115. - «Իսկ զամենայն երեսս քարին իբր գրչաւ զմոմ հարկել, բազում գիրս ի նմա գրեաց». Մ. Խորեն. Ա. ԺԳ. - «Մի անգամ կործաներ զքաղաքս քո զսեպհական դաւառ». Պատմ. Ալեքս. էջ 67:

42. (5) «Զոր ոչ գազան կարէ լիղել, . . և ոչ աշուն խաղաղել հողամաղն փոշովք, ոչ լայր անհեթեալ և ոչ ոտք մշակաց թաղուցանել». էջ 111. լայր կը գրուի նաեւ Հ. Թադէոս Թոռնեանի Հատընտիր ընթերցուածոց մէջ, երես 526: Թուի ուղղելի լայր անհեթեալ լայր, այսինքն վարուցան ընելը, երկիրը հերկելը: Նոյնպէս յէջ 124. «Ետուք զպարանոցս ձեր ի լայր ահաւոր անգւոց սպանութեան, զի մի հնազանդեացին մարմինք ձեր ի գործ երկիրն ցաւոց և մեղաց». ուղղելի է լայր, այսինքն հերկ, մշակութիւն: Տես նաեւ 76 երորդ ուղղութիւնը:

43. (6) «Սկսան անողորմ չարչարանօք ազգի ազգի մահուք տանջել զկանայսն երանելիս, . . զկիսոյն զորովայն հարկանէին, և թափ ի մանկանս հանէին զսուսերն». էջ

138: Ուղղելի կարծեմ է հանուան . այսինքն՝ ոմանց փորը կը զարնէին , և սուրը կանայէն դուրս կը հանէին :

Տես ուրիշ ուղղութիւն մը և էջ 18 :

Ն. Ա.Գ.Ա.Թ.Ա.Ն.Գ.Ե.Ղ.ՈՍ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

44. (1) «Եւ ո՞վ այն իցէ կարող որ զխորս անդնդոց ծուփուն քննել խոփեցի» . էջ 11 : Խոփել ինչպէս յայտնի է՝ կը նշանակէ անարգել , մերժել , բայց այս հատուածիս ամենեւին յարմար չգար . ես կարծեմ թէ կարգալու է խոփեցի , վասն զի ձեռագրաց մէջ շատ անգամ երկու նմանաձայն վանկերէն մէկը վրիպակաւ զանց կ'առնուի : Խոփեմ բայն , որ կը գտնուի արդէն Յոհան կաթողիկոսի Պատմութեան մէջ երեք տեղ , կը նշանակէ ըստ Նոր Հայկազեանին՝ «խորհելով յօգել . կցկցել մտօք . հնարիլ . ջանալ» . ահաւասիկ Յոհան կաթողիկոսի խօսքերը . «Զճարակ հրոյ բանս բամբասանաց զարբոյ կաթողիկոսէն խոփեալ յօգէին» . էջ 82 . - «Մի ոք զնոյն անցս չարչարանաց և զձաղանս և զձաղկանս խոփեցի կրել որպէս և նոքայն , որք ընդ Յուդայի անկեալք գնացին ի տեղիս իւրեանց» . էջ 88 . - «Կայր փոքր մի ի վերայ հատածի միջոյն և խոփեբ խօսել» . էջ 136 : Քննելի է և խոփի գրութիւնն ի մեկնութեան Մատթէի Ոսկեբերանի , Գ. ը . էջ 30 , որ ի հրատարակչէն կ'ուղղուի խոփի . «Զի այնպէս մերժեաց զառաքինութիւնն ի բաց այն չարութիւն և խոփի զմեղադրութիւնն եւս սոյն պիտի մոլեկանաց ծաղր չհամարել» : - Ստոր նման և ի Մերէսի Պատմութեանն , էջ 69 , կը գտնենք աղբեալ փոխանակ ըսելու աղխալիեալ . «Պատասխանի ես արքայն և ասէ . Զգանձս թագաւորութեան իմոց ընդ կողս դոցա այսրէն արտաքս քարչեցից հանդերձ նոցունց աղխեալ գանձիւ , քանզի իմ է այն ամենայն» . աղխեալ գանձիւ կը գրուի նաեւ Պ. Գե-

րովբէ Պատկանեանի նոր տպագրութեան մէջ, երես 40 :
Ինձի կ'երեւի թէ պիտի ըլլայ «Երկու խոսք», սյսինքն՝
կուտեալ, մթերեալ գանձերով, որու կրնայ երաշխաւորել
Ոսկերերանի փիլիպեցեաց թղթոյն մեկնութեան հետագայ
հատուածն . «Ո՛վ ոք, աղէ ասա, վաճառական՝ որոյ
լցեալ «Երկու խոսք» զնաւ բազում գանձի» . Դ. էջ 383 :

Հակառակ վրիպակն ալ, որ է բառի մը վանկը կրկին
գրել, յաճախ կը գործեն գաղափարողք . օրինակ իմն . «Ոչ
միայն՝ զի յորժամ գտանիցեն զառ ի թափ տեղիս, այլ և
իներքոյ ի վեր համբարձցին ելանել երկուսոց» . Բրս . վեց .
Դ. էջ 70 . կարգա երկուսոց, որ կը նշանակէ՝ վարէն վեր
դէպ ի երկինք բխած կամ նետուած : - «Եւ նա ասաց . Ես
գամ և մուծանեմ զքեզ ի պաշտօնսն» . վարք Հարանց,
Հ. Բ. էջ 254 . թուի ուղղելի պաշտօնն . Առձեռն Բառարանի
երկրորդ տպագրութիւնն թերեւս ասկէ առած կը գրէ
երկրայանօք Պաշտօնսն : - «Էր ոմն Կոնոն անուն ի կիլիկ
կիոյ ծնեալ, քահանայ Կոնիստիոս, սյսինքն մկրտութեան» .
վարք Հարանց, Հ. Բ. էջ 396 . թերեւս ուղղագոյն ընթեր-
ցուածն ըլլայ Կոնիստիոս . տես Catéchète ի գաղղիերէն բառա-
րանն Լիզբէի, որ կը մեկնուի՝ հրահանգիչ կամ ուսուցիչ
քրիստոնէական հաւատոց յառաջին դարս : Տես և 103
երրորդ ուղղութիւնը, յորում Արտէ Ես + կը կարծուի ըն-
թեռնի Արտէ + :

45. (2) «Եւ նոցա փախուցեալ թաքուցեալ ծառայիս տե-
րեւապատ լինէին» . իե. էջ 215 : Ուղղելի է ծառայիս, ի իը-
թիմ բայէն որ կը նշանակէ բանի մը տակ մտնել, պահուը-
տիլ . «Երթայ, ասէ, եքինոս ինի ընդ քարին, և մածնու
կայ ի նմա իբրեւ զանկիրոս» . Բրս . վեց . Է. էջ 150 : Այս
թիմ բայէն է նոյնպէս ծառայիս բառն, զոր կը գործածէ
Ագաթանգեղոս յէջ 631 . «Երթեալ լեռունակեաց, մենա-
կեաց, սորամուտ, ծառայիս եղեալ» : Ըստ սյսմ կարծեմ և
Ա Մակարայեցեաց Ա գլխոյն 56 թուահամարոյն մէջ «Կոնիստիոս

տանել ուղղելի է ամբողջին տանել. «Արարին ամբողջ» զխարայել յամենայն տեղիս ամբողթեան ազատտանայ նոցա», այսինքն՝ բերդերու մէջ պահոււրացուցին. յոյնն է՝ ըստ նոր Հայկազեանին՝ «դնել ի ծածուկ վայրս» :

46. (3) «Այլ թէպէտ իսուհապատում շարժեաց վասն հարցողացն զաւերն Երուսաղեմի և զհամաշխարհական կատարածն, ոչինչ դժուարագոյն է հասանել ի վերայ, եթէ կամեսցի ոք հաւաստեալ զիւրաքանչիւրան ընտրել» . ծղ. էջ 346: Ուղղելի է շարժեաց, ինչպէս կ'ըսէ յէջ 368. «վասն որոյ և կարճապատում շարժալ ի վերանայն (Տեառն) փութայ» : Խառնադասարո՞ւմ շարժել, կարճադասարո՞ւմ շարժել :

47. (4) «Ուսկանն որ պատեաց զնոսա, զոհեցան նուրա նմին ուսկանի, և ծիւցան ի նմին ցանցի, զի եղեն բաժին նորին : Կերաւ թրթուր զնոսա, և ծախեաց զնոսա ջորեակ» . կղ. էջ 398: Ուղղելի է ծիւցան :

Տես ուրիշ ուղղութիւն մը յէջ 3. տես և 41 երրորդ ուղղութիւնը :

Զ. ՓԱԻՍՏՈՍ ԲԻԻԶԱՆԴԱՅԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Փ. Բիւզանդացւոյ Պատմութեան հնագոյն օրինակը խնդրելի են, վասն զի մինչեւ հիմա մեզի ծանօթ եղած գրչագիրներն՝ որոց վրայէն հրատարակեալ է Ս. Ղազարու 1852 տարւոյն սուղագիրն՝ սաստիկ ազաւաղեալ են յանվարժ գաղափարողաց : Ես միայն քանի մ'ուղղութիւն կը նշանակեմ այս Պատմութեան, ի բաց թողլով զյոյժ յայտնիս կամ զի վաղուց սրբազրեալս յայլոց :

48. (1) «Փիլիսոփայական արուեստիւն ինչոյ տրիանէր հանապազ զամենայն զուր բացեալ զբերանս հերեաիկոսացն» .

Գ. Է. Էջ 94: Կարելի՞ է կարդալ ինչոք առաջներ . տես և ի ճառին փիլոսոփ Յազարգոս բան ունել և անասուն կենդանեացդ, էջ 132: «Եւ յորժամ մոմն ցօղ ընկալեալ, զի մի վաստակն անկատար իցէ, առաջնեալ իցեալ ծածկեալ պնդապէս՝ առ այնոցիկ որ ի վերայ յարձակին կենդանիքն դաւումն, որ եղբւ ի բնութենէ»:

49. (2) «Ընդ այլ կաթիլ ասպատակ յաշխարհն Հայոց առնէին» . Գ. իդ. էջ 141: Նոր Հայկազեանն կաթիլ բառը կը մեկնէ կողմ, և կը յաւելու. «ուստի կատապան, կողմնապետ» : Կարելի՞ է արդեօք կարդալ այսպէս . «Ընդ այլ կաթիլեալ ասպատակ յաշխարհն Հայոց առնէին», ինչպէս յաջորդ երեսին մէջ կ'ըսէ . «Ընդ այլ գիտեալ ասպատակս կապէին» : Կաթիլեմ կը նշանակէ՝ յանկարծ ճամբէն խոտորիլ, ուրիշ ուղղութիւն մը բռնել, ինչպէս որ դաղդիերէն լեզուի մէջ ալ faire un crochet նոյն մտքով կը դործածուի, օրինակ իմն . «Il a fait un crochet pour m'éviter», ըսել է՝ ճամբէն խոտորեցաւ որպէս զի ինձի չհանդիպի կամ զիս չտեսնէ : Սհաւասիկ Կաթիլեմ բայի այս նշանակութեանն երկու վկայութիւնք . «Եւ անտի կաթիլեցին իրբեւ քսան վտաւանաւ ի վերայ Տիմութէի, և անկանել կամեցան» . Բ Մ կը . Ժբ . 10 . - «Յայլ կողմն կաթիլեալ ըստ աներեւոյթ ձորոցն խորութեան հասեալ կայր զկնի ուխտապահ զօրացն Հայոց ի կողմանէ» . Գ . Փարպեցի , Պատմութիւն , էջ 379 :

50. (3) «Կանթեղիւք վառելովք և մեծապաշարմամբք, և բազում յիշատակօք զսուրբն յուզարկեցին» . Ե . իդ . էջ 218 : Ուղղելի մեծապաշարմամբք, ինչպէս կը գնէ ուրիշ տեղ . «Մեծապաշարմամբք . . . զսուրբն վրթանէս . . . յուզարկէին» . Գ . Ժա . էջ 28 :

51. (4) «Լուացեալ զհերս իւր, օձեալ մարչեալ» . Զ . Ը . էջ 266 : Ուղղելի է օձեալ մարչեալ . մարչեմ կամ մարչեմ կը նշա-

նակէ օծել, շիւել : Տես և ի գիրս Պիտոյից, է. զ. էջ 507.
« Չիթոյն բնութիւն օձեւ ճարչ զըմբիշան » :

Տես ուրիշ ուղղութիւնները յէջ 3, 12, 14, 29, 30, 34.
սես և 34 երորդ, 41 երորդ և 86 երորդ ուղղութիւնքը :

Է. ԲԱՐՍԵՂ, ԿԵՍԱՐԱՅԻ

ՎԵՅՕՐԵԱՅ

Տպագրութեամբ ի լոյս ընծայեալ նախնեաց մատենագրութեանց մէջ կրնամ ըսել որ չկայ աւելի ապականեալ եւ խանգարեալ քան զսրբոյն Բարսղի Վեցօրեայն . մէկ օրինակի վրայէն եղած է Ս. Ղազարու տպագրութիւնն, եւ այն օրինակն ալ լի է աղճատանօք : Հրատարակիչն կ'ըսէ ի յառաջաբանին . « Վաղու եւս ձեռնարկեալ էր մեր ի տիպ սորա, եթէ հին եւ ստոյգ օրինակի չէր կալեալ ակն . բայց արդ ի գերեւ ելեալ, լաւ համարեցաք միովս որ ի ձեռին շատանալ, թէպէտ եւ ոչ հին եւ ոչ ընտիր գրչութիւն, այլ վրիպագիր բազում ուրեք եւ յանհմտութենէ աղաւաղեալ : Զորոյ թէպէտ ըստ կարի սրբեցաք ի բաց զսխալանան զղուշութեամբ՝ ըստ յոյն բնագրին եւ մանաւանդ ըստ կարգի բանիցն պահանջելոյ, սակայն մնաց տակաւին ոչ սակաւ մթութիւն եւ երկբայութիւն առտ եւ անդ » :

Բախտ ունեցայ ես յոյժ ընտիր (թէպէտ եւ ոչ հին) օրինակի մը հանդիպելու ի մատենագարանի գրչագրաց ՅՅ. Անտոնեան Հարց որ յՕրթաքէոյ * : Այս ձեռագիրս, որոյ թուականն է Հայոց ՌՃԾ, Քրիստոսի 1701, թէ գրողին հմտութեանը եւ թէ մանաւանդ պարունակութեանը մի քան զմի պատուականութեանը պատճառաւ Անտոնեան Հարց մատենագարանին գլխաւոր զարդերէն մին կրնայ համարուիլ : Բարսղի Վեցօրեայն, Գրիգորիսի Արշարունեաց քորեպիսկոպոսի Մեկնութիւնն Ընթերցուածոց, եւ քան զամէնն աւելի՝ Գէորգեաց

* Իմ՝ երախտագիտութեան պարտքս ուրիշ տեղ հատուցի հրատարակու առ Անտոնեան Միաբանութիւնն, որ մեծաւ աղնութեամբ բացառիմ առջեւս իւր հայ գրչագրաց մատենագարանին գուները. սես Մ-ի լրագիրը, 16|28 նոյեմբեր 1879, երրորդ էջ. երրորդ սիւնակ :

Պիտիզէսի Վեցօրէին ամբողջական թարգմանութիւնն, որոյ մի պատառիկն եւեթ ծանօթ էր մեզ, հրատարակեալ ի Բազմալէպէ 1875 տարւոյն, էջ 125, ահաւասիկ ասոնք են ցանկալի տիտոյ անդին գոհարներն: Նախնեաց մատենադրութեանց սիրողք անշուշտ հաճութեամբ պիտի կարգան Ս. Ղազարու սպագրին եւ Անտոնեան Հարց ընտիր օրինակին քանի մի երեւելի տարբերութիւնները, զորս կը նշանակեմ ի ստորեւ. յետոյ առանձինն կը կարգեմ իմ ուղղութիւններս, որք յար եւ նման ելան այս ձեւագրիս ընթերցուածոց:

«Ասի դարձեալ սկիզբն եւ այնմ զոր ինչ խորհիցիւնք ներգործել» . Ա. էջ 10. Անտոնեանցն՝ «զոր ինչ խորհիւնքն գործել» : Եղնրկեան հայկաբանութեամբ գրեալ մատենագրութեանց մէջ, յորոց կարգի է եւ Բարսղի Վեցօրեայն, ցարդ գտնուած չէ ներգործել: Այսպէս եւ Ազաթանգեղի բանն որ կը յիշուի ի Նոր Հայկազեանին ի բայն Ներգործեմ, «Ձգեցեալ յանձինս իւրեանց զհաւատան եւ զսէր իբրեւ զբանս ամբութեան, յորում ոչ կարեն ներգործել նենգութեան նեւք բանսարկու թշնամոյն», ըստ ընտրելագոյն օրինակաց սպեալ է գործել, էջ 514: — «Մի՛ զի մարդն ասոցն՝ երկրի չեւ եւս էր եղեալ» . Բ. էջ 24. Անտոնեանցն՝ ասոց, համաձայն յուշին: — «Թէ զինչ էջեր * որով ծածկեալ էր զերկիր» . Բ. էջ 28. Անտոնեանցն՝ էր: Յիշեմ հոս առ ի քննութիւն եւ ուրիշ քանի մի օրինակներ ստորագասական անկատարի երրորդ դէմքին. «Ձի ինձ այսպէս թուէր՝ եթէ հուր բոց ի գնդէն ելան էջեր եւ ի նշանացն» . Փ. Բիւզանդացի, Ե. և. էջ 202. — «Սոյնպէս եւ Իսահակայ եւ Յակոբայ որդւոյ նորա ոչ ինչ պիտոյ եղեւ թէ դնէջեի օրէնքն արդարութեան» . Ձգօն, (Կ. Պօլիս, 1824) Բ. էջ 25 — «Իբրեւ եկն եհաս կատարած չորեքհարիւր ամին, առաքեցաւ

* «Միջին և ստորին դարերէն՝ քիչ անգամ կոյ գբաբար ալ ստորագասական անկատար՝ էջեր. իսկ հիներէն երեք շարս աեղ (Ձգօնի քով քիչ մ'աւելի յաճախ) գտնուածը՝ շատ ազաւաղ օրինակներէ ըլլալուն՝ մեծապէս երկբայական կը մնան. մանաւանդ որ մեկը՝ (Ելանէջեր, Փ. Բիւզանդ) նոր օրինակի մը վրայէն կ'ուղղուի՝ (Ելանէջեր) . 2. Արսէն Այաղնեան, Քնն. Քեր. արդի հա. յերէն լեզուի, էջ 100. ծան. 85:

Մովսէս զի էրէնցեր զնոսա» . անդ . էջ 50 . — «Իբրեւ նեղեաց
եւ պնդեաց զնա զի քոցեր ի դուրս զոր ինչ պարտիւր նմա» .
անդ . էջ 57 . — «Դարձեալ պահեաց Դանիէլ պահս զերիս եօթ-
ներորդս աւուրց վասն ժողովրդեան ազգին իւրոյ , զի մի
լէնէցե՛ր նոցա յաւելլուած յերկրին Բաբելոնացոց աւելի քան
զայն եօթանասուն ամն» . անդ . Գ . էջ 58 . — «Արդեօք բազում
բամբասանաց պարտաւոր էցեր՝ եւ մեզ ոչ էր յայտնի . իսկ
Աստուած զնորին ծածկեալսն մերկացոց եւ զկեղծաւորութիւնն
յանդիմանեաց» . Իսիւքրոս , մեկն . Յորայ . — «Անէցեր արդեօք
բնութիւնն ցրեզ » . Գր . Նիւսացի , յգ . բնութեան . —

«Նա եւ արիւնքն որ հեղուին

Ջերուսաղէմ շուրջ պատէին ,

Եւ դիակունքն անկեալ կային ,

Եւ ոք շէցեր որ թաղէին» . Գր . Տղայ , ողբ յառումն

Երուսաղէմի ի Սալահատարնայ : — Յայսմ բարբառոյ , թէ Խա-
ւար ունէր զերեսս անդնդոց , առին սկիզբն մոլորութեան ար-
կանել յոգիս մարդկան՝ եթէ մարկիրոնեստեայք եւ եթէ ծայ-
րանչէ՛ + , եւ եթէ պզտորեալ ուսմունք կողմանն Մանեայ» . Բ .
էջ 50 . Անտոնեանցն՝ Իածանացի + , նման ուրիշ հին օրինակի մը որ
կը գրէ Իայծանացի + , այսինքն Բարդաձան ասորի ազանդաւորին
հետեւողք , որ կ'ընդունէին Վաղէնտիանոսի մոլար վարդապե-
տութիւնքը . յոյնն Իածանացի + անուան տեղ կը դնէ Վաղէնտի-
նացի + : Սրբոյն Եփրեմի առ Կորնթացիս Գ թղթոյն մեկնութեան
մէջ ալ (Ս . Ղազար , 1856) կը կարդանք յէջ 117 . «Այլ այս ու-
սումն վարդապետաց տանն Բարդեձանու է . եւ վասն այսու-
րիկ ոչ թողին Իեծանացի + զայս թուղթ յառաքեալ իւրեանց» :
— «Եւ արար երեւելին տեսիլ ակնաչիտոյ աչաց տեսանելի» .
Բ . էջ 56 . Անտոնեանցն՝ «Եւ արար երեւելի ակնաչիտոյ աչաց
տեսանելի տեսիլ» : — «Եղեւ , ասէ , երեկոյ , եւ եղեւ քո՛ւնջեան ,
օր մի» . Բ . էջ 59 . Անտոնեանցն՝ Վաղարայն : — «Ըստ իմաստու-
թեան ճարտասանութեան լեզուի ճառեցան մեծամեծքն» . Գ . էջ 46 .
Անտոնեանցն՝ ճարտարութեան : Նոր Հայկազեանն ի բառն Համա-

* Տպագիրն կ'ուղղէ ծայրանչէն + , ծայր և անչն բառերէն ստուգաբանե-
լով : Նոյնպէս Նոր Հայկազեանն ի բառն Մայգ գրելի կը համարի ծայն անչն +
կամ ծայրանչէն + :

րազրութիւն վկայութիւն մը կը բերէ Ոսկեբերանի Եսայեայ մեկնութենէն, յորում կը կարդանք. «Սուղ ինչ թուղթ, ոչ կազմ ճարտասանութիւն բանից, եւ ոչ համարազրութիւնք ինչ» . բայց կամ սխալմամբ կը նշանակուի Ոսկեր . Ես . փոխանակ այլոյ մատենագրի եւ մատենագրութեան, կամ Վեթէ արդարեւ Ոսկեբերանի Եսայեայ մեկնութենէն է, ընթերցուածն անհարազատ է, վասն զի Ե գարու ընտիր մատենագրաց հայկարանութենէն բոլորովին օտար է բառն ճարտասանութիւնն : — «Ծնկի ծիւրի, հիւանդութեամբ ջերանի, յաղթէ» . Ե . էջ 85 . Անտոնեանցն՝ «Ծնկի ծիւրի ի հիւանդութեան, ջերանի յափփ» : — «Զի եղիցին ցածուցիչք եւ յափրացոցիչք ցաւոց մերոց» . Ե . էջ 89 . Անտոնեանցն՝ յափրացիչք : Տես եւ 29 երորդ ուղղութիւնը : — «Կէսքն սողկազնայք նորաբոյստ * են» . Ե . էջ 96 . Անտոնեանցն՝ նորաբոյստ : — «Կէսքն զկերպարանս փոսոց ունին խոփոն խոշորութեամբ» . Ե . էջ 97 . Անտոնեանցն՝ փոսոց : — «Եւ կազնեաց եւ քաղաքից պտուղ՝ ճաշակս գլտորահամ ունին» . Ե . էջ 101 . Անտոնեանցն դասարայեց, ինչպէս կը գրուի նաեւ ուրիշ հին օրինակի մէջ . (տես Բառաքնութեանս սկիզբը, յօդուած Ա . էջ 6) : — «Զարմացար ընդ անպատում պայծառաքեղաորութիւն աստեղաց որ են ի գարդ երկնից» . Զ . էջ 107 . Անտոնեանցն՝ պայծառաքեղ լուսաորութիւնն : — «Այս ամենայն փոփոխմունք ժամանակաց աստիճանացս արդարաբնայեւ լուսաորացն շրջեալ անցանեն ի վերայ մեր» . Զ . էջ 124 . Անտոնեանցն՝ աստիճանայարդար ֆնայեւ : — «Զի մեծամեծ ինչ իրք որ ի բացուստ ակամարեակ ** երեւին, մեծայաղթ տարերքն նոցա իրբու սակաւիկ ինչ երեւին տեսեան ական» . Զ . էջ 129 . Անտոնեանցն՝ ակամարեակ : — «Քանդի այլայլի տեսիլ աչացն երկնահայեաց տարածիւք, եւ վասէ զօրութիւն լուսոյն աչացն» . Զ . էջ 150 . Անտոնեանցն՝ երկայնահայեացն . . . յաչաց անտի : — «Եւ

* Տպագիրն կ'ուղղէ նորաբոյստ . բայց նօր փոխանակ ըսելու անօր մինչև հիմա գտնուած չէ Ե գարու ընտիր մատենագրաց գրուածոց մէջ .

** Տպագիրն կ'ուղղէ ակամարեակ, բայց րեակ անծանօթ բառ է Վեցօրեի թարգմանչին : Իսկ «աղիսնի րեակ աւուրք» գրուածն յՏ՝ ճառին, երես 170, Անտոնեանց օրինակին մէջ կը գրուի ակամարեակ ասորէ, ուրիշ հին օրինակի մէջ ակամարեակ ասորէ, ուրիշ օրինակի մէջ ալ ակամարեակ ասորէ :

դիտւարն միտապատ հալածական ի տիեզերաց երկրէ» . Զ. էջ 150 .
Անտոնեանցն՝ հալածական առնէ : — «Անուանեալ կոչին ողորկա-
պատեանք, այսինքն հաղտ եւ խեցդեանք» . Անտոնեանցն՝ հարբէ,
համաձայն ուրիշ հին օրինակի . հարբէ է յունականն Գառազո,
յորմէ գղ . Crabe : — «Քանզի յայնմ ծովէն զոր ոչ ոք երբեք
կոխեցին զմկանուռնս նաւք իւրեանց, ճօճին պերճն ճեմօք» .
Է. էջ 146 . Անտոնեանցն՝ «Քանզի յայն ծովու են զորոյ ոչ եր-
բեք կոխեցին զմկանուռնս նաւք՝ իւրեանց ճօճ եւ պերճն ճե-
մանօք» : — «Ո՞ր Բաբառօր պնդիցէ զնոսս յայն գործ յօժարել» .
Է. էջ 147 . ի ծանօթութեան կ'ըսուի . «յօրինակին որոյ . յոյնն
օ՞ր հրաման Բաբառօրէ» . Անտոնեանցն՝ «որո՞յ Բաբառօրէ հրաման
ճեպիցէ պնդիցէ եւ այլն» : — «Եւ նապատաակ ծովու . . ա-
ծէ վաղվաղակի սրտերաբոս * օրհաս ի վերայ մարդոյ» . Է. էջ
155 . Անտոնեանցն՝ սրտերաբոս օրհասի . յաջորդ է նախդրին
պատճառաւ օրհաս բառի ին մոռցուած է . (տես եւ Բառաքըն-
նութեանս սկիզբը , Գլ . Ա . յօդ . գ . էջ 27) : Սրտերաբոս կայ եւ ի
մեկնութեան Կննդոց Ոսկեբերանի : — «Եւ ծիծառն , վասն զի ոչ
կայ Բնակաւոր համօ՛ր որից առ երկրաւորս Բնուէլ իբրեւ ի հանգիստ» .
Ը . էջ 161 . Անտոնեանցն՝ վասն զի ոչ գոյ Բնակաւոր կայ որիցն՝
առ երկրաւորս Բնուէլ : — «Զի կէսքն ի նոցանէն (ի թուհոց)
խորամանկք են , եւ կէսքն միամիտք . կէսքն բարբառօղք , եւ
կէսքն անբարբառք . կէսքն գեղեցկաձայնք եւ քաղցրաբար-
բառք , եւ կէսքն խտտաձայնք եւ սփեղաբարբառ» . Ը . էջ 165 .
Անտոնեանցն՝ սփեղաբարբառ , ինչպէս կը պահանջէ արդէն
կարգ բանին , զի հակադրութեամբ կը խօսի սուրբն Բարսեղ .
Փեղեցկայնն եւ Խոցրաբարբառ , որոյ հակառակ կը գնէ Խոսա-
յնն եւ սփեղաբարբառ . նոյնպէս ուրիշ հին ձեռագրի մը մէջ
կը դրուի սփեղաբարբառ : Նոր Հայկազեանն Ոսկեղաբարբառ բառը
կը մեկնէ՝ «ոյր բարբառն է ոգեղ , քաջ , ուժգին , յորդաձայն-
լա . sonorus , canorus» , եւ սոյնպիսի մտքով գործածած է
սփեղաբարբառ նաեւ Հ . Արսէն Բազրասունի Գիմնասիոնի Յա-
ղազս Պսակին ճառին թարգմանութեան մէջ , երես 204 . «Յոր-
ժամ ընդդէմ սոցա ասել ինչ պիտոյ լինիցի , յայնս սփեղաբարբառ ,
քաջուշեղ , կատակ դերագոյն , ողբերգակ թէոկրինէս» : —

* Տպագիրն կ'ուզէ սրտերաբոս :

«Իբրու թէ առաւել իմն առաւելութեամբ հասեալ եփեալ գեղեցկանայ սպա յեփ այնր «մեհայնի» . Ը. էջ 165. թերի կը մնայ բանն . Անտոնեանցն այսպէս կ'ամբողջայնէ . «Լա սպա յեփ այսր «մեհայնի ի դարմանս մերոյ պիտոյից մաղակոտոր հատեալ գտանի» : — «Եւ զաւուրան զայնոսիկ . . . կոչեն՝ ազիէնի փեասի «տորտ» . Ը. էջ 170 . Անտոնեանցն՝ «կոչնի փեփաս տես քիչ մը վերը ի ծանօթութեան ահամարեասի բառին , էջ 64 : — «Բանն յայնժամ քորքոտեցաւ , եւ գործն մինչեւ ցայժմ եւս կարգի գայ» . Թ. էջ 182 . Անտոնեանցն՝ քորքոտեցաւ : — «Բայց փոփոխմունս անձանց եւ զսա կերպարանս այլանմանս ունին զսփիւրաքանչիւր ազգաց անասունքն» . Թ. էջ 184 . Անտոնեանցն՝ ըստ : — «Զիք ճարտարութիւն արմատագէտ , եւ ոչ փորձ իմաստնոց խորագին» , թէ եղեն երբեք վարդապետք անասնոց» . Թ. էջ 188 . Անտոնեանցն՝ խորան փնին , որ պիտի ըլլայ խորագին , ինչպէս ուղղած է Հ . Արսէն Բագրատունի իւր Հայերէն լեզուի զարգացելոց քերականութեան մէջ , երես 585 : — «Եւ սպա մեղմած որոճալովն մանրեցի» . Թ. էջ 192 . Նոր Հայկազեանն կ'ուզէ կարգալ մեղմած , ինչպէս կայ նաեւ անձամ . Անտոնեանցն ունի մեղմած : — «Քանզի ոչ եթէ վայրապար ինչ գտանի յաւեփեանս * կերպարանք խածուց եւ նմանութիւն երկուցն քաղբրթաց» . Թ. էջ 192 . Անտոնեանցն՝ յանասանն : — «Մինչդեռ զխոլն ժողովէր Պաւղոս՝ իժ մի քարք կախեցաւ զձեռանէ նորա» . Թ. էջ 196 . Անտոնեանցն փոխանակ խոլ դնելու , բուրովին նոր բառ մը կը գործածէ . «Մինչդեռ զձաքն ժողովէր Պաւղոս» (Հրէպակաւ էք քրէ Պետրոս) : Անշուշտ այս ձաք բառէն կը ծագի Ստեփանոս Աստղըկայ Պատմութեան ձքձան բառն . «Յօդուն եւ ձքձան պատեալ զնովաւ՝ հրով տոչորեցին» . Գ. իր :

Հիմա յիշեմ իմ ուղղութիւններս :

52. (1) «Որ յառաջ քան զառնուլն հրամանն՝ լինել իշխան որդւոց ազգին իւրոյ , յայտ յանդիման երեւէր՝ թէ զսա արեւայ եւ չարատեաց է» . Ա. էջ 2 : Ուղղելի զսասարեաց :

53. (2) «Եւ ինձ այսպէս թուի , թէ աւելորդ իմաստու .

* Տպագիրն կ'ուղղէ յախորանն :

Թիւնն նոցա զայսպիսի յաւելեաց դանձեաց նոցա» . Ա. էջ 8 :
Ուղղելի յաւելումն :

54. (3) «Ձի մի լռեսցէ և դադարեսցէ Վշտ ընկաց գնացիցն» . Ա. էջ 9 : Ուղղելի է Վշտընկաց գնացիցն» : Տես և Գ. էջ 56 . «Անդադար և Վշտընկաց վտակովք» :

55. (4) «Ասի դարձեալ սկիզբն սկսուածի իրաց ինչ որ առնուցուն սկիզբն լինել . . . : Ասի դարձեալ սկիզբն և այնմ զոր ինչ խորհիցիմք ներդործել (կարգա՝ խորհիցիմքն գործել) , կամ արկանել հիմն տան , կամ հարկանել բուռն զգործս (կարգա՝ զգործոյ) տախտակամած յատակաց նաւի , որ է «կիւղքն կարգա՞ն» կազմութեան նաւին» . Ա. էջ 10 : Ես ուղած էի ուղղել «կարգա՞ն» , ինչպէս քիչ մը վերն ըսաւ «կիւղքն կարգա՞ն» , և ինչպէս կ'ըսէ դարձեալ ուրիշ երկու տեղ . «Եւ յառաջին նուագին ի «կիւղքն կարգա՞ն» գործոյն անգայտ մաղովք անօսք գործոյն զգործած գբոյն յօրինէ» . Ը. էջ 165 . - «Այնպէս համարիմ թէ բնաւ ամենեւին և ոչ ի «կիւղքն կարգա՞ն» մերձեցայ» . անգ . էջ 177 : Բայց Անտոնեանց օրինակն կը դնէ «որ է «կիւղքն կարգա՞ն» կազմութեան նաւին» . «կարգա՞ն և կարգա՞ն երկուքն ալ կրնան յարմարիլ . քննելի է յայլ ձեռագիրս : Այնպէս «կարգա՞ն» թուի թէ է ոճ ասորի , վասն զի Եփրեմի Աւետարանի Համարարբառ մեկնութեան մէջ ալ (Ս. Ղազար , 1836) կը կարդանք , երես 255 . «Ձի դարձեալ միւս անգամ իբրեւ վարձուք մխիթարութեանդ քո տացի մեզ Տաղարք Տաղար-Նեան ի զաւակ և ի խմոր մարդկութեան» : Նոր Հայկազեան և Առձեռն բառարաններէն ջնջելի է բառն կառած , որ առաջնոյն մէջ կը մեկնուի . «սկզբնաւորութիւն կառուցանելոյ զնաւ , կամ ողնափայտ» . իսկ յերկրորդին՝ «նաւ շինելու հիմն ողնափայտ գնելը» : Հ. Արսէն Բագրատունի իւր Հայկ Գիւցազներգութեան է Դրուագին 1020 ստղոյն մէջ կը դնէ կարգա՞ն իբր հարուած , կտեմ բայէն հանելով .

«Յիջանել ահեղ սրբոյն ի տիտանեաննն սաղաւարտ՝
Ծայրն եւեթ ի Մաքմասայ դիպեալ խորան գըլխանոցին ,
ճնորեալ յուժգին հրոստոյն և բերանսեալ անկաւ յերկիր» :

56. (5) «Աղքատութիւն իւրեանց բնութեան մալորեցոյց
զմարդիկ խորհել զայսպիսի օրն խորհուրդս զԱստուծոյ» .
Բ. էջ 26 : Ուղղելի անօրն : Տես և Ղ. Փարպեցւոյ Պատմու-
թեան մէջ, երես 3 . «Ի վիճակէ բաժնոյ օրնայն արանց քա-
ջաց ի սոհմէ նախարարացն Հայոց տալ զանձինս անհամարս
ի նահատակութիւնս» , որ կ'ուզուի անօրնայն :

57. (6) «Եւ այսու բարբառովն լուծաւ եղծաւ խաւարն ,
և քահեցաւ ապականոցս աղջամուղջն , սատակեցաւ կորեաւ
տխրութիւնն» . Բ. էջ 35 : Ուղղելի ապականոցս :

58. (7) «Ըստ օրինակի այնոցիկ որ իցեն ի դարբնոցի , և
յանդադար ձայնէ կռանին և ուռանն անդ դռնչին ա-
կանջքն նոցա» . Դ. էջ 48 : Ձնջելի է անդ , որ «ուռանն» և
«դռնչին» բառերէն շփոթած է :

59. (8) «Հրաման Աստուծոյ առին ջուրքն զգնացս իւ-
րեանց» . Դ. էջ 69 : Ուղղելի հրամանս , ինչպէս կ'ըսէ յաջորդ-
էջը . «Աստուծոյ հրամանան ջուրքն առին զգնացս իւրա-
քանչիւր» :

60. (9) «Մերիեաց ընկէց ամենեւին զծանրատաղտուկ
լուծն մեղաց» . Ե. էջ 95 : Անտոնեանցն եւս ունի Տերիեաց . բայց
ես կարծեմ թէ կարդալու է Տերժեաց . նախնիք շատ տեղ կը
գործածեն Տերժեւ ընկենու , Տերժեաւ ընկենու . օրինակ իմն
Ղ. Փարպեցի իւր Պատմութեան մէջ, երես 32 . «Վազվա-
ղակի Տերժեաւ ընկենոյր զխորով յիշխանութենէ իւրոյ թագա-
ւորութեանն» :

61. (10) «Նոյնպէս և թուշունք ըստ նմին նմանութեան լալան խաղան յօդս և այսր անդր թեւեն (կարգ՝ ձեւեն) պատառեն զլոյծ և զտարած բնութիւնն» . Ը. էջ 161 . - «Ուրախ արար զձեզ և օդ իւրով պլացեալ թուշնովքն , որ հանդէպնորա և ի նմա լալան խաղան վայելչութեամբ» . անդ . էջ 179 : Ուղղելի լալան , ինչպէս կ'ըսէ յէջ 174 . «Իբրեւ միով ժամագիր ժամու շարժեալ լալան միահոյլ ի չու անկեալ» , և ինչպէս կ'ըսեն ուրիշ նախնիք . «Ինոյն օդս գիշակեր թուշունքն ընդ ազնուագոյն թուշունան լալանքն» . Եղնիկ , էջ 146 . - «Իբրեւ զարծուիս վերացեալ լալան» . Ոսկեր . Եփեսո . ԺԳ . Յորդ . էջ 816 . - «Տես որպէս դարձեալ յարուցանէ զլսողն և բարձրաթուիչ տայ լալան» . Ոսկեր . Հո . ԺԵ . էջ 205 : և և կը շփոթին երբեմն ի ձեռագիրս . այսպէս է և բառն Անչլուկ , զոր նոր Հայկազեանն կը կարգայ Անչլուկ . «Այս իսկ է եթէ ալ լալան հանգստեան ցանկացաւ» . Ոսկեր . Բ Տիմ . Ժ . էջ 266 :

62 (11) «Զկէսն «բալան» (անուանեցին) , այսինքն զմեզուս» . Ը . էջ 162 : Ուղղելի «աբալան» , ինչպէս կ'ըսեն նախնիք ուրիշ անդ մեզուի համար . «Բարևոք վարկանիմ նմանել ինձ մեզուին՝ փոքուն այն և «աբալան» թուշնոյն» . Ոսկեր . երկրորդ ներք . ի Գր . Լուս . Հ . Բ . էջ 826 . - «Զօրէն «աբալան» և իմաստուն թուշնոյ ի վերայ թուշելով մարդաց հին և նոր կտակարանաց» . Գրիգոր Սկեւոացի , ներք . ի Ն . Լամ . բրոն . Սոփերք Հայկականք , ԺԵ . էջ 19 :

Տես ուրիշ ուղղութիւնները էջ 12, 24, 31 . տես և 14 երրորդ և 38 երրորդ ուղղութիւնքը :

Ը . ՅՈՀԱՆ ՄԱՆԳԱՍՏԻՆԻ

ՃԱՌՔ

63 (1) «Այն էր «բալան» ողորմութիւն , այն էր աստուած պաշտութիւն և կատարեալ մարդասիրութիւն» Ե . էջ 50 : Թուի «երբ» :

64. (2) «Որ և քեզ պարտ է լինել նմանող քաջացն և առաքինեաց, և ոչ գայլացելոցն հովուաց՝ որք անուամբ միայն են հովիւք, և ի հասարակ գաղանաբար յարձակին և գայլաբար կտորեն և ցրուեն և կորուսանեն»։ Թ. էջ 85 : Ուղղելի ի հասարակ, այսինքն ի հոգին : Նոյնպէս ի Պատմութեանն Թ. Արժրունայ, Գ. ք. էջ 189 . «Եւ կարծէր յայն ժամ ի ձեռն խոշանդանաց դիւրաւ արկանել զնոսս ի հաղբս կորուսելոցն և մելորելոցն ի հասարակ փրիստոսի» : Կարգա ի հոգին, այսինքն ի հոգին :

65. (3) «Նստի հանապազ, և խորհի պատահարս չարեաց և դիպումն փորձութեանց նախանձորդին : Բզձանայ, շրջի մտախորհ յոմարեալ, և երկնէ իբրեւ ծննդական»։ ԺԳ. էջ 108 : Կիտադրութիւնն ուղղելի է այսպէս . «Նստի հանապազ, և խորհի պատահարս չարեաց, և դիպումն փորձութեանց նախանձորդին ըզձանայ . շրջի մտախորհ և այլն» : Գալով յոմարեալ բանին, զոր կը գործածէ նաեւ Հ. Որսէն Բագրատունի Գիմոսթենի Յաղագս Պսակին ճառին մէջ, երես 148, «Նա եւ չամաչէս եւս՝ յոմարեալ մտխամարդակածել ի մէջ գատաստան առանց իրիք մնասու լինելոյ», Ոսկերեբանի Եփեսացւոց մեկնութեան մէջ գրուած է յիմարեալ . յայտնի է թէ Մանգակունի շատ փոխառութիւններ ըրած է Ոսկերեբանի մեկնութիւններէն . ահաւասիկ Ոսկերեբանի հատուածն . «Յանկ մտախորհ յիմարեալ սրտառուչ տրտում և տխուր շրջի»։ ԺԵ. էջ 832 : Նոյնպէս և բանն Ոսկերեբանի մեկնութեան Մատթէի ըստ միոյ ճառընտրի Ս. Ղազարու, «Չնախանձ ի բաց մերժեսցուք, զտրամութիւն և զյոմարեալիւն, և զառանց բարբառոյ աղաղակն հասցուք», գրուած է յիմարեալի ի վարս Հարանց, Հ. Բ. էջ 606 . «Չնախանձ մերժեսցուք, զտրամութիւն և զյիմարեալիւն և զառանց բարբառոյ զաղաղակն ի բաց մերժեսցուք» : Ո՞ր է ուղիղն . Յոմարեալ և Յոմարեալիւն, թէ Յիմարեալ և Յիմարեալիւն : Առձեռն Բառարանի երկրորդ ար-

պաղըութեան մէջ կը գրուի . «Յորմարի՛ճ . յխակալութեամբ
մնմնալ» . «Յորմարոնի՛ն . յխակալութիւն» :

66. (4) «Որք զերկրաւորս միայն խորհին , և ոչ զվարս
առաքինութեան՝ զոր յերկինս վայելեմք . և մեծաւ շքայո-
նեամբ նմանեն անասնոց անմտից՝ յամենայն ժամ խոտաճա-
րակ» . Ժ. 2. էջ 125 : Ուղղելի անշքայոնեամբ :

67. (5) «Չարեօքն չարաչար խոցոտիմք , և անհոգ եմք
իրբեւ զառողջս . ընդ ՚իշ հիացեալ զարմանամ և սգամ հա-
նապազ» . Ի. էջ 149 : Թուի ուղղելի ընդ որ ՚իշ :

68. (6) «Որ թէպէտ և սուղ ինչ իցեն տրամութիւնքն ,
սակայն նա ի պղտորեալ միտս նորա անհնարին և անչափս
հարձեցոցանէ , որով և զսիրտն յիմարեցուցանէ» . ԻԳ. էջ 174 :
Թուի ուղղելի հարձեցոցանէ : Տես և ի ճառն ԻՍ. էջ 160 .
«Եւ սասանայ զայն փոքր հարձեցոցանէ» . և ի ճառն ԻԶ.
էջ 203 . «Յիշեա վասն զի (հարդս երես առաջ զի վասն) փոքր
հարձեցոցանելայ Ագամայ զպատուիրանն Աստուծոյ՝ եւ ի
գրախտէն» :

Տես ուրիշ ուղղութիւնները էջ 18, 31. տես և 25 երորդ
և 41 երորդ ուղղութիւնքը :

Թ. ՄՈՎԱԼԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մ. Խորենացւոյ Պատմութիւնն մեր ազգին ամենէն պանծա-
լի յիշատակարանաց ժողովարանն է . արժան էր որ ունենայինք
այս Պատմութեան նոր ևւ ընտիր տպագրութիւն մը , համեմա-
տութեամբ հնագոյն ևւ ստուգագոյն օրինակաց , ևւ հմտալից
ժանօթութեամբք ևւ լուսաբանութեամբք ճոխացեալ խոլենաց-
ւոյն ձեռագրաց բաղդատութեան ժամանակ պէտք չէ մոռնալ
նաեւ այն մատենագիրները որք իրենց գրուածոց մէջ կը պա-
տուաստեն հոյակապ պատմաբանին այլ ևւ այլ հատուածները .

տեղ տեղ ասոնց ընթերցուածքն Խորենացոյն ձեռագրաց ընթերցուածներէն լաւագոյն կ'երեւին, եւ թերեւ համարձակելի ըլլայ ասոնց վրայէն սրբագրել Խորենացոյ Պատմութեան գոնէ ամենէն յայտնի վրիպակները: Այսպէս է օրինակ իմն Ա. գրոց ժԹ գլխուն մէջ Վաստակար անունն, զոր Յոհան կաթողիկոս եւ Գր. Մագիստրոս կը գրեն իբրեւ երկու անուն, Վաստ, Կար. (տես Բառաքնութեանս սկիզբը, Գլ. Ա. յօդ. ա. էջ 11): Յիշեմ քանի մ'ուրիշ օրինակներ. «Դարձեալ չէ առաջի անհաւատից արգոյ եւ պատուական ցուցանէ Աստուած զճառայս իւր» . Գ. ծա. Խորենացի այս խօսքերս կ'ըսէ Ս. Սահակայ համար, որմէ առնով Ղազար Փարպեցի կը գրէ նոյնպէս Ս. Սահակայ համար. «Քանզի մեծարէր զնա, նախ վասն ազգականութեան առնն, և դարձեալ չէ առաջի անհաւատիցն արգոյ եւ պատուական ցուցանէր զսուրբ ճառայս իւր Աստուած» . էջ 65: — Որ (Կարդա Ուր) գեանն Երասխ հատեալ զքարանձաւս լիբանց՝ անցանէ ընդ Խոհոմայիտն եւ նեղս» . Ա. ժբ. Յոհան կաթողիկոս կը գրէ. «Գեանն Երասխ յորձանուտ խոխոջիւք վազս առեալ եւ թափ անկեալ ընդ նեղ եւ ընդ նորք Խոհոմայիտն քարանձաւի միոյ, որ այժմ ի բազմաց Քարավաղ անուանի» . էջ 12. տպ. Էմին: Գտնուեցաւ Խորենացոյ օրինակ մը յորում կը գրուի «ընդ Խոհոմայիտն եւ նեղս»: — «Վասն արայեան Սրայի, եւ թէ սորա որդի Անուշաւանն որ Սօս անուանէր . . . թողլով արու զաւակ ամենահարուստ եւ շատահանձար յիր եւ ի բան զԱնուշաւանն որ Սօս անուանէր, քանզի ձօնեալ էր ըստ պաշտամանց ի սօսիան Արամանեկայ» . Ա. ի. Յոհան կաթողիկոս կը գրէ. «Թողլով իւր որդի բազմահարուստ եւ լիահանձար յիրս եւ ի բանս զԱնուշաւանն սօսանէր» . էջ 15. նոյնպէս Գր. Մագիստրոս սօսանէր կը գրէ իւր ժԱ. թղթոյն մէջ. «Եւ ոչ սօսին յԱրմաւիր առ զբան ապարանին սրբունի, զոր Անուշաւանն պատուէր արայեանն մանուկ, վասն այսորիկ սօսանէրն կոչիւր»: Այսպիսի շփոթութիւն մը անուանել եւ նուիրել բայերու կայ նաեւ Ոսկերեբանի Մատթէի մեկնութեան մէջ, Ա. ժբ. էջ 174. «Որթ քանդակէին եւ Բելիֆիֆոզը անուանեցան» . յոյնն կ'ըսէ Բելիֆիֆոզայ նուիրեցան: — «Առ հասարակ նմա Ելլադա մատուցանէր զան» . Բ. ժգ. Յոհան կաթողիկոս կը գրէ. «Զահա ընդ գիւցաղանց մատուցանէ Ելլադա» . էջ 18:

Բ գրոց ժԸ գլխուն մէջ կը գրուի . «Զայտու ժամանակաւ թերահաւատութիւն լեալ Տիգրանայ ի պատանին Միհրդատ , չկարծելով ինքեան «Խեթրդէ» . այս վերջին բառս գեղջուկ գաղափարովի մը գիւտն կ'երեւի ինձ . ի ծանօթութեան կը նշանակուի թէ երեք օրինակք «Խեթրդէ» կը գրեն . կարծեմ Խորենացին եւս այնպէս գրած է : Ատոր նման է Ոսկերերանի Երայեցւոց թղթոյն մեկնութեան մէջ երեք* փոխանակ գրելու եք . «Մեք վասն մեր անձանց սակաւ ոսկի չարհամարհեմք , եւ նա վասն մեր զորդին իւր երեք» . ԻԳ . էջ 525 : — Սոյն գրոց ԻԶ գլխուն վերնագրին մէջ կ'ըսուի . «Թագաւորութիւն Աբգարու , եւ մտանել բոլորովմբ Հայոց ընդ հարկաւ Հոռովմայեցւոց , եւ պատերազմ ընդ զօրս Հերովդի , եւ սպանանել զեղբորորդի նորս զՅոսեփ» . իսկ ի կարգի պատմութեանն կը գրուի նոյն գլխուն վերջը . «Պէսպէս ցաւոց զնա (զՀերովդէս) ըմբռնեալ վասն որոյ ի Քրիստոս համարձակեցաւ , որպէս պատմէ Յովսեպոս . առաքէ զեղբորորդին իւր , որում տուեալ էր զգուսար իւր . . . եւ նորս առեալ զբազմութիւն զօրացն , զայ հասանէ յաշխարհն Միջագետաց , պատահէ Աբգարու . . . եւ մարտոցեալ մեռանի» . հոս Հերովդի եղբորորդին կը յիշուի , բայց առանց անուան : Յոսեփ անունն արդեօք «որպէս պատմէ Յովսեպոս» միջանկեալ խօսքէն չիոթած է . այս գիտողութիւնս ըրած է իմ ազնիւ եւ տաղանդաւոր բարեկամս , Հ . Սուքիաս Պարոնեան . իսկ Վիկտոր Լանկլուա կը թարգմանէ . «Hérode , . . comme le raconte Joseph» , envoie son neveu Joseph , à qui il avait donné sa fille» :

69. (1) «Զորոց մեզէն իսկ հիմունս այսպիսեաց բանից ընթեռնուլ արժանաւորեցաք ի չորս հագներգութիւնս , զարգասաւորին ի բանս և զիմաստնոյն իսկ և զմէջ իմաստնոյն իմաստնագունի» . Ա . իա : Ուղղելի շէ Բեջ : Նոյնպէս և Ղ . Փարպեցւոյ առ վահան Մամիկոնեան թղթոյն մէջ . «Եւ լով զպարճառս տենչից հայեցմունսն՝ ընդ կատարեալ շնու-

* «Ե գարուն սկիզբներէն ալ տեղ մը կայ գրած՝ երեք , եթէ գրչագրաց ազաւազութիւն չէ» . Հ . Արսէն Ա. յաւնեան , Քեր . արդի հայերէն լեզուի , էջ 72 :

թեանն լծեաց Փրկին» . էջ 579 . ուղղելի է զի պարճառս ,
ինչպէս քիչ մը ետքը կ'ըսէ . «Որ հայրի ի կին մարդ է պարճառս
ցանկութեան» : Նոյնպէս Արիստակէս Ղասարի վերացուց Պատ-
մութեան մէջ . «Իսկ ես ոչ թէ սպառնալեաց եմքարող , այլ
զեղեալ և գլուխ ելեալ իրս պատմեմ» . Ժ . էջ 74 . կարգա-
զէ գլուխ :

70 . (2) «Եւ իսկոյն ազգեցին վաղերիանոսի կայսեր .
բայց վասն զի Գոթացի անցեալ ընդ Գանուբ գետ՝ զբազում
գաւառս գերի վարեցին , և զկիւկղաղայ կղզիս աւար
առին , վասն որոյ ոչ ժամանէ մերոյ աշխարհիս թեւարկել
վաղերիանոս» . Բ . հղ : Ամենայն թարգմանիչք Գոթացի բառը
զօրաց գնդեր կը հասկընան և այնպէս կը թարգմանեն .
Ս . Ղազարու իտալերէն թարգմանութեան մէջ կ'ըսուի .
alcune schiere . Լըվայլեան տը Ֆլուրիվալ կը թարգմանէ .
«*Mais comme des troupes, passant le Danube, réduisirent en cap-
tivité beaucoup de cantons, pillèrent les îles Cyclades*» , և այլն :
Վ . Լանկուա կը թարգմանէ . «*Cependant, comme quelques
troupes, en franchissant le Danube, enlevèrent beaucoup de pri-
sonniers dans plusieurs cantons et saccagèrent les îles Cyclades*»
և այլն : Բայց սխալ է . Գոթացի հոս գլխադիր գրելու է , վասն
զի Գնդաց կամ Գդաց կամ Գթաց կամ Գոթացուց ազգը
կը նշանակէ , գլ . *Goths* : Տես նաեւ Գ դրոյ ի՞՞ գլուխը .
«*Յետ բարեբախտագոյն վաղեսի պատերազմաւ Գոթացի
յաղթութեամբ գարծի*» . (տպագիրն կ'ուզէ Գոթացի .) տես
յայտնագոյն եւս յԱշխարհագրութեան նորին խորենացուց ,
էջ 594 . «*Գերմանիա . . . զԳանուբ գետաւ . ունի աշխարհիս ,
յորոյ մին Գոթացի*» : Գոթացի իբրեւ Գոթացի կը յիշուի նաեւ
սրբոյն կիւրղի Երուսաղեմացուց կոչումն ընծայութեան
գրոյ մէջ (Վիեննա , 1832) Ժ , էջ 176 . «*Վկայեն Պարսիկը
և Գոթացի* և ամենայն խուժադուժ ազգք հեթանոսաց*» :

* Այսպէս կը գրէ Նոր Հայկազեանն ի բառն Գոթացի . բայց Վիեննայի
տպագիրն ունի Գոթացի :

Նոյնպէս յՍ.գաթանգեղի Պատմութեանն, ուր Ս. Ղազարու տպագիրն կը դնէ «իշխանն Գնաց, թագաւորն Գնաց», էջ 44 և 47, բարիզեան հին օրինակն ունի «իշխանն Գնորաց, թագաւորն Գնորաց»: Յետին դարուց մատենագիր մ'ալ, այն է Մատթէոս Ուռհայեցի, Գնոր+ կը գրէ իւր Պատմութեան մէջ. «Գերի առեալ զամենայն աշխարհն Գնորաց». էջ 103. «Ժողով արարեալ զամենայն աշխարհն արեւմտից և Գնորից». էջ 118. «Արար ժողով մեծ և ահագին բազմութիւն զամենայն աշխարհն Գնորաց». էջ 237: — Ըստ այսմ սոյն գրոց Հ գլխուն մէջ ուր կ'ըսուի. «Յանդի անտեղի է մեզ այժմ երկրորդել զառասպելն յաղագս երազոյն փոփոքոյ», գլխագիր գրելու է Փոփոքոյ, զի է արեւելեան անունն Պապէք, ինչպէս տեղեկացայ Վիկտոր Լանկլուայի Collection des historiens anciens et modernes de l'Arménie գործէն, Հ. Ա. էջ 110, ծանօթութիւն 3. բայց նոյն ինքն Լանկլուա զարմանալի անմտադրութեամբ խորենացոյցն վերոյիշեալ հատուածը թարգմանած է այսպէս. «Car il serait déplacé de répéter ici les contes relatifs au songe du *désir*», տես և Ղ. փարպեցւոյ Պատմութեան մէջ Փոփոք Առասպելն, էջ 211, 222: — Ասոր հակառակ Ապրասմ բառը որ յատուկ անուն կը կարծուի թէ գլխուն մէջ, գրելու է մանր գրով ապրասմ, այսինքն բալասան, ինչպէս նշանակուած է արդէն խորենացոյ Պատմութեան Ս. Ղազար տպուած իտալերէն թարգմանութեան մէջ, երես 133:

71. (3) «Զեպիսկոպոսս և զքահանայս հարկաց պարճաւաց կապեալ յերկիրն Պարսից տայր տանել». Գ. լզ. պարճաւաց կը գրուի նաեւ խորենացոյ փոքրագիր Պատմութեան մէջ (Ս. Ղազար, 1827): Ուղղելի պարճաւաց: Տես և ի թովմա Սրժբունի. «Եւ զօրաժողով եղեալ Մուսէի պարճաւաց հարկաց արքունի». Բ. զ. էջ 120:

Տես ուրիշ ուղղութիւնները էջ 11, 21, 32, 34, 35. տես և 14 երրորդ և 41 երրորդ ուղղութիւնքը:

ՆՈՐԻՆ ԳԻՐԳ ՊԻՏՈՅԻՑ

72. (1) «Եւ անդ նոյն օրինակ ի բաց զդառնաչունչն մղելով սառնամանիս, որք շխտաւոր յաւանքս բերեն ախտա ժէտութիւնս և զմազասոցն յուզմունս» . Է. Գ. Էջ 491 : Ուղղելի Խոյսաւոր յաւանք : Տես ի ճառս Ոսկերեւանի, էջ 229 . «Մի ինչ ինձ Խոյ և Կոյ յասիցես և քերտն և ալտ և զայլ ինչ զոր բամբասողքն մարմնոյ խօսին» :

Ժ. ՓԻԼՈՆ ԵՐՐԱՅԵՅԻ

ՃԱՌ ՅԱՂԱԳՍ ՅԱՌԱՋԱԽՆԱՄՈՒԹԵԱՆ

73. (1) «Վասն որոյ ամենեցուն անարժանագործացն ի բաց գնալ, մնացեալ չինի սքանչելի և յաւեր յէջէլ քերթողացն յազադս աստուածոցն շատխօսութիւնք» . Բ. էջ 74 : Թուի ուղղելի յաւեր յէջէլ : Տես ի Պատմութեանն Ալեքսանդրի, էջ 163 . «Ամենքին նմա երկիր պագանեն երկոցս յաւուր, և ազգայնոցն պսակ յարայէլէլ» :

74. (2) «Բանդի Աստուծոյ զայս ասացին կազմել, փոխանակ մեղաւորաց տանջանս, որպէս զօրագլխաց և իշխանաց շարէս և երկաթս» . Բ. էջ 115 . Ի լուսանցի ձեռագրին գրուած է շարէս : Ըստ իս ոչ շարէս կարգալու է և ոչ շարէս, այլ «արէս», այսինքն կապանս : «Չաւետարանն սուրբ՝ յոր երգուաւ թագաւորն Արշակ՝ կապէր պատեր երկաթի արէս, և իւրով մատանեաւ կնքեալ՝ ի գտնձ տան հրամայէր և տայր հրաման պահել զգուշութեամբ» . Փ. Բիւզանդացի, Գ. Ժգ. էջ 126 :

Տես ուրիշ ուղղութիւն մը էջ 24 :

ՆՈՐԻՆ ՅԱՂԱԳՍ ԲԱՆ ՈՒՆԵԼ ԵՒ ԱՆԱՍՈՒՆ ԿԵՆԴԱՆԵԱՑԻ

75. (1) «Իսկ նա ի վեր համբարձեալ կարի յոյժ զագին վիշապակն՝ ի վերայ շարժէ զայն, պատրելով, զի իբր առհակառակակայ կենդանի պատրեալ ձգեսցի, և յերեսն ի գուճ իջեալ յարձակի ի վերայ» . էջ 151 : Հ. Մկրտիչ Ա. գերեան կը թարգմանէ լատիներէն . «Ipse dein super faciem pronus serpebat totus humiliatus» : Ուղղելի է յերեսն . երէ՛ կ'ըսուին անասնոց առաջին ոտքերն կամ սրունքն : Յէջ 135 կ'ըսուի . «Երեսն գնդի խաղայր» . նոյնպէս յէջ 137 . «Զառաջ ինն ամենեքին միանգամայն փեղքն յերեսն անդր ի գուճ իջեալ՝ նահատակագորին երկիր պագին» . լատիներէն կը թարգմանուի . «Primum omnes simul elephantes facie tenus genuflectentes adorarunt agonothetam» . կ'երեւի թէ հոս ալ երեսն հասկըցուած է երէ՛ բառն :

ԺԱ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱԼԵՅԱՆԴՐԻ

Յէջ 162 ուր կ'ըսուի, «Եւ մեք տարւոյ տարւոյ առնելք կացուրդս, տծնս ամենաժողովս, ձիասպանութիւնս զենլով Արամազդայ եւ Պոսեդոնի եւ Հեփեստեայ», ի ծանօթութեան դրուած է . «ամենայն օրինակք Պոսեդոնի . եղաւ ըստ յունին» : Թուի թէ Պոսեդոն՝ յունարէն Պոսեդոն անուան հայեցի ձեւն է, եւ ըստ այնմ կրնայ ուղիղ համարուիլ . նախնիք ուրիշ տեղեր ալ Պոսեդոն կ'ըսեն, ահաասիկ քանի մի վկայութիւնք . «ԶՀեփեստեայ կազութիւնն ի հուր եւ զՅերեայն յօդս եւ զԱպողոնեայն յարեգակն եւ զԱրտեմեայն ի լուսին եւ զՊոսեդոնեայն ի ծով» . Վարք Հարանց, Հ. Ա. էջ 68 . — «Ապողոն, Պոսեդոն եւ Արտեմիս եւ Ափրոզիտէս» . Վկայարանութիւնք Սրբոց, (Ս. Ղազար, 1874) Հ. Ա. էջ 567 . — «Երկիր ի մեծէն Ապողոնէ եւ ի գիցն Հերակէ . . . եւ ի ծովապետէն Պոսեդոնէ» . անդ . էջ 712 . — «Նա եւ ահազնութիւնք աշխարհապարունակ երկրապարփակ տիեզերաստատ պտուտկացն Պոսեդոնի» . Գր . Նարեկացի, Պատ-

խաչին Ապարանից, էջ 575. — «Յորժամ ջուր պիտի րոնացեալ սանձս ընդունէր» . Վկայաբանութիւնք սրբոց, Հ. Ա. էջ 124 :

76. (1) «Եւ զձեզ պախարակեմ որ դիւրաւ զլսելիսդ է լայր րոյտ այլոց երբեմն վատաբարոյից և շողմոգաց» . էջ 22 : Ուղղելի է լայր րոյտ, այսինքն գործածութեան տալ, փոխ տալ, գլ. Préter l'oreille : - Նոյնպէս ի Վարս Հարանց, Հ. Ա. էջ 19 . «Այնուհետեւ ընդ կարգօք կրօնիւք զանձն է լայր արիաներ և ժուժկալութեամբ զինքն կրթէր» . կարդա ի լայր արիաներ, այսինքն կը գործածէր . քիչ մը ետքը յէջ 50 կ'ըսէ . «Բանդի բազում կրօնիւքն և փոյթ վարուքն զանձն է էիբ արիաներ» : Տես և 42 երորդ ուղղութիւնը :

77. (2) «Եւ անդուստ զօր ժողովեալ (Ալեքսանդրոս) բազմութիւն իբր բիւրս եօթն և տասն, և որ հոս էր կերպոսն որ կոչի Տաւրոս, հարեալ զնիզակն մեծապէս յերկիր ասաց . Եթէ ոք հզօրագոյն ի Հելլենացւոց կամ ի խուժադուժ աղգաց կամ յայլոց թագաւորաց բարձցէ զնիզակս զայս, անձին չար նշանակէ . քանզի քաղաքն նորա ի հիմանց բարձեալ լիցի» . էջ 59 . ի ծանօթութեան կ'ըսուի թէ ուրիշ օրինակի մէջ գրուած է «որ հոս էր կերպոսն կոչի», և թէ այս հատուածս յոյն և լատին օրինակաց մէջ չի գրու նուիր : Ներելի՞ է կարծել որ հեղինակը Գալոս լեռին (որ հայերէն անուամբ կ'ըսուի նաեւ Յուլ) ածականն ըլլայ, իբր յունարէն էբեւեւաբօն, այսինքն անդր-եղջերային, գերեղջերային, (էբեւ-անդր, գեր, ի վեր քան, +եւաս-եղջիւր) :

78. (3) «Եւ սոցա բազմութեամբ և արիութեամբ և կամօք յապահովս յոսցեալ դադարեցուցի զԵւրոպայ իրան» . էջ 75 : Ուղղելի յապահովացեալ : Տես և ի ճառին փիլոնի յղ. Յառաջախնամութեան, Բ. էջ 71 . «Որպէս զի արդ ահա րադարեալ յապահովացի» :

79. (4) «Վանդի մայրն նորա Ոլումպիադա բազում անդամ գրեաց առ նա վասն Մնտիպատրեայ, և դժուարեալ յոյժ խորեալ անարգէր, զի մայր էր Սլեքսանդրի» . էջ 172 : Ուղղելի խորեալ անարգէր : «Վասն մարդկան որ խորեն անարգեն զամուսնութիւն» . Եւս . Եկեղ . Պամ . Գ . Լ . էջ 208 . - «Կամ թէ գուցէ և զՍաքեալսն եւս խորեմ և անարգեմ դուք» . անդ . - «Բայց դու որ զբժիշկս խորեալ անարգեցեր, թէ չիք իմ ի նոցանէ գտեալ զառողջութիւն» . Եղջ . Ը . էջ 304 : Տես ուրիշ ուղղութիւնները էջ 13, 32 :

ԺԲ. ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ

ՃԱՌ Ի ԽԱՅԵԼՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

80. (1) «Որպէս իգական ցանկութիւն հեղու և տապալի ի տենչանս կերակրոց» . էջ 280 : Ուղղելի յեղու, ինչպէս կ'ըսէ յաջորդ էջը . «Սմենայն մասամբք զգայութեանցն յեղուէն էին ի ցանկութիւն» : Տես և ի Պատմութեանն վարդանայ պատերազմին . «Ի ձեռն նորա առաւել եւս ի նոյն յեղու տապալեցան» . Գ . էջ 72 . տես և ի Բարսղի վեցօրեայն , Բ . էջ 25 . «Խոտորնակ խորհրդովք յեղու տապալել կամին զբանս աստուածեղէն դրոց» :

ԺԳ. ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՅԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Այս գրոց առաջին տպագրութեան 122 երեսը դրուած կապիշ բառն զանիչ ուղղեալ է յերկրորդ տպագրին, էջ 211 . «Վանդի յայն կողմանէ առաւելապէս երեւէր կապիշ (կ'ուղղուի զանիչ) գնդին, Սիւնի զօրուն, և այլ զօրաւոր արանց նշանք դրօշիցն» . ինձի կ'երեւի թէ հոս խօսքը կատշայ զօրաց վրայ է, անոր համար չեմ կարծեր որ արդարանայ զանիչ ուղղութիւնն : Տես և յէջ 569 . «Զգուսնէն կապշաց որ զայն տեղօքն էին» . և յէջ 591 . «Զնշանս հզորագոյն արանց, զոր յառաջագոյն տեղեակ

եմք, զարանց պարսկաց եւ զկարշապ եւ զգեոյն Սիւնեաց» : — Յէջ 375 կը կարդանք . «Եւ եկեալ քաջն ի գունդն Հայոց պատմեաց նոցա թէ Գունդ բազում է, բայց յոլովք ի նոսա անպիտանք են եւ +երբնա+աղ իշաժարեան» . այս վերջին երկու բառերը, որ գրեալ են ի գրչագիրս Փարպեցւոյն Պատմութեան +երբնա+աղն շաւրեան կամ +երբնա+աղ իշաժարեան, ուղղեալ են յերկրորդ տպագրին +երբնա+աղ իշաժարեան բառ իմ առաջարկութեանս : Նոր Հայկազեանն կը գրէ . «Բերբնա+աղ իշաժարեան, կամ Բերբնա+աղն շաւրեան . բառ անյայտ . գուցէ որպէս ի պրս . +եաբնէն, որ է Սարգ . ծագեալ ի +երբնէնէ, սարգիոստայն, եււայն» . ես առաջարկած էի ուղղել Բերբնա+աղ իշաժարեան, վասն զի +երբնա+աղ կամ որ նոյն է անշուշտ +բնա+աղ, կը գրտնուի եւ ի Պատմութեան Սիւնեաց Ստեփանոսի Ուռպելեան, (տպ. Էմին, Մոսկուա, 1864) Գլ. 45 . էջ 522 . «Յորում եւ գրեալ էին զպատճառ աքսորման կաթողիկոսին ումպէս բանիւք բաղբաղեալ հայթայթանս վաստաբանութեանց իբր զբնա+աղս յազբիւսաց» . իսկ իշաժարեան է յոգնակի իշաժար բառին, որ կը գտնուի եւ յայլ գիրս նախնեաց . Եան՝ Փարպեցւոյն սիրական յոգնականակիրտ վերջաւորութիւնն է . տես ի Պատմութեանն Թղթեան, Մոգեան, Հայկաթակեան, Գործեան բառերը, եւ ի թղթին առ վահանն Մամիկոնեան՝ Աբեղեան :

82. (1) Սկսեալ 7 երեսէն մինչեւ 14 երեսը խառնակ է կարգ բանիցն, ինչպէս նաեւ կ'ակնարկուի ի ծանօթութեան, էջ 7 . «Գ. և Գ. հատուածք անյարիրք թուին ի կարգիդ, յորում կան պակաս կամ աւելի բանք, կամ անզավոխելիք» . նոյնպէս յայլում ծանօթութեան, էջ 14 . «Եւ այս բան անյարիր կայ առաջնոցն» : Ես առ այժմ սյուշավ կրնամ ուղղել . յետ բանին, էջ 14, «քանզի են տմանք ի Յոյնս, այլ մանաւանդ առաւել յԱսորիս», դարձիր յէջ 7 և կցէ «բազումք սարգեցին դալ յայսպիսի յայրատութիւնս . . . գիտնոցն բանք, և անմտացն շարվաղվութիւնք» . իսկ յետ բանին, էջ 8, «որպէս զի զհոգեւորացն զբարի վարմն լուեալ բազմութեան ժողովրդոցն, նմանօք լինել ցան .

կասցին մարդիկ ճգնութեանց նոցա», անցիր յէջ 14 և կցէ «և քաջքն լսելով զայլոցն զգործան . . . ի բարի նախանձն կրթեալք՝ ջանասցին լաւանալ» :

83. (2) «Զերկնաթուիչ զճանապարհին յաւիտենից բարութեանցն ընտրեալ հեփե-ե-ր» . էջ 15 : Թուի ուղղելի զճանապարհն, ինչպէս կ'ըսէ ի թղթին առ վահան Մամիկոնեան, էջ 583 . «Որք զնոյն շա-ե-ղ առողջմտութեանն հեփե-ե-ալ վարդապետեցին» :

84. (3) «Վախճանեցաւ յանկողնի իւրում խաղաղական հանդիսի-» . էջ 49 : Թուի ուղղելի հանգստի, ինչպէս կ'ըսէ ուրիշ երկու տեղ . «Վախճանեցաւ խաղաղական հանգստի զաւառին Բագրեւանդայ» . էջ 103 . - «Վախճանի խաղաղական հանգստեամբ և ոչ սրով» . անդ . էջ 97 : Տես և ի գիրս Պիտոյից, է . ա . էջ 482 . «Սնչարչարելի և խաղաղական հանգստեամբ՝ իւրովք հարազատ ժառանգօքն ընկալեալ զղարմանալի ծածկոյթ թաղմանն» :

85. (4) «Բանզի ոչ բորբեցունց դիպի մարտիրոսութեան վիճակն, այլ ըստ ժամանակի որպէս և բաշխէ վերին տեսչութիւնն» . էջ 206 : Թուի ուղղելի մարտիրոսութեան վիճակն, ինչպէս կ'ըսէ ուրիշ երկու տեղ . «Ոչ . . շնորհիւր ի ժամուն վիճակ մարտիրոսութեան . . քաջի զօրավարին Հայոց վահանայ Մամիկոնէի» . էջ 412 . - «Մեռանել ի վերայ ուխտի սրբոյ, վիճակ է մարտիրոսութեան» . էջ 461 :

86. (5) «Զոր լուեալ արքային Յազկերտի շխարհարոմն լաւարանց ի գնդէն Պարսից» . էջ 214 - 215 : Ուղղելի շխարհարոմն : Նոյնպէս և Փ . Բիւզանդացւոյ Պատմութեան մէջ, է . լէ . էջ 239 . «Սակայն թագաւորին Պարսից բազում տրտմութիւն լինէր յաղագս իւրոյ զօրացն կարարածոյն», կարգա կորարածոյն :

87. (6) «Լեւեալք ի հարցանելոյ սուրբքն, ճանապարհին ուշադրէին» . էջ 225 . ուղղելի Լեւեալք : Նոյնպէս յէջ 339 , «Յապաղեալ կասէր , և Լեւեալ թագուցանէր զարժան սլա տիւ տալ նոցա» . ուղղելի Լեւեալք : Նոյնպէս և ի թղթին առ վահան Մամիկոնեան , էջ 601 . «Յորժամ քարոզն Լեւեալ աղաղակէ , և որ կամին ասել՝ ի կարգեալ տեղին մասչի» . ուղղելի Լեւեալք :

88. (7) «Եւ Ք' եւս մի ըստ միոջէ հարկաւորիցիմք ասել և կամ թուել զանզգայութիւնդ ձեր» . էջ 238 - 239 : Թուի ուղղելի շէ՞ , ինչպէս նմանօրինակ տեղեր կ'ըսեն ուրիշ նախ նիք . «Եւ շէ՞ եւս մի ըստ միոջէ թուեցից» . Պիտ . Ը . Ե . էջ 524 . - «Եւ շէ՞ եւս մի ըստ միոջէ . . . թուել պիտի» . Փիլ . Նախ . Բ . էջ 74 . - «Եւ շէ՞ մի մի թուիցեմ» . Եղշ . Բ . 29 . - «Եւ շէ՞ մի մի թուիցեմ յանուանէ» . Թ . Արծր . Գ . Ժ . էջ 202 :

89. (8) «Ըստ որոյ արժանի պարտաստեալ պարտին զմա չարաչար հատուցմունք և մահք» . էջ 240 : Ուղղելի պարտաստեալ պահին , ինչպէս կ'ըսէ ուրիշ տեղ . «Պարտաստեալ պահին մշտնջենաւոր և անանց գեհեհին» . էջ 255 : Տես և յեղիշէի Պատմութեանն , Ը . էջ 259 . «Չէ լուեալ քո վասն հանգերձեալ գարտեան Տեառն մերոյ և կամ վասն մերոյ հրաշակերտ շինուածոցն , որք մեզ կան պահին ի սկզբանէ պատրաստութիւնքն» : Նոյնպէս ի վկայաբանութիւնս Սրբոց , Հ . Ա . էջ 576 . «Իսկ ձեզ և աստուածոց ձերոց նիւթեալ պահի հուրն յաւիտենական , որ պարտաստեալ պահի սատանայի և զօրաց նորա» . - «Կաց և ճողպրեաց ի տանջանաց որ կան և պահին քեզ» . անդ . էջ 93 . - «Հասին երանելի յուսոյն , որ կայ պահի սիրողացն Աստուծոյ» . Յոհ . կթ . էջ 183 : Իսկ պահել զրուած փոխանակ պարտանելոյ տես 11 երորդ ուղղութիւնը :

90. (9) «Իբրեւ տեսանէին զՄամիկոնեանն վահան այնպէս երեւելի յաճմունս բարւոյ համակեալ , ներկեալ խամ

րէին և ծնկեալք թարշամէին» . էջ 353 : կարելի է կարդալ ներկեւեալ , այսինքն թօշնած , ցամքած , վատած . ներքեւիւ , իստիւ , քնիւ , Ռարշաիւ , նշանակութեամբ մերձաւոր բառեր են : Գաղղիերէն լեզուի մէջ կ'ըսուի Devenir maigre de la prospérité d'autrui, այսինքն ուրիշի յաջողութիւնը տեսնելով նախանձէ նիհարնալ , հաշիւ մաշիլ :

91. (10) «Երթեալ քնակեր ի գիւղն Շտէոյ» . էջ 460 : Ուղղելի քնակեր : - Նոյնպէս ի Սերէոսի Պատմութեանն , էջ 105 . «Եւ քնակեալ ի վերայ գետեղերն՝ ասպատակս սփռեցաւ ընդ արեւմուտս» . քնակեալ կը գրուի նաեւ Պ . Քերովբէ Պատկանեանի նոր սպագրութեան մէջ , երես 66 : կարգա քնակեալ :

92. (11) «Թէ այս երկց բանիցս պատասխանի առնէ ինձ (Արեաց տէրն) որպէս ես կամիմ և ամենքեան սուքա որ աստէն իսկ են , և կարէ զայս երկս խնդիրս տալ մեզ գրով և կնքով թագաւորին , զամենայն զոր ինչ ասէք՝ զպատեհն և զարժանն առնեմք» . էջ 491 : Ուղղելի կարէ , ինչպէս կ'ըսէ յէջ 494 . «Ապս եթէ զայս երկս խնդիրս ոչ կարէ տալ մեզ» :

93. (12) «Քանզի ցանկաւ կուուելով սակաւուք ընդ բազումս , և մեծամեծ զայդպիսի վնասանի առնելով և աշխատունելով» . էջ 506 : Ուղղելի ցանկ կա : «Դուք էք որ ցանկ կայի՛ ընդ իս ի փորձութիւնս իմ» . Ղուկ . իբ . 28 :

94. (13) «Վասն որոյ բարձեալ էր յաշխարհէն Հայոց և կորուսեալ վաստակք և միտք , քաջութիւն , տոհմականութիւն , արդարութիւն , և ի մէջ անցեալ փերեւերախն քեզնս այդր ամենայնի» . էջ 512 - 513 : Թուի ընդքեզնս :

95. (14) «Լաւացեալ և սեպուհն վանանդացի վրէն ,

գործ երեւեցուցեալ քաջանայր» • էջ 526 : Թուի ուղղելի գործ երեւելի ցոցեալ տես գործ ցոցանել ուրիշ երկու տեղ • «ի կը ուուի վաստակ և գործ ցոցանելոյ գտեալ է» • էջ 531 • «Բայց կամէի այսպէս թէ սակաւ մի գործ ցոցանելի» • էջ 535 • Իսկ երեւելի գործ տես յէջ 531 • «Ասասցեն զմիոյ ուրուք ի դոցանէ զերեւելի գործ ինչ զոր նոցա արարեալ է» :

Տես ուրիշ ուղղութիւն մը էջ 32 • տես և 14 երորդ և 41 երորդ ուղղութիւնները :

ՆՈՐԻՆ ԹՈՒՂԹ ԱՌ ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

96. (1) «Այնուհետեւ ի շալակս իւրեանց առաւել քան ի տեղիդ փութային համբերել» • էջ 594 : Ուղղելի համբարել :

97. (2) «Արդ ալէ ասասցեն, յաղագս ոյր շնորհեալ պարգեւէի վարդապետութեան բանս. — ասողին. ո՞չ ապաքէն վասն ունկնդրացն «Խորթաւ Լրոմբեան և խնդրուածոյ» • էջ 601 : Ամբողջ պարբերութիւնը կարծեմ այսպէս ուղղելու է • «Յաղագս ոյր շնորհեալ պարգեւի վարդապետութեան բան ասողին. ո՞չ ապաքէն վասն ունկնդրացն «Խորթաւ Լրոմբեան և խնդրուածոյ» : « և » կը շփոթին երբեմն ի ձեռագիրս • տես ի վեր անդր յէջ 72 Մ • Խորենացոյ Պատմութեան «Ըդդ Խորթաձիգ և նեղս» հատուածը, որ պիտի ըլլայ «Ըդդ Խորթաձիգ և նեղս» • տես և 78 երորդ ուղղութիւնը, յորում «յապահովս ցոցեալ դադարեցուցի» կը սրբագրուի «յապահովացեալ դադարեցուցի» : Ախորթաւ Լրոմբեան կ'ելնէ Ախորթաւոր բառէն, զոր գործածած է Ղ. Փարպեցի իւր Պատմութեան մէջ, երես 289 • «Եւ ընկալեալ ի յախորթաւոր ի տուչէն զգիւտ մաղթանօք խնդրոյն իւրոյ» : Այսպէս և Հեշտաւոր բառէն ունիմք Հեշտաւորման • «Ջան ունիմք աչաց գեղեցկատեոութեան, ականջաց հեշտաւորման» • Լամբր. մեկն • Առակաց, — «Պայծառագունութիւնք և ականջաց հեշտաւորման» • Յ. Երզնկացի, մեկն • տասն խորանաց :

98. (3) «Խայրացեալք ի կոր կործանեցան, և այնուհետեւ սկսան յղանալ զօրակալութիւնն և ծնանել զնախանձ» . էջ 604 : Ուղղել ի Խայրացեալք :

Ժ.Վ. ՍԵՖԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ի ՀԵՐԱԿԼՆ

99. (1) «Որք համարձակեալ պատերազմեցան իսկ, և սյրեցին զպատուական տեղիս զայս . հաճեցաւ Աստուծոյ մարդասիրութիւնն զնոսա ասարացոցանել ի քաղաքէն սրբոյ իւրմէ յերուսաղեմէ» . էջ 133 . ասարացոցանել կը գրուի նոյնպէս Պ. Քերովբէ Պատկանեանի նոր տպագրութեան մէջ, երես 84 : կարդա ասարացոցանել, այսինքն օրարացոցանել :

100. (2) «Մեք մարդիկ եմք ազէտ և տխմար, ոչ լեզու գիտեմք և ոչ գպրութիւն . բայց եթէ նախ ուսանիմք և ի վերայ հասանեմք . այլ զբարերար հրամանոք Բոթելով իշխէ» . էջ 223 . Բոթելով կը գրուի նոյնպէս Պ. Քերովբէ Պատկանեանի նոր տպագրութեանն մէջ, երես 142 : Ուղղել ի Բոթելով կամ «Բոթելով» : Տես Գր. Աստուածաբանի ի Մակաբայեցիս ճառին մէջ . «Ո՛վ դահիճք, ընդէր հեղգայք, հի՛մ յապաղէք, վասն էր զքաղցր հրամանոք սոյնի . ի՛նչ սուրքն, ո՛ւր տապակ» : Տես և յԱղօթագիրս Սարկաւազ վարդապետի, Սոփերք Հայկականք, (Ս. Ղազար, 1854) ԺԷ. էջ 6 . «Զաստուածային հրաման . քո . . . սոյնի . քամահէր» :

Տես ուրիշ ուղղութիւն մը էջ 10 . տես և 44 երորդ և 91 երորդ ուղղութիւնքը :

Ժ.Ե. ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա Գրոց է գլխուն մէջ, երես 54, կը կարդանք . «Եւ Սահակայ յղեալ առ Սեբաստ, մի՛ կալ մնալ ի լերինն, այլ փու-

Թալ ելանել դառնալ անդրէն ի հեթեմի գնդ անդ, զի ոչ ելանէ, ասէ, Երուանդ զօրու ի սահմանս Մարաց» . բոլորովին խանդարեալ է ընթերցուածն, զոր այսպէս կ'ուզդէ Հ. Սուքիաս Պարոնեան . «Ելանել դառնալ անդրէն ի Հեթեմի գնդ» :

101. (1) «Զի կարացէ խտորել ի գաղտնիս զոգի սըբբոյն, զգրահեալն Հոգոյն սրբոյ վերելիւմեամբ» . Գ. բ. էջ 144 : Ուղղելի Հոգոյն սրբոյ վերելիւմեամբ : Տես կիւրղի Ղուկասու Աւետարանին մեկնութեան մէջ . «Կուսութեամբ յղութիւն կրել՝ Հոգոյն սրբոյ վերելիւմեամբն» . տես և Նանայ ասորոյ Յոհաննու մեկնութեան մէջ . «Հոգոյն վերելիւմեամբն» : վերելիւմեան կը նշանակէ՝ ի վերայ կամ ի վերուստ եկաւորութիւն Հոգւոյն սրբոյ . իսկ Նոր Հայկազեան և Առձեռն բառգիրք Զերելիւմեան կարգալով, անստոյգ բառ կը համարին, և կը մեկնեն երկբայանօք «զրահաւորութիւն, սպառազինութիւն, զրահ հագնելը» . կամ «զառիկութիւն, իբր օծումն զառիկաւ», կը յաւելու Նոր Հայկազեանն :

102. (2) «Որպէս ասէ Պօղոս առ Տիմոթէոս . Մի ամօթ համարիցիս զվկայութիւն Տեառն մերոյ . և Դաւիթ, խօսէի զվկայութիւնս քո առաջի Թագաւորաց և ոչ ամաչէի . և Փրկիչն, Եթէ ոք ամօթ համարեսցի զբանս իմ, աստանօր շնորհակալ բանիս : Եւ մեք ի ճեպելն փութասցուք և այլն» . Գ. է. էջ 186 : Ուղղելի է թէ կիտաղրութիւնն և թէ ընթերցուածն շնորհակալ բառին . «Եւ Փրկիչն, Եթէ ոք ամօթ համարեսցի զբանս իմ : Աստանօր շնորհակալ բանիս, և մեք ի ճեպելն փութասցուք» :

Տես ուրիշ ուղղութիւնները էջ 5, 20 :

ԺԶ. ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ

103. (1) «Իսկ սուրբն Ղիգլինոս ազաչբը զնա (զանդաւ

մաղոյծն) և ասէր . Մի , տէր իմ , մի խօսիր զայդ պիսի բանս . աղէ ասա ինձ , ո՞ արամեցոյց զքեզ , և ես խնդրեցից զվրէժ : Եւ ամենեւին անդամաղոյծն ոչ կակղացաւ և ասէ . Ոչ կամիմ ամենեւին զքո զայդ ողոք բանսդ , տար ընկէ զիս ի վաճառափողոցին ուր գտերն զիս : Իսկ Ղիգինոս ասէ . Աբբա էն + , ոչ ինչ մեղայ , տէր իմ » . Հ . Ա . էջ 225 : Կարելի է արդեօք կարդալ «բէն +» : Աբբէն կը նշանակէ ըստ Նոր Հայկաղեանին՝ ի պատիւ երեսաց քոց , ի սէր քո , ի շնորհս քո , զոր օրինակ . «Աբբէն ի սէր քո արարի զՍիոն . «բէն» շինեմ զԵրուսաղէմ և զՍամարիա» : Ինձի կը թուի թէ Հարանց վարուց օրինակին մէջ (համարելով թէ «բբա էն +» վրիպակ ընթերցուած ըլլայ) «բէն +» աղաչողական նշանակութիւն մ'ունի , իբր գղ . de grâce , je vous en prie . և ասոր նման է Եփրեմայ Թագաւորութեանց մեկնութեան մէջ գրուած «էն +» մակբայն կամ ձայնարկութիւնն . «Իսկ Ախաբ , վասն զի կարծեաց եթէ զայս և եթ կալաւ յանձին (Միքիա) ասել հաւանութեամբ ներքինւոյն՝ որ չոգաւն զնմանէն , մատեաւ երդմնեցուցանել զնա բազում անգամ առ ի հաճել զմիտան Յովսափատու . Գէն + , ասէ , փարելի քո . մի զայլ ինչ ասեր , այլ զճշմարիտն՝ որ արդարն է» . էջ 445 : Տես և 45 երորդ ուղղութիւնը :

104 . (2) «Գարձեալ մինչդեռ երթայաք մեք առ ոմն ծեր , մերձ էր արեւն ի հաշիւ , և աղօթս արարեալ ծերոյն՝ ասաց . Աղաչեմ զքեզ , Տէր , կացցէ արեգակն ի անզուջն մինչեւ ժամանեցից առ ծառայն քո : Եւ եղև այնպէս» . Հ . Բ . էջ 381 : Թուի ուղղելի հաշիւ , ինչպէս կ'ըսուի ի պատմութեան Ասանեթայ երկու անգ . «Եւ մնաց Ասանեթ միայն հանգերձ եօթն կուսանօքն , և ծանրանայր և լայր մինչև ի հաշիւ արեւուն . . . և դարձեալ անկաւ ի վերայ երեսաց իւրոց մինչև ցերեկոյն մերձ ի հաշիւ արեւուն» :

Տես ուրիշ ուղղութիւնները յէջ 5 , 19 , 26 , տես և 76 երորդ ուղղութիւնը :

ԺԷ. ԱՐԻՍՏԱԿԷՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՅԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

105. (1) «Բայց յորմէհետէ մտին յեկեղեցիս մեր Սեփօրայի՛ք և Պիհռոնացիք, և արդարութեան օրէնքն յանիրաւութիւն դարձաւ, և յարգի եղեւ արծաթսիրութիւն քան զաստուածսիրութիւն, և մամոնայն քան զԲրիստոս» . Եւ. Եջ 53 : Ուղղելի է Սեփօրայի՛ք . այն է բանն Գրիգորի Աստուածաբանի ի ճառին որ ի սուրբ Աթանաս . «Իսկ պարզութիւն և ազգակցութիւն բանին՝ բարեպաշտութիւն թուէր . բայց յորմէհետէ Սեփօրայի՛ք և Պիհռոնացիք և ընդդիմադիր լեզուն՝ իբրեւ հիւանդութիւն դժնդակ և չարաբարոյ յեկեղեցիս մեր ի ներքս անկեալ ապականեցան, և շատիսութիւն՝ ուսումն կարծեցաւ, և զոր ասեն յաղագս Աթե՛նացոց գիրք Գործոց Առաքելոց՝ Յոչինչ այլ պարապէին բայց ասել և լսել նորագոյն» : Եվարիստ Բրիւատոմ հայագէտ Գաղղիացին, որ յամին 1864 գաղղիերէն թարգմանութիւն մը հրատարակած է ի Բարիզ Լաստիվերտոցոյ Պատմութեան, չի կրնար հասկնալ թէ ինչ անուն է Սեփօրայի՛ք :

Տես ուրիշ ուղղութիւն մը Եջ 19 :

ԺԸ. ՄԻԻԹԱՐ ԳՈՇ

ԱՌԱԿՔ

ՃԿԲ առակն նման է ամենեւին Պոզգաչչիոյի Տասնօրէին (Decamerone) Ա օրուան Ե վիպին : Լսենք նախ Միիթար Գոշի առակը, յետոյ Պոզգաչչիոյի վէպը :

«Որդի թագաւորին Յունաց խնդրէր կին . եւ զոր հայր իւր կամէր, եւ այնոմ ոչ հաւանէր ասելով, թէ յամենայն թագաւորութեան խնդրեացես՝ զի ընաւ չքնաղագեղ իցէ : Եւ հօրն յայսմանէ նեղեալ, կոչէ զգասս իմաստասիրաց հաւանեցուցանել զպատանին . եւ նոքա բանիւք իմաստութեամբ ոչ կա-

րացին . եւ հնարին ազնիւ կերակուր ըստ սովորութեան պատ-
րաստելոյ՝ ի զանազան արկանել անօթս , ոսկեղէնս եւ արծա-
թեղէնս , փայտեղէնս եւ քարեղէնս , եւ յայլս այսպիսիս . եւ
ի ժամ ճաշոյ մատուցանեն նմա , եւ յամենեցունց հարկեն առ-
նու ճաշակ . եւ ի ճաշակելն ասաց . Մի է ամենեցուն համ,
ընդէր ոչ զանազանս պատրաստեցիք կերակուրս : Ասեն իմաս-
տունք . Օրինակ այդ քեզ իցէ . մի է բնաւ յամենեսեան խոր-
տիկդ , նոյնպէս մի է բնաւ կազմած մարմնոյ կանանց , ճաշակ
պիտոյից : Եւ այսու հաւանի պատանին :

»Ձցանկասէրս առակս յանդիմանէ . զի պէտս կանանց
ի զանազան կազմածս մի է . եւ վասն որդեհնութեան տուեալ
է , եւ ոչ է անօթ ցանկութեան» :

Ահաւասիկ Պողգաչչիոյի վէպն :

«Մարգիզն Մոնֆէրրադոյի , այր սաստիկ քաջ եւ Եկեղեց-
ւոյ վառակիր * , անցեր էր յայնկոյս ծովու՝ զինուորեալ քրիս-
տոնէից յոլովածեւն բանակաւ : Անգամ մը խօսք բացուելով
իւր քաջութեան վրայ յարքունիս Կարճատես Փրիլպպոսի՝ Գաղ-
ղիոյ թագաւորին՝ որ եւ ինքն նոյն ուղեւորութեան կը պատ-
րաստուէր , ձիաւորին ** մէկն ըսաւ թէ աստեղաց ներքեւ
մարգիզին եւ մարգիզուհւոյն նման լծակիցք չէին գտնուեր ,
վասն զի որչափ որ մարգիզն անուանի էր ի ձիաւորս՝ իւր մե-
ծամեծ ձիրքերով , նոյնչափալ մարգիզուհին գեղեցիկ եւ ըն-
տիր էր քան զամենայն կանայս աշխարհի : Այս խօսքերս այն-
պիսի տպաւորութիւն ըրին Գաղղիոյ թագաւորին մտաց վրայ,
որ առանց երբեք մարգիզուհին տեսած ըլլալու , իսկոյն յա-
փըշտակուեցաւ անոր սիրովն , եւ որոշեց որ նաւ մտնելու
համար ձենովա ուղեւորի , որպէս զի Մոնֆէրրադոյէն անցնիլը
յարմար առիթ մ'ըլլայ մարգիզուհին երթալ տեսնելու . այն-
պէս կը կարծէր թէ մարգիզին օտար երկիր գտնուելուն պատ-

* Եկեղեցւոյ վառակիր , իտ . Gonfaloniere della Chiesa, կ'ըսուէին
Հռովմոյ պապերուն եւ Գերմանիոյ կայսերաց կռիւներուն ժամանակ՝ իտա-
լիոյ քաղաքներուն մէջ պապին կողմանէ կարգեալ պաշտպանքն կամ քաղաքա-
պահ իշխանքն :

** Ձիաւոր հոս հասարակ հեծեալ չի նշանակեր , այլ միջին դարու առ-
մամբ իտ . Cavaliere եւ գղ . Chevalier ըսուածը :

ճառաւ, կրնար իւր ցանկութիւնը յադեցնել. ինչպէս մտածեց, նոյնպէս ալ ի գործ դրաւ: Երմէ առաջ յուզարկեց իւր մարդիկը, եւ միայն քանի մը ազնուական հետն առնելով վերջապէս ինքն ալ ճամբայ ինկաւ. երբ օրուան մը միջոց մնաց մարգիզին տունը հասնելու, մարդ յոկեց տիկնոջը ըսելու որ երկրորդ օրը ճաշի իրեն սպասէ: Հանձարեղ եւ խոհեմ կինը պատասխանեց ուրախութեամբ որ իրեն համար մեծ շնորհ կը համարէր թագաւորին այցելութիւնը եւ թէ հազար բարի էր իւր դալուստը: Յետոյ սկսաւ մտածել թէ ինչ պիտի նշանակէր որ այնպիսի մեծ թագաւոր մը ուղևնայ զալ զինքը տեսնել իւր ամուսնոյն բացակայութեանը ժամանակ, եւ դտաւ որ անշուշտ իւր գեղեցկութեանն համբաւէն դրդեալ էր: Սակայն ինչպէս որ կը վայելէ ազնուական կնոջ մը, ամենայն պատրաստութիւն տեսաւ թագաւորը արժանապէս ընդունելու. կանչեց իւր մարդիկը, եւ անոնց խորհրդով ամէն պէտք եղածը պատուիրեց. միայն հայկերութիւն եւ կերակրոց հանգերձանքը ուղեց որ ինքն անձամբ կարգադրէ: Անմիջապէս ժողվել տրւաւ որչափ հաւ որ կը գտնուէր այն տեղը, եւ յանձնեց իւր խոհարարաց որ միայն հաւեղէն կերակուրներ պատրաստեն թագաւորին: Երկրորդ օրը եկաւ թագաւորը, եւ մեծ հանդիսով եւ փառաւորութեամբ ընդունուեցաւ տիկինէն: Թագաւորը շատ աւելի գեղեցիկ, ազնուաբարոյ եւ բարեկիրթ գտաւ զմարգիզուհին քան ինչ որ երեւակայեր էր ձիււորին խօսքերէն. սքանչացաւ սիրացաւ, եւ մեծապէս գովեց զինքը. իսկ իւր ցանկութիւնն հետզհետէ կը բորբոքէր, քանի որ կը տեսնէր թէ մարգիզուհին իւր կարծածէն գերազանց էր: Յետ քիչ մը հանդիստ առնելու սենեակներուն մէջ, որ այնպիսի թագաւոր մը հիւրընկալելու համար ամենայն շքեղութեամբ զարդարեալ էին, երբ որ ճաշելու ժամն եկաւ՝ թագաւորն եւ մարգիզուհին նստան ի մի սեղան, իսկ այլք յայլ եւ այլ սեղանս՝ իւրաքանչիւր ըստ իւրում աստիճանի: Կերակրոց ազնւութիւնն, զինխներու պատուականութիւնն, եւ ասոնցմէ զատ՝ չքնաղ մարգիզուհւոյն տեսութիւնն, թագաւորին մեծ հաճոյք կը պատճառէին: Բայց քանի մը խորաիկ ետեւէ ետեւ բերուելէն վերջը, թագաւորը սկսաւ զարմանքով դիտել որ այլ եւ այլ կերպերով եփուած ամէն կերակուրներն ալ հաւե-

դէն էին : Գիտէր որ տեսակ տեսակ որսեր կը գտնուէին այն երկրին մէջ, եւ ինքն ալ իւր գալուստը առաջուց իմացուցած ըլլալով, մարգիզուհին կրնար ուրիշ որսի կերակուրներ պատրաստել . թէպէտ եւ շատ զարմացաւ այս նորօրինակ ընդունելութեան վրայ, բայց ուզեց որ միայն հաւերուն վրայ խօսք բանայ մարգիզուհւոյն հետ, եւ ժպտուն երեսով մը դառնալով դէպ իրեն, « Տիկին, ըսաւ, այս երկրիս մէջ միայն հաւ կը ծնանի եւ աքաղաղ ամենեւին չի ծնանիր » : Մարգիզուհին համոզուելով թագաւորին միտքը եւ տեսնելով որ յարմար առիթ էր իւր դիտաւորութիւնն ալ թագաւորին հասկցնելու, մէկէն ի մէկ համարձակութեամբ պատասխան տուաւ իրեն . « Ոչ, տէր արքայ . բայց տեղուոյ կիները, թէպէտ եւ հագուստով կամ աստիճանաւ կրնան քիչ մը տարբերիլ ուրիշ երկիրներու կիներէն, սակայն իրենց շէնքն մի եւ նոյն է » : Աս որ լսեց թագաւորը իմացաւ հաւեղէն խորտիկներուն պատճառը եւ այս խօսքերուս ծածուկ զօրութիւնը . տեսաւ որ մնտոի էր այսպիսի կնոջ մը հետ խօսքը երկնցները, եւ թէ բռնութեամբ վարուիլը բոլորովին անտեղի բան էր . իւր պատուոյն արատ չբերելու համար ուրիշ բան չէր մնար իրեն բայց եթէ իմաստութեամբ մարել այն կրակը որ անզգուշաբար վառուած էր իւր սրտին մէջ : Առանց այլ եւս կատակաբանել ուզելու եւ վախնալով մարգիզուհւոյն տալիք պատասխաններէն, յուսահատութեամբ ճաշեց, եւ ճաշը աւարտելուն պէս՝ որպէս զի իւր անպատեհ այցելութիւնը պարտրիէ առանց յապաղանայ ճամբայ իյնալով շնորհակալ եղաւ մարգիզուհւոյն հիւրամեծարութեանը, վերջին բարեւները տուաւ իրեն եւ մեկնեցաւ ի ձենովա » :

Անշուշտ Մխիթար Գոշի առակն եւ Պողոսայչիոյի վէպն նոյն աղբիւրէն կը բղխին . այս աղբիւրս հետաքննելի է :

106. (1) « Ժողովեալ երբեմն աստեղաց՝ ասեն ի նոցանէ ծերագոյնքն . Մեք բազումք եմք, զիա՞րդ զտիւ եւ զգիշեր ոչ լուսաւորեմք նման արեգական եւ լուսնի : Ասէ ոմն . Զի ոչ միաբանութեամբ վարիմք : Եւ խո՞սքհեալ միաբանութեամբ նախ հերքել զարեգակն, եւ ի ծագել լուսնի պար-

տեցան և ասեն. Այսպէս ի սմանէ աղօտացաք, զի՞նչ և յարեգական ծագելն լիցուք». Ե. էջ 7 : Ուղղելի Խորհուրդ : Նախնեաց մէջ ուրիշ տեղ մը կ'ըսուի. «Խորհրդան միաբանութեամբ ի միասին» :

107. (2) «Եւ կարգեաց նոցա կարգս, զի արար շնորհքս ծաղկանց ի դբօսանս և ի բժշկութիւնս, և զբանջարս դալարիս ի կերակուրս և ի դարմանս, սոյնպէս և զսերմանս ամենայն». ԻԶ. էջ 31 : Ուղղելի շնորհքս : Տես և ԾԵ. էջ 54. «Ի հրապարակս ճոխաց ի միասին սոխ և խըստոր ընդ բնութանց» կամեցան գնալ ծածկել զինքեանս». նոյնպէս ԾԹ. էջ 57. «Ձի անարգք պատուին կանխաւ ժամանեալք ի բնութեան». նոյնպէս ԿԸ. էջ 65. «Հարկաւոր ցուցանէ առակս զերկրորդն լինել թագաւորի և բնութեան» : Նոր Հայկազեանն կը գրէ բնութեան, և կը մեկնէ. «բոյսք բնականք. ծաղիկք ինքնաբոյսք ունողք զբուն սեպհական, ուրոյն ի ծաղկանց ծառոց». յորմէ առնելով կը գրէ և Առձեռն. «Բնութեան ինքնաբոյս բաներ» :

Այլ է և բնութեան ածական, իբրեւ ընդաբոյս, բնածին, որ ստէպ կը պատահի ի գրուածս Ն. Լամբրոնացւոյ. «Բնութեան իմաստութիւն կամ գիտութիւն կամ ուսումն և այլն» :

108. (3) «Ի թագաւորէն Աղեքսանդրէ մեծարեալ լինէր երկրորդ քան զհիւսն, յորժամ ապարան նմա շինէին. և նախանձ ընդ նմա կալան հիւսն և հողագործ. ոմն ասէր զբնակութիւն առնել, և ոմն զկերակուր : Նորա լուեալ իմաստասէր գողով, կոչէ և այլ եւս իմաստունս՝ ի մէջ նոցա առնել ընտրութիւն պատուոյ : Եւ ասեն նոքա, եթէ առաջին ասացաւ Ադամայ գործել զերկիր, բայց դարբնութիւն կանխաւ ցուցաւ. և զի զիւր առնէ զգործի՝ և նովաւ զհիւսան և զմշակի, վասն որոյ առաջին է պատուով. իսկ հողագործն երկուցն պէտս ունի : Եւ այսպէս համոզեն զնոսա չնախանձել». ՃԿԵ. էջ 132 : Ուղղելի է երկրորդ :

երկաթագործին կը նախանձին հիւան և հողագործ . եթէ երկուքն ըլլար , հողագործն ինչո՞ւ պիտի նախանձէր . աւելի յայտնի է քիչ մը վարը ըսածներէն . «բայց դուքն ինչ կանխաւ ցուցաւ . . . և զի զիւր առնէ զգործի (երկաթագործն)՝ և նովաւ զհիւսան և զմշակի» :

Տես ուրիշ ուղղութիւն մը էջ 15 :

ԺԹ. ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՅԻ

ՋԵՐՄԱՆՑ ՄԻԻԹԱՐՈՒԹԻՒՆ

(Սորբէն հայերէն)

Ը գլխուն մէջ կը կարդանք , էջ 15 . «Եւ իւր նշանն այս է որ մարդն ինքն ընդ ինքն զրուցէ , ցնորի եւ Ռոստաբէ» . նոյնպէս ժ գլխուն մէջ , էջ 20 . «Ապա այն ջերմն որ ի ցանկութենէ եւ ի Ռոստաբանց եւ ի բազում հողոյ ընծայի» : Երկու անգամ ալ տպագիրն կ'ուղղէ Ռոստաբէ եւ Ռոստաբանց , չեմ գիտեր ինչ պատճառաւ . Կոստանդին Երզնկացւոյ Տաղերուն մէջ եւս +եով կը գրուի Ռոստաբ .

«Է՛ գերի սիրտ լի արեամբ , քանի կենաս հըրովտ ի վատ , կամ վանց այս սուտ կենցաղոյս քանի կենաս դուն Ռոստաբ» .

«Դու էր կաս յանդիշայ խիստ Ռոստաբ ողորմելի , կամ ի ծովուս միջին դու նաւ ուղես անշարժելի» : —

«Զի սաբ են եւ ի մօտ այդ ջերմերդ՝ որ ի դեկն փոխին , որ է հալեւմաշ» . Ժ . էջ 19 . կ'ուղղուի յաբ . ինձի կը թուի թէ պահելի է ձեռագրին սաբ ընթերցուածն , որ կը նշանակէ պատրաստ , կամ գղ . disposé . Հերացին ըսել կ'ուղէ թէ «այդ ջերմերդ պատրաստահանութիւն կամ տրամադրութիւն (disposition) ունին հալեւմաշի փոխուելու» : Տես նաեւ ի գլ . ԻԱ . էջ 40 . «Եւ այլ գիտացիր որ այս ցեղ հալեւմաշ ջերմանս պատճառն այնոր հանդիպի որ մարմինն սաբ լինի եւ պատճառոյց» . նոյնպէս ի գլուխ ԻԲ . էջ 45 . «Մարմինն չէ սուրբ , եւ լինի յինքն նիւթեր սաբ որ այլ ջերմն կամի ընծայել» : Այլ է

յար որ ի գլուխ ԻՉ. էջ 79. «Եւ իւր ստածումն յար եւ ի մօտ է ի ծաղկին ստածումն ամենայն դիմօք». հոս յար նոյն նշանակութիւնն ունի ինչ որ յար ԼՆՏՏՏ բառին մէջ. — «Տաքութիւնն միացեղ եւ յերակ լինի ի մարմինն». ԻՍ. էջ 58. այսինքն միօրինակ, շարունակ. տպագիրն ի զուր կ'ուղղէ յարակ. տես եւ յէջ 56. «Եւ եթէ այրեցող ջերմ ունի եւ ի յերակ (տրպածն՝ յերակն) տաքութիւնն». նոյնպէս եւ ի գլուխ ԻՉ. էջ 70. «Իւր նշանն այն է, որ իւր ջերմն հանապազ եւ յերակ (տպածն՝ յերակն) լինի»: — «Ձի երակաց մարմինն պինտ լինի. +աւել հետ օրաց որ եփէ բնութիւնն եւ արձակէ». ԻԳ. էջ 59. կ'ուղղուի +աւել ոչ ի դէպ. +աւել Ստորին հայերէնի մէջ ստէպ գործածուած բառ մ'է, որ մերթ կը նշանակէ Բերեւ, մերթ Բայն Բե: Այս +աւել բառն է որ սխալմամբ +այլել գրուած է ի գլուխն Զ. էջ 10. «Ապա աստ չէ պարտ շտապել, եւ ձիթերովն գնորա գլուխն եւ զմարմինն օծանել. +այլել (կարդա՛ +աւել) յետ այն որ խաղաղել լինի ջերմն»: — «Ի հիւանդին փոքն չերեւնայ նիհարութիւն եւ ոչ բարակութիւն». ԼԳ. էջ 94. կ'ուղղուի փոքն, բայց չյարմարիր. քննելի է նշանակութիւն փոք բառին: — «Այլ պատեհ է որ ի փոք եւ յանգան բժշկին զայդ ջերմդ». ԼԳ. էջ 95. ուղղեալ է ի փոք. բայց այս բառս ուրիշ ամէն տեղ փոք կը գրուի. ի փոք, որ եւ ի փոք, Ստորին հայերէնի մէջ կը նշանակէ մեղմով, հանդարտ հանդարտ, կամաց կամաց. տես յառաջիկայսդ եւ ի սկիզբն քննութեան Աստուակոց գրոց, էջ 96: Հ. Արսէն Ա. յարնեան իւր Արդի հայերէն լեզուի քերականութեան 126 երեսին մէջ կը գրէ. «ի փոք. անշուշտ նաեւ ի փոքաց, ի փոքաց. ուստի հիմակուանը՝ կամաց». չեմ գիտեր թէ բաղմանմունն Ա. յարնեան սուր գտած է այդ ի փոք ուղղագրութիւնը. ես միշտ փոք տեսած եմ ի ձեռագիրս ի փոք կամ ի փոք: — «Ա՛ռ. . . չոր թուզ, եւ ճակնդղի ջուր, եւ հացի քօրակ, եւ շաքար, եւ շիրիկ ձէթ. դայս զամէնս եփէ, եւ հուկնայ դիր զերդ իւր ոստմն է». Ի. էջ 117. կ'ուղղուի հացի փօրակ, իբրեւ հացի փոք, հացի միջուկ. բայց անյարմար է. հացի քօրակ կը յիշուի հին արուեստաբանութեան մը մէջ. «Յաղագս բորակի: Բորակն ազգեր են եւ գուներ. քօրակն հացի. սպիտակ հաց երէ եւ տորնի պինդ.

եւ այլ ազգ մի այլ կայ որ է կարմիր, եւ լինի ի հոգի քորակէն. եւ այլ ազգ մի այլ որ է սպիտակ բորակ ոսկերչի, եւ գանուս զինքն ի քարաչէն պատերն, եւ է գոհարճըէն» :

109. (1) «Եւ երբ զձեռդ ի վերայ մարմնոյն դնես, մինչեւ շողայ, ապա յարձակի եւ բացուի գաղտ շնչահանքն, եւ ելանէ իւրմէն մասն ինչ շողի» . Է. էջ 12 : Ուղղելի շողայ, այսինքն՝ տաքնայ : Տես եւ ի գլուխն ԽԵ. էջ 133 . «Ձհիււանդն ծածկէ եւ զջուրն, որ ի ջրին շողւոյն եւ ի տաքութենէն մարմինն շողայ շոյտ եւ քրտնի» :

110. (2) «Մեծ իմաստասէրն Բագարատ ասէ, թէ Տրալաթիւն հոգւոյն ահով է» . Ժ. էջ 18 . «Եւս առաւել պատճառ այս լինի՝ որպէս սուգն եւ հոգան եւ Տրալաթոմիանն, ահն եւ երկիւղն, ցանկութիւնն եւ զիպն» . ԻՍ. էջ 35 : Ուղղելի Տրալաթիւն կամ Տրալթիւն, Տրալաթոմիան կամ Տրալթոմիան . ուրիշ անդ կը գրուի Մրալթան, Մրալթոմիան, Մրալթիմ : Ժ. Գ. դարու մէջ գրուած բժշկարան մը կ'ըսէ . «Եփ վախէ մարդ՝ երակն փոխի եւ սրանայ, եւ եփ Տրալթի՝ երակն թանձրնայ եւ յիրար գայ» : Գալով նշանակութեանը, թուի թէ Մրալթիմ է հոգ ընել, սրամիլ, եւ Մրալթոմիան՝ հոգ, անձկութիւն, մոմտուք :

111. (3) «Ս'ու յունապ քսան հատ, եւ սպսոսն յիսուն հատ . . . ան չոր մանուշակ եւ սպսոսն» . ԻԳ. էջ 52 . - «Ս'ու . . . չամիչ ի հատճէն հանած, եւ սպսոսն» . էջ 54 . - «Ս'ու . . . սալորի չիք քսան հատ, սպսոսն երեսուն հատ» . էջ 146 : Ուղղելի է սպսոսն, այն է պարսկերէնն սեփեման, զոր այսպէս կը ստուգաբանէ եւ կը մեկնէ Տիրացու Գէորգ Պալատցի իւր Պարսկերէն - Հայերէն բառարանին մէջ (Կոստանդնուպօլիս, 1826) . «Սեփեման . ստուգաբանի սեփեման, այսինքն շան ստին . է դեղ իմն անուշահոտ, գորով սորա միրգ ինչ որ լինի ի չափ շլորոյ, եւ ունի ի միջի իւրում նիւթ ինչ ան-

համ, զոր ի գործ ածեն յոմանս բաղադրութիւնս» : Այս պտուղս գղ. կ'ըսուի Sébeste, զոր Լիդրէ կը ստուգարանէ «ֆրուիտ ին արարականէն, և կը մեկնէ. «fruit du sébestier, sorte de prune» : Իսկ ի ԲաղձաՎէպէ 1843 ամին, էջ 10, կը գրուի. «Տաճկի գիրքերէն գիտենք որ պարսկերէն «ֆրուիտ ին արարականէն հոտաւէտ եղը, որ ֆրուիտ ին արարականէն ալ կ'ըսուի, հիմակուան թիւրքմէններուն երկիրը կը գտնուի, այսինքն Հայաստան, բայց ո՞ր կողմերը՝ յայտնի չէ» :

Տես ուրիշ ուղղութիւն մը յէջ 1 :

Ի. Գ. ԻՐԻՔ ՎԱՍՏԱԿՈՑ

(Թորոն Կայերէն)

Ի դուռն ճԾԱ, էջ 103, կը կարդանք. «Սերտ խառնեա և է Կամ որ չայրի եւ խանձրէհամի». ի ծանօթութեան կ'ըսուի. «աստ պակաս թուի այլ բառ, կամ աւելորդ ևն» : Ինձի կ'երեւի թէ ոչ թերի է բանն, եւ ոչ ևն աւելորդ. «սերտ խառնեա և է Կամ» կը նշանակէ՝ ստէպ խառնէ եւ հանդարտ հանդարտ : Տես եւ ի դուռն ՄՂԱ, էջ 196. «Եւ երբ ի բարձրէ վայթեա (զմեղրն), է Կամ եւ ի յուշ իջանէ» . տես եւ ի վերանդր ի սկիզբն քննութեան Մխիթար Հերացոյ Ջերմանց մխիթարութեան, էջ 94. — «Եւ ապա երկու կոնֆոս սոնոպրի աղէկ խորոված կապեա ի սպրկիկ կտաւ, եւ ի ներք ձգեա» . ճԾԶ. էջ 107. Գրքին վերջը դրուած փոքրիկ բառարանին մէջ Կոնֆոս կը մեկնուի. «պղնձեայ սափոր. տճ. կոնֆոս, (որ է լատիներէն եւ իտալերէն Cu'cuma ըսուածն) . բայց հոս բոլորովին անյարմար է. Կոնֆոս, որ կը գրուի նաեւ Կոնֆոս, Կոնֆոսն, կը նշանակէ քանի մի տեսակ սնկերու ծաղկին կուստ դուրսը, ինչպէս են խաշխաշ, վարդ, եւ այլն. «Ա՛ն մանուշակ եւ նիւնոֆար եւ խաշխաշի կոնֆոս» . Մխ. Հերացի, Ջերմանց մխիթ. ԺԱ. էջ 21. — «Հայկաւ չորս դրամ, վարդի կոնֆոս յիստկած վեց դրամ». անդ. ԻԲ. էջ 15. Համեմատէ գրոց Կոնֆոս բառին հետ — «Այդ խտրիչ արապկերէն ասեմ պարոս, եւ մեք չկարա»

ցաք ճշմարտել ի թարգմանէն . եւ որք ճշմարտեն՝ թող
գրեն» . ՄԿԳ. էջ 169 : Գրքին վերջը դրուած բառարանին մէջ
կըսուի . «Պարբոս . զորոյ զինչն եւ զհայ անունն ոչ կարա-
ցաք , ասէ , ստուգել , թարգմանիչ մեր . այլ զի ընդ անան-
խոյ յիշէ , որպէս եւ բնագիրն միայն զանանուիս յիշէ , Men-
tha, եւ ըստ մերուսն՝ անօգուտ ասէ զայն , յայտ է յազգէ
անանխոյ լինել» : Իսկ իմ ճշմարտածս այս է , զոր եւ կը գրեմ
ահաւասակ : Պարբոս , կամ հայերէն տառադարձութեամբ
Բարբոս , է արարական* անուն գաղղիերէն Pouliet կոչուած
տնկոյն , որու համար կ'ըսէ Լիզրէ իւր ընդարձակ բառարա-
նին մէջ . «plante aromatique, du genre des menthes, mentha
pulegium, L» , այսինքն՝ հոտաւէտ աւունկ յազգէ անանխոյ :
Ի հաստատութիւն այս իմ կարծեացս յիշեմ հետեւեալ վկայու-
թիւնները . ա . Ի բառս Գաղիանոսի , (որոյ վրայ խօսեցայ
Բառքննութեանս սկիզբը , Գլ . Ա . յօդ . բ . էջ 2;) կը գը-
րուի . «Բարբոս . դաղձն կամ անանուիս» : Բ . Ամիրտովլաթ
Ամասիացի բժիշկին իւր Անֆիոսոս անուէր** մտկադրեալ ամե-
նապիտանի գրոց մէջ կ'ըսէ երեք տեղ . «Աւլիմին Հեւրնացոյ
բառօլն պարբոսն է» . — «Չում , որ է հաւաքն . ինքն պար-
բոսն է» . — «Պարբոս , որ հաւաք ասեն . ինքն ըստանն մն է,
ոչ տերեւն լայն է , եւ լաւն այն է որ տերեւն կապուտ լինի
. . . Իսն Պայտարն ասէ թէ այսոր թուրքերէն թարայի իս-
րասանի կու ասէ» : Գ . Հին ձեռագրի մը մէջ , յորում հաւա-
քեալ են անուանք զանազան տնկոյ , գտած եմ . «Հաբակ .
դաղձն» : Այս հաբակ , կամ ինչպէս Ամիրտովլաթ Ամասիացի
կը գրէ՝ հասառ , արաբերէն հապաֆ բառն ըլլալով , որ է պարս-
կերէն փոսփենձ կամ ֆոսփենձ , տաճկերէն ֆէլէստեան եւ գաղ-

* Յ. Ճ'նսն իւր Պարսկերէն — Արաբերէն — Անգղիերէն ընդարձակ
բառագրոց մէջ , [Francis Johnson, A Dictionary persian, arabic,
and english. London, 1852.] կը յիշէ զՊարբոս [Badraşj] իրբեւ պարսկ
բառ , եւ կը մեկնէ . «a fragrant kind of herb» , այսինքն՝ տեսակ մը ա-
նուշահոտ խոտ :

** Շնորհակալութեամբ կը ծանուցանեմ որ Բառքննութեանս մէջ
Ամիրտովլաթի Անֆիոսոս անուէրէն բերած վկայութիւններս քաղեցի այն ձե-
ռագրէն զոր ինձի փոխ տուաւ Մեծ . Արտովլէ Էֆենտի Ալիշան , հայ հասա-
րակութեան քաջածանօթ եւ նշանաւոր դրամագէտն :

դիերէն Pouliot սնկոյն անուան , ինքնին կը հետեւի որ պարտած եւ Pouliot նոյնանշան բառեր են . եւ եթէ Աւգերեան եւ Էմմանուէլ Գաղ . — Հայ . — Տաճկ . բառարանաց մէջ վնասենք Pouliot բառը , կը տեսնենք որ իրօք սաճկերէն փոփոխած եւ ֆելեպիան նշանակուած են : Գալով պարտածի , կամ որ նոյն է՝ Pouliot ի հայ անուանն , տեսանք ի վեր անդր որ Բարտոմէոս եւ Հաբակի հայերէն Գաղձն կը մեկնուին . բայց ես կարծեմ թէ ի հայումն Գաղձն կը նշանակէ յաւէտ գղ . Calament ըսուած անուշահոտ տունկը , որ է նոյնպէս յազգէ անանխոյ . « Կաղամփնթինէ . Գաղձն » , գրուած է ի բառս նորին Գաղիստոսի : Իսկ Pouliot թուի թէ հայերէն կը կոչուի Խոռ , կամ Գաղձն վայրի . Ժ. Գ. դարու բժշկարան մը կը գրէ . « Փօտինէճ (պրս . փոփոխէճ) , որ է խոռն , եւ ինքտ վայրի դաղձն է » . — « Խոռն . վայրի դաղձն » . անդ . — « Խոռ եւ փոռնջ (պրս . փոփոխէճ) . վայրի դաղձն » . Հաւաքումն անուանց սնկոյ : Զայս ամենայն կը յանձնեմ ի քննութիւն արեւելադիտաց եւ սնկագիտաց :

112. (1) « Եւ ապա՝ զտախտակաց միջոցսն աղէկ կալաւ փոփոխ կտաւով կամ բրդով , եւ ապա առ սեւ ձիւթ եւ կվենւոյ փայտի կամ մարխի սղոցուքով , եւ այս զձիւթն եւ զայն սղոցուքն ի ներք խառնէ , եւ զնտուկն աղէկ ծեփեա ի ներսէ » . ԾԲ . էջ 41 : Գրքին վերջը գրուած բառարանին մէջ Ափրեւ կը մեկնուի « խնուլ , գոցել զծակտիս » : Կարելի՞ է արդեօք կարդալ մէկ բառ կալափոփեւ , հրամայական կալափոփե՛ , եւ ստուգարանել արարացի Գալաֆա կամ Գալաֆա բառէն , ուսկից կը ծագին գղ . Calfater եւ Calfeutrer բայերն . արաբերէն Գալաֆա բառին բուն նշանակութիւնն է ըստ Լիդրէի « introduire de l'étoupe dans les fentes d'un navire » , այսինքն՝ նաւուն ծերպերուն մէջ խժուծ մտցնել կամ դնել , որու նման է վաստակոց գրոց ըսածն ալ . « Եւ ապա զտախտակաց միջոցսն աղէկ կալափոփե՛ կտաւով կամ բրդով » : Սոյն գրոց մէջ կ'ըսուի ուրիշ տեղ . « Դու քաղեա եւ դիր ի ճառայ , եւ զբերանքն կալ » . ԽԲ . էջ 37 . — « Լից ի վարջ մի եւ ճուր ի վերայ , եւ կալ պինդ զբերանն » . ԾԲ . էջ 77 . — « Կալ

ծեփով զբերանն և պահեա» . Մէ. էջ 128 . - «Եւ պլամով
(կամ պլամով) կամ այլազո չոր փշով զբերանն իւլ» .
Մի. էջ 136 . այս ամէն վկայութեանց մէջ իւլ կը նշանակէ
«(ամանին բերանը) ծածկէ» . մինչդեռ իսլափիւլ (եթէ ուղիւ
է այսպէս կարգալ) կը նշանակէ՝ տախտակներու միջոցները
կամ ճերպերը կտաւով կամ բրդով գոցել :

113. (2) «Նոյնպէս և Ինչ որ նօսր և աւազոտ գետինն .
չէ պարտ տնկել և այլն» . Մէ. էջ 46 : Ուղղելի է թէ Ինչ որ
ընթերցուածն և թէ կիտազրութիւնն . «Նոյնպէս և է չր ,
նօսր և աւազոտ գետինն չէ պարտ տնկել» : Տես և յաջորդ-
էջը , ուր կ'ըսէ . «Եւ այն այգին որ է չր և ի նօսր գետին
լինի դրած» :

114. (3) «Թեթեւ ծածկեա (զտունկն) , որ արեգական
ջերմութիւնն իջանէ ի տակսն և քանէցընէ զինքն» . ԿԳ. էջ 54 :
Թուի քանէցընէ , ինչպէս կ'ըսէ ի դուռն ՄՀԸ , էջ 178 . «Առ-
նուն զուռն ի տակուցն հանդերձ հենայոյլն , և տանին
ի մաշարայ մի , կուռ հետ իրերաց սնկեն , և անդ քանէցը-
նէն և տակուեցնեն» :

115. (4) «Բայց եթէ ի ցրտային տեղիսն եւս թեթեւ-
ցուցանէ ոք զտունկն ի քաղամբոի որթոյն՝ ըսւ է» . ՀԷ. էջ 63 :
Թուի քաղամբուի , ինչպէս կ'ըսէ ի դուռն ՄԻԸ , էջ 142 .
«Գեղեցկատեսիլ և քաղամբուի տայ զպտուղն» : Տես և ի
դուռն ՃԺԳ , էջ 83 , քննեքուի , և ի դուռն ՄՀԳ , էջ 175 ,
«Քարեքուի պտուղ» :

116. (5) «Առ անուշ գինի եօթանասուն մասն , և յիս-
տակ մեզր հարիւր մասն , և մունֆախդէճ քսան և հինգ-
մասն , յիրեար խառնեա և ած ճանր ուլի կաներ , և սակաւ մի
սատէճ հինտի ած յամէն աման սակաւ մի , և ձիւթեա
զբերանն» . ՃՂ. էջ 121 . «Եւ սպա ի նօսր ձիւթած ճուռ ,

ի հոներ լից և զբերանն ձիւթեա աղէկ և կալ» . ՄԴ. էջ 126 :
Կո՞ն, հոներ կը մեկնուի զբքին վերջը գրուած փոքրիկ բա-
ռարանին մէջ «աման աղի և սյլ նոյնպիսի իրաց» : Կարելի՞
է արդեօք մտնել հոներ և մտնուի ի հոներ գրուածն կարգալ
մէկ բառ մտնուի հոներ, մտնուի հոներ . այս ընթերցուածով կը
ծնանի նոր բառ մը մտնուի հոն, տեսակ մը աման, որոյ ծա-
գումն ինծի անծանօթ է :

117. (6) «Քայց երբ հօտեա զծառան՝ շոտիչ կալ կամ
խարիչ, և զաւելի ակներն և զհօտած տեղիան խարեա, որ
սյլ ակն չհանէ, և զամէն ուժն ի պատրոյսն տայ» . ՄԻԵ.
էջ 139 : Գրքին վերջը շոտիչ կը մեկնուի . «երկաթեղէն
հրացեալ կամ ցողացուցիչ ջերմութեան գործի (իբրեւ
կիզիչ ապակի), որով խարեն զաւելի ակներն և զհօտեալ
տեղիս անկոց . կոչի և խարիչ» : Ուղղելի է շոտիչ, այսինքն
տաք ակիչ : Տես և ի դուռն ՅԺԵ, էջ 213 . «Սիւն մի տա-
քացո և պարեթի ճրագու կաթեցո ի վերայ» :

118. (7) «Ի միջոցս ծառոցն երակ երակ անուշահոտ
ծաղկունս սերմանել, վարդենի, մանուշակ, զափրան,
ճիւղի, ասպուղան» . ՄԻԲ. էջ 142 : Ի ծանօթութեան կ'ը-
սուի . «միւս օրինակք ճիւղի, անծանօթ ի մէնջ» : Հարազատ
ընթերցուածն է ճիւղի, այսինքն պարսկերէն ճիւղի, որու
համար կ'ըսէ Տիրացու Գեորգ իւր Պարսկերէն - Հայերէն
բառարանին մէջ . «Միւս . է տեսակ իմն ծաղկան . արբ.
ճիւղի» . իսկ արաբերէն ճիւղի մանուշակ կամ շահոքրամ
կը մեկնուի Հ. Յակոբոս Պօղածեանի Տաճկերէն - Հայերէն
բառարանին մէջ, (Վիեննա, երկրորդ տպ . 1858) :

119. (8) «Եւ բազում անգամ լից զփոսերդ խոտիչ,
և բռնցս, որ աղէկ այրի» . ՄՀԵ. էջ 178 : Գրքին վերջը
գրուած փոքրիկ բառարանին մէջ ուղղական կը գրուի
խոտիչ, բայց կ'երեւի թէ է խոտիչ . տես ի դուռն ՃԳ.

էջ 78. «Տես թէ ի սահմանս անդեացն չոր Խորհուրէ (տպ. Խորհուրէ) կենայ, կամ շամբ, կամ խարձ, յայն պահն վառեա կրակ» : Խորհուրէ կը նշանակէ խուլ. տճ. շաւ շարիւ :

120. (9) «Եւ ամբակն լայն քան զառաջինսն և դրուցա հայեաց, որ երբ քայլէ՝ ի դուրս ոլորի անդամն և ոչ ի ներք, որ զիրեար ձեռն կոճքն» : ՄՂԳ. էջ 199. ի ծանօթութեան կ'ըսուի թէ ուրիշ օրինակք ունին ձեռն : Ըստ իս ձեռն է ուղիղ ընթերցուածն, ինչպէս կը դրուի նաեւ ի Գրաստու բժշկարանին հրատարակելոյ ի Բողոքէպէ 1867 տարւոյն, էջ 357. «Եւ ոռն (ձիոյն) հեռու ի ձվոցն և արձակ, որ կոճքն զիրար ձեռն» :

ՄՄԱՆ Բ

ՌԻՂՂՈՒԹԻՒՆՔ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՆ

ՔԱՆԻ ՄԻ ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԵՐՈՒ

Բառաքննութեանս երկրորդ մասին մէջ կ'ուզեմ փոքր ճաշակ մը տալ իմ Հայերէն լեզուի ընդարձակ բառարանիս, որոյ հիմունքը ձգած եմ տասն տարիէ ի վեր, բայց թէ առաստաղը երբ պիտի դնեմ՝ Աստուծոյ միայն է գիտելի: Հաւաքել ամենայն հայ բառ, ոճ և դարձուած, և արձանագրել ըստ դարս դարս, սկսեալ ի Ե դարէն մինչեւ ԺԷ ին վերջը, - խուզարկել իւրաքանչիւր բառի ծագումը և ստուգաբանութիւնը, - որոշ որոշ սահմաններով ճշգրել նշանակութիւնները և պէս պէս առմունքները, - ահաւասիկ երկու խօսքով իմ աշխատութեանս նկարագիրը: Յիրաւի այսպիսի գործ մը առաւել պատկանաւոր և անկէր Հայկական կաճառի. բայց ո՛ր է այդ կաճառն. ո՛ր են այն գրագիտաց կամ ուսումնականաց ժողովներն, յորս զանազան կարծեաց կամ զանազան սկզբանց տէր անձինք գումարեալք յանուն հայութեան, յանուն դպրութեանց և ուսմանց, ձեռն ի ձեռն խառնեն, իրարու օգնեն և իրարմէ լուսաւորին:

Ներուի ինձ քսան բառից նշանակութիւնը հետազօտել հինգ Հայերէն բառարաններու մէջ և քսանին համար ալ ներկայացնել իմ դիտողութիւնքս: Բառարաններուն անուանքն են. ա. Գանձ Հայոց լեզուին կամ Բառարան Ստեփանեան Հայերէն-լատիներէն, յորինեալ ի Ստեփանոս վարդապետէ Ռօչքայ կամենիցացւոյ՝ ի կատարած ԺԷ դարուն կամ ի սկիզբն ԺԸ ին. այս բառգիրքս ցարգ անտիպ մնացած է: Բ. Բառգիրք Հայկազեան լեզուի, յորինեալ

ի Մխիթարայ Աբբայէ և յաշակերտաց նորին, և հրատարակեալ յերկուս հատորս ի վենետիկ ի տպարանէ Անտոնի Պոսթոլի յամին 1749 և 1769 : Գ. Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, հոյակապ գործ Աւետիքեան - Սիւրմէլեան - Աւգերեան վարդապետաց, տպեալ ի Ս. Ղազար յամին 1836 - 1837 : Գ. Բառգիրք Հայերէն - իտալերէն, յօրինեալ ի Հ. Մանուէլէ Ջախջախեան և տպեալ ի Ս. Ղազար յամին 1837 : Ե. Առձեռն Բառարան Հայկազնեան լեզուի, յօրինեալ ի Հ. Մկրտչէ Աւգերեան, (մի յերկից հեղինակաց Նոր Հայկազեանին,) և տպեալ ի Ս. Ղազար յամին 1846, որոյ երկրորդ տպագրութիւնն հանդերձ յաւելուածովք և ուղղութեամբք հրատարակեցաւ յամին 1865 :

Այս ամէն դիտողութիւններս կը թողում ի դատաստան հմտից : Անշուշտ ինձի ակտորժելի է որ ինչպէս Գաղղիերէն-Հայերէն բառարանիս Յայտարարութեան մէջ Քերէշ բառի ուղիղ նշանակութիւնը ցոյց սուրի և իմ կարծիքս հաստատեց դիտուն * մը, նոյնպէս ալ առաջիկայ ամէն կարծիքներս վաւերանան դիտնոց վճռով, բայց եթէ ուրեք կը սխալիմ, շնորհակալ կ'ըլլամ անոնց որ իմ սխալս կ'ուզեն, վասն զի առանց սուտ համեստութեան կրնամ ըսել որ չգիտցածիս թիւն յոյժ առաւել է քան թէ գիտցածիս : Եթէ նոր ժամանակներուս առաջին հայերէնագէտն՝ մեծանունն Հ. Արսէն Բագրատունի՝ իւր եօթնամանամբայ հասակին մէջ կը խոստովանէր թէ «Ամէն օր հայերէն լեզուի մէջ նոր բան մը կ'ուսանիմ», ես ինչպէտք է ըսեմ : Մինչդեռ այլոց առիթ կ'ընծայեմ իրենց սաղանդը ի հրապարակ հանելու, ես դո՛հ եմ եթէ և իմ աղքատիկ լումաներս յիշող և յարգող գտնուի :

* Այն է գերապատիւ Վահան վարդապետ Բաստամեանց, վանահայր Ս. Գայիանեան վանից, տես յառաջիկայսգ ի բառն Քերէշ :

Ասոնք են այն քսան բառերը զորս կը քննեմ ի ստորեւ մի ըստ միոջէ :

- | | |
|---------------|------------------|
| 1. Աղբղբուկ | 11. Թաթառ |
| 2. Ամար | 12. Թոնձ |
| 3. Ամբեւտ | 13. Խարի |
| 4. Աստախոտոս | 14. Կոյշ |
| 5. Արօսի | 15. Հօրորդութիւն |
| 6. Բաշխ | 16. Շագանակ |
| 7. Բաստեռն | 17. Ուռամիջակ |
| 8. Բլիթէն | 18. Տատան առնեմ |
| 9. Գեանախնձոր | 19. Տիպ |
| 10. Զոյգոստաս | 20. Քերքէշ |

1. Առբղբուկ : Ստեփանոս կամենիցացի կը գրէ . «Առբղբուկ, բլի, կա . խոտ անուշահոտ պարսիկաց, որ և վայրի նարդոս ասի . լատ. Phu, Valeriana . Գաղ. բժ . » - Նոր Հայկազեանն . «Առբղբուկ կամ Առբուբուկ . բառ անյայտ առ Գաղիանոսի, իբր աղտ պղնձոյ և այլոց իրաց . Դեր, Կեր, Բու, Կե, Կե, որպէս և Առբղբուկ հոն, իբր անուն խոտոյ » : - Հ. Մանուէլ Զախճախեան . «Առբղբուկ կամ Առբուբուկ . ըստ ոմանց խոտ ինչ անուշահոտ . իտ . Valeriana, Fu . (երկբայօրէն) եւս՝ կրկանք պղնձոյ և այլոց հրահալից . իտ . Scoria di rame, feccia de' metalli » : Նոյն Զախճախեանն իւր խտալերէն - Հայերէն ընդարձակ բառարանին մէջ (վեներտիկ, 1804) կը գրէ . «Fu, Valeriana . խոտ ինչ . ըստ ոմանց կոչի Առբղբուկ » : - Առձեռն բառարանի երկրորդ տպագրութիւնն . «Առբղբուկ . 1. հանքերու աղտ, դիրտ . Կեր, Կե, Կե . 2. բժշկական արմատ մը՝ ծաղիկն անուշահոտ . Կեր, Կե, Կե » : - Իսկ վրուրի Որմզդանայ Բուրաստանաց մէջ, Ա. սող 27, Առբղբուկ գործածուած է իբրեւ հաւու ծիրտ .

«Դու զքամածոյ չանչն ի յանկեան ուրեք մըթերըս բացօթեապ, խառն ի խուռն ընդ առբղբուկն վառեկի դէզ առ ի փուտ » :

Ըստ իս՝ կը սխալին Աշքշքո՞ւի բառը ազատ, գիրտ կամ ծիրտ հասկըցողները. Աշքշքո՞ւի բուսոյ մ'անունն է, և ոչ այլ ինչ: Գաղիանոսի բառերուն մէջ գրուածն այս է. «Եւխարու. Աշքշքո՞ւ» . նոյն տեղը կը գրուի դարձեալ. «Ալ շփոյ. Աշքշքէի հոսնո. ապամ կոմածի»: Եւխարու ձայնին մօտ կայ յունարէն էլէի¹ + ւ, լատ. Hibiscum, որ է գլ. Guimauve, հայերէն Տուղտ, տճ. Կեւխալիէ: Կայ նաեւ հայերէն Բալքափ կամ Բալքափ տունկ, որ ձայնիւ նման է Աշքշքո՞ւի բառի, նոր հայկազեանն ի բառն Տուղտ կը յիշէ վկայութիւն մը ի բժշկարանէ, յորում կ'ըսուի. «Բաղբակ. տուղտ. հաթմի»: Այս հալիէ բառս է արաբերէն խալիէ, այսինքն տճ. Կեւխալիէ:

2. Աճար: Ստեփանոս կամենիցացի կը գրէ. «Աճար. հաւ ջրային գորշագոյն, սակաւ ինչ մեծագոյն քան զաղաւնին. լատ. Fulica, Larus. Մագ. ֆեր. «Որպէս ոչ եղելոյ լուղակաց, զամար հաւն կոչեն ամառ»: - Նոր հայկազեանն. «Աճար. անյայտ բառ, զոր ընթեռնու ի Մագիսարոսի ֆերականին Ստեփանոս լեհացի * և մեկնէ, հաւ ջրային գորշագոյն փոքր ինչ մեծ քան զաղաւնին. (որպէս ճայ ծովու. մարիէ.) այլ ինքն դեռ է լատ. Fulica, Larus. որոյ առաջինն կոչի յոմանց ումկ. Կերիէր, ըստ Մենինսքեայ՝ էնճիէ»: - Հ. Ման. Զախջախեան. «Աճար. հաւ ջրային գորշագոյն՝ փոքր ինչ մեծ քան զաղաւնին. իտ. Folaga»: - Առձեռն Բառարանն՝ երկրայանօք. «Աճար. տեսակ մը հաւ կամ ջրային թռչուն մը»:

Ըստ իս՝ Աճար ոչ է հաւ ջրային կամ թռչուն, այլ տեսակ մը ձուկ: Ստեփանոսի կամենիցացոյ ի Մագիսարոսի ֆերականէն յիշած վկայութիւնը այսպէս կը գրուի ի ստոյգօրինակս Մագիսարոսի. «Ոչ ունելով նոցա (Յունաց) ճէ՝ յորջարջեն զճուռակն ծուռակ, որպէս ոչ եղելոյ լուղականացն որ ի մերում գաւառիս, նովին ձայնիւն կոչեն զամարն՝ ամառ»: Հոս հաւ բառի յիշատակութիւն չըլլուիր, և

* Այն ինքն է Ստեփանոս կամենիցացի:

խօսքը պարզապէս լողականաց՝ այսինքն ձկանց՝ վրայ է . «Յոյնք ճէ գիրը չունենալով, կ'ըսէ Մագիսարոս, փոխանակ ճուռակի կը հնչեն ծուռակ . նոյնպէս մեր երկրին մէջ գտնուած ձկները իրենք չունենալուն համար, նոյն բառով ամառ կը կոչեն (սալով) ամար ձուկը (որ հայերէն բնով կ'արտասանի)» : Մինչեւ հիմա Սեւանայ լճին մէջ կը գտնուի Ա.ճ.ճ. անունով ձուկ մը . տես Հ. Ղեւ. Ալիշան, Տեղագիր Հայոց մեծաց, էջ 19 :

3. Ա.ճ.ճ. : Նոր Հայկազեանն կը գրէ . «բառ անստոյգ . զի կամ է յն . է՛ճճ-ն, որ է Սաղմն, և կամ թերեւս խլուրդ . «Որ յորովայնի մեռանի, ընդ այն համարէ թէ շաճե-փն ոք սպանանիցէ . քանզի աճե-փն կոյր է, և ոչ գիտէ որպէս սպանանի» . կիւրեղ Ալեքսանդրացի, մեկն . Բ Օրինաց» : - Հ. Ման . Զախճախեան չի յիշեր զԱ.ճ.ճ. , այլ կը գնէ երկբայանօք . «Ա.ճ.ճ. . յովազ կամ միեղջերու . Խա . Pantera, Liocorno» : - Առձեռն Բառարանն կը գրէ նոյնպէս երկբայանօք . «Ա.ճ.ճ. . սաղմ կամ խլուրդ» . «Ա.ճ.ճ. կամ Ա.ճ.ճ. . յովազ կամ միեղջերու կենդանին» :

Ըստ իս՝ Ա.ճ.ճ. կը նշանակէ խլուրդ, գղ . Taupe , տճ . երբ «ըստն» : Նոր Հայկազեանն միայն կիւրղի Ալեքսանդրացուց Բ Օրինաց մեկնութենէն վկայութիւն մէջ կը բերէ . բայց ես գտած եմ այս բառս նաեւ Գաղիանոսի բառերուն մէջ, յորս կը գրուի . «Ասիազկէ . Ա.ճ.ճ.» . Ասիազկէ է յոյն բառն «սփալտ», այսինքն՝ խլուրդ : Մինչեւ հիմա Խոսարժրեցիք Ա.ճ.ճ. կ'ըսեն խլրդին : Իսկ Ա.ճ.ճ. յովազի կամ միեղջերույ նշանակութեամբ անծանօթ է ինձ :

4. Ա.ս.ս. : Նոր Հայկազեանն այս բառս կը յիշէ Մխիթար Հերացույ Զերմանց մխիթարութենէն և նոյն կը համարի Ա.ս.ս. բառին հետ, որ է յունարէն «սփալտ», տճ . ըստն, գղ . Homard : Նոյնպէս Առձեռն Բառարանն իբրեւ նոյնանշան կը գնէ Ա.ս.ս. , Ա.ս.ս. , Ա.ս.ս. , այսինքն տճ . ըստն :

Ըստ իս՝ Ասորիոս է գլ. Stéchas կոչուած բոյսն, յու-
նարէն «սթիս», զոր Արարացիք շրջած են յ՛նսորոտիոսիս,
և յորոց կ'անունն մեր բժշկապետքն. այս բոյսիս տաճկե-
րէն անունն է Գարապաշ, Գարապաշ օնո- կամ շէշէ, Գարապաշէ,
տեսակ լավանոյի. իսկ հայերէն անունն է Եղնախոռ կամ
Աբեղախոռ: Յիշեմ նախ Մխիթար Հերացւոյ Զերմանց
մխիթարութենէն երկու վկայութիւն, և ապա մի առ մի
բժշկարանաց վկայութիւնքը. «Պասպայիճ չորս չորս դրամ,
ասորիոս երեք դրամ. զամէնս եփէ չորս լիտր ջրով, մին-
չեւ մնայ կէս լիտր». Մխ. Հեր. խՍ. էջ 126. - «Պասպայիճն
և սեւ հալիէ և ասորիոս և աղարիկոն». անդ. էջ 128: -
«Ասորիոս. Եղնախոռն». Բժշկարան Ժ.Գ. դարու. - «Ասորի-
ոսի ծաղիկ. յԱնտաք լինի». անդ. - «Ասորիոսասորս», որ
թարգմանի հոգի ընող. ինքն ծաղիկ մն է, և հայերն ասեն
Եղնախոռն, և թուրքերէն Գարապաշ կու ասեն. սերտ տերեւ
ունի և կարմրեռ ծաղիկ ունի, և լաւն այն է որ կարմը-
գոյն լինի. . . : Ասէ Պատեհին թէ ինքն զհոգին կու յե-
մայնէ ասորիոս ասելն, և այս ի յայն կղզին կու լինի որ
Սատհասիս ասեն, և իր շահսաֆրամի ըռումի ասեն, և
լաւն այն է որ կանանչ լինի և համն լեղի». Ամիրտովլաթ,
Անգիտաց անպէտ: - «Ասորիոս. Կեշէշ օնո. Գարապաշ օնո.
հայերէն Աբեղախոռ. ինքն խոտ է, ծիրանածաղիկ ունի.
լաւն Պուրսայ լինի. տաք է և չոր». Բժշկարան Սիմէոնի
կամերկապոյ: - «Իսորոտիոսի. է խոտ իմն, զորոց զծաղիկն
առնեն մասն ոմանց գեղորէից, որ բազում օգտութիւն
առնէ քմաց և քմական ախտից: Եւ մերթ շէքէրով խամկը
առնեն. թուրքերէն ասի Գարապաշ, և յոմանս տեղիս Գար-
պեօրլի» . Տիրացու Գէորգ, բառգիրք Պրս. - Հայ. - «Իս-
նիոտիոսի. է խոտ ինչ որ ունի զծաղիկ մօռ գունով. թուր-
քերէն Գարապաշ շէշէի». անդ. - «Շասֆերնէ. է խոտ ինչ
բժշկական ասորիոսի, թուրքերէն Գարապաշ, և ի գիրս
բժշկականաց անուանի Գարապաշի օնո» . անդ. :

5. Աբօօի: Նոր Հայկազեանն կը գրէ. «Աբօօի. յունարէն օ՛լ. լա. Sorbus. յունարէն դա օա. լա. Sorbum. ծառ և պտուղ. տճ. ի-վէդ. Գաղիանոս» : - Առձեռն Բառարանն. «Աբօօի. սին ծառն և պտուղը. տճ. ի-վէդ, ի-վէդ աղածը» :

Ըստ իս՝ Աբօօի է նոյն ընդ Աբօօ, և կը նշանակէ գղ. Outarde ըսուած մեծ ջրային հաւը: Գաղիանոսի բառերուն մէջ գրուածն այս է. «Ոտի. Աբօօի». Ոտի է յն. օրի, գղ. Outarde. իսկ Նոր Հայկազեանն կ'իմանայ յն. օ՛լ, որ է տճ. ի-վէդ աղածը, գղ. Sorbier կամ Cormier : Այս թիւր իմացուածէն՝ Աբօօի, թուշնոյ անուն, առած է նշանակութիւն ի-վէդի ծառի : - Նոր Հայկազեանն Աբօօ բառի մի միայն վկայութիւն կը բերէ ի նախնեաց, այն է ի պատմութենէն Մատթէի Ուռհայեցոյ. «Յայսմ ամի եղեւ պատերազմ թուշնոյ ի գաւառն Մելտենոյ. Ժողովեցան արագիւք և կռուակք և «բօ» և կռուեցան ընդ միմեանս, և կռուակն յաղթեաց զարագիւն, որ բնաշինջ արար զնոսա և ուր ուրեք մնացին». տպ. Երուսաղէմի, [էջ 446 : Յիշեմ ուրիշ քանի մի վկայութիւններ ալ. «Զօրէն «բօ»ին, քանզի նորա յորժամ մերձ ելոյ հուպ յըմբռնումն բաղէի, ի գուճս կոյս եղեալ զծիրան ծորեալ դիմացն ուղղակի ճահեցուցանէ, և ինքն թուօցեալ մնայ կենդանի». Գր. Մագիստրոս, թուղթ ԿՍ. - «Կիլիկիա . . ունի . . և հաւ՝ սիրամարգ, սալամ, կաքաւ և տուռէճ, «բօ» և արագիւլ». Թովմա վարդապետ, նկարագիր Կիլիկիոյ. -

«Աբօն էր մեծ զերթ ոչխար,

Զօրն ի դաշտերըն շուրջ կուգայր». Բառարան Հայ-Լա.

Ստեփանոսի կամենիցացոյ : -

«Մեծամեծք խորհուրդ արին, բերին ըզսագն ընդ «բօ»ին, Մանրամասն կտրատեցին և զճրնճրդկան փորըն լըցին».

Տալ ուրախութեան, Արեւելք առաջին. -
«Հուպարայ, Նոր թուրքերէն այս թուշնոյս Բօլ կ'ասէ,

և ոմանք շէ կուտան, և յարապերէն «էհոմ» կ'ասէ, և հայերէն Արօ, և ինքն թուշուն մն է որ միտն սագուն մսին և բաժու մսին ի մէջն է»։ Ամիրտուրլաթ, Անգլիտաց անպէտ : Տես Aubere ի Յաւելուածն (Supplément) Լիդրէի Գաղղիերէն բառարանին, յորում արաբերէն հօդերս բառն կը մեկնուի գղ. Outarde :

6. Բաշի : Նոր Հայկազեանն կը գրէ. «Բաշի. որպէս Ա. քալար. յն. «հարի. ակար. մանր ճճի. կամ որդն մամոյ, պանրոյ, և մորթոյ մարմնոց մարգկան. Գաղղիանոս» : - Նոյնպէս Հ. Ման. Զախճախեան Բաշի բառը կ'իմանայ իբր լտ. Acarus, մանր ճճի կամ որդ. նոյնպէս և Առձեռն Բառարանն : Հ. Սրապիոն Էմինեան ալ գղ. Blatte, Charançon և Mite բառերուն գիմնոց, որ որդ կամ ուտիճ կը նշանակեն, կը դնէ Բաշի :

Ըստ իս' Բաշի ոչ է յունարէն «հարի և լտ. Acarus ըսուած որդն կամ ճճին, այլ լտ. Acorum կամ Acorus, իտ. A'coro, աճ. էկեր օրն կոչուած ջրային բոյսն, որ պարսկերէն կ'ըսուի վաթի կամ վաճ, և ուսկից մեր բժշկապետքն առած կ'ըսեն Բաշի կամ Բաշիփաի, Բաշիփաի : Գաղղիանոսի բառերուն մէջ գրուած է. «Ակարոն. Բաշի է»։ Վոխանակ այս Ակարոնը Ակորոն կարգալու և իմանալու լա. Acorum բոյսը, վերոյիշեալ բառարանք կ'իմանան այն որդը կամ ճճին որ յն. կ'ըսուի «հարի և լտ. Acarus : Ահաւասիկ Բաշիփաի քանի մի վկայութիւնք. «Ոճճ. Բաշիփաի»։ Բժշկարան ԺԳ դարու. - «Վաչ. Բաշիփաի»։ Բժշկարան. - «Վաճ, որ է «կեր»։ Հին բառգիրք. - «Բաշիփաին, որ է վաճն, որ է «կերն. ինքն սպիտակ և թեթեւ տակ է. ի ջրին մէջն կու բուսնի. լաւն այն է որ ի լի լինի, և անուշահոտ լինի . . . : Ասէ Պատեհին թէ ֆռանկն այսոր «հարոյ» ասէ, և հոռոմն գրուն ասէ, և պարսկերէն «կեր ասէ և յափ ըլ ղարհ ասեն»։ Ամիրտուրլաթ, Անգլիտաց անպէտ. - «Ոճ, որ է «կերն, որ է վաճն»։ անդ : Ընդհանրապէս Ամիրտուրլաթի գրոց մէջ

Բաշլարի կը գրուի, ինչպէս կը գրէ և Նոր Հայկազեանն . բայց ըստ ընտրեւագոյն ձեռագրաց գրելի է Բաշլարի :

7. Բաստեան : Ստեփանոս կամենիցացի կը գրէ . « Բաստեան ,
ան , աստե . Յունաց . է փոքրիկ կառ ծածկեալ ի վերուստ ,
զոր ի վերայ երկուց ջորուց ոմանք գնեն . լա . Basterna ,
Lectica . Պատ . Հայ . իրեն . ե . « Նախնեաց վեհքն Բաստե-
աստե երբեմն շրջէին » : - Քերթողական բառագրոց մէջ ալ
կը գրուի . « Բաստեան . դեռագակ կամ կուպա » . (լա . Cuba
կը նշանակէ գղ . Litière , գահաւորակ , Բախիի բեւան) : - Նոր
Հայկազեանն չի յիշեր զայս բառ ի կարգին , այլ ի բառն
Նուարտան խանգարեալ գրութեամբն Բաշլարու : - Հ . Ման .
Ձախձախեան . « Բաստեան , կակուղ և փափուկ նստարան . տճ .
սեպի . իս . Canapè , Sofà » . որմէ կ'առնու նաեւ Առձեռն
Բառարանն : Հ . Սրապիոն Էմինեան գղ . Sofa բառի առջեւ
կը գնէ . « Բաշլար արեւելեան . Բաստեան . (սեպի ») : Կ . Պօլիս
հրատարակեալ Մեղի-Ղրագրի 1859 տարւոյն 21 էջը Բաս-
տեան կը գրուի նոյնպէս իբրեւ տճ . սեպի . իսկ Հ . Արսէն
Բագրատունի Միլլոնի Դրախտ կորուսելոյ թարգմանու-
թեան մէջ , Դ . տող 305 , Բաստեան կը գործածէ իբրեւ բաշ-
լար կամ գղ . Tapis .

« Մինչ ինքեանք ի կողմ եղեալ ողն առնուին առ ի հանգիստ
ի փափկիկ սիզաբուսակ ծաղկանըկար ի Բաստեանն » :

Ըստ իս՝ Բաստեան կը նշանակէ տեսակ մը գահաւորակ
կամ դեռագակ Դ . դարու , որու կը լծուէին ջորիներ , լա .
Basterna . (տես Anthony Rich * , Dictionnaire des Antiquités
romaines et grecques) : Այսպէս կ'իմանան և Ստեփանոս
կամենիցացի և Քերթողական բառագրքն , որոնց մեկնու-

* Ահաւասիկ Անթոնի Ռիչի խօսքերն . « Basterna ; sorte de palan-
quin , destiné particulièrement aux femmes . C'était une voiture
fermée , traînée par deux mulets , un devant et l'autre derrière ,
attachés chacun à des brancards séparés » .

թիւնները տեսանք վերագոյն : Այս Basterna բառէն կ'ելնէ գղ. Basterne, տեսակ մը սայլ լծեալ յեզանց, որ ի գործածութեան էր ի Գաղղիա առաջին ցեղին թագաւորաց ժամանակը, և որուն համար կ'ըսէ Հ. Սրապիոն Էմիւնեան. «կառք ինչ առ նախնիս», Բաստերն բառը պահելով Sofah : Բաստերն երկու տեղ կը գտնուի ի գիրս նախնեաց. ահաւասիկ օրինակներն. «Ո՞ր արձեալ միապիշ առնէ զբազումս, որ գահաւորական և լիտեալ * և ջորեօք կրի, և զտիւնհուն նուարտանսն զԲաստերն՝ տարածանէ, եթէ որ համոյն և պարկեշտութեամբն զնայ». Ոսկեր. Եբր. Իժ. էջ 552. — «Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին որ գրգեալք և գգուեալք էին յիւրաքանչիւր Բաստերնս և ի գահաւորակս, հանապազ բոկ և հետի երթային ի տունս աղօթից». Եղջ. Բ. էջ 358 : Հ. Ստեփանոս Վ. Եղզըճեան հաղորդեց ինձ որ սանսկրիտ լեզուի մէջ Բաստերս և Բաստերս կը նշանակեն անկողին, դալար խոտերու գորգ, գղ. tapis de gazon, որով և Բաստերն ընդարձակ առմամբ կրնայ գործածուիլ բազմոցի մտքով : Կարելի է որ Բաստերն և Բաստերս կամ Բաստերս ազգակից բառեր ըլլան, բայց Ոսկերեանի և Եղիշէի վկայութեանց մէջ Բաստերն յայտնապէս գետպակ կամ կառք կը նշանակէ, և ոչ թէ բազմոց, canapé կամ sofa : Թերեւս սանսկրիտ Բաստերս և Բաստերս բառերուն աւելի մերձաւոր ըլլայ բառն Պաստարս :

8. ԲԼԵՒԷՆ : Ստեփանոս կամենիցացի կը գրէ. «ԲԼԵՒԷՆ. խոտ բժշկական. լատ. Meliphyllum, Apiastrum. Գաղիանսի բառք» : — Նոր Հայկազեանն. «ԲԼԵՒԷՆ կամ ԲԼԵՒԷՆ, որպէս թէ բլիթ եղեալ. յն. բլ'ւ». լատ. Callus. կոշտացեալ մասն մորթոյ մարմնոյն. ռուս. Գաղիանոս» : — Հ. Ման. Զախճախեան. «ԲԼԵՒԷՆ կամ ԲԼԵՒԷՆ. գաւառական բառ. կոշտացեալ մասն մորթոյ մարմնոյն. ռուս. խո. Callo» : Նոյնպէս

* Լիտի բառն հոս նոյն նշանակութիւնը ունի ինչ որ լատ. Lectica, գղ. Litière. պոխքն՝ գահաւորակ :

Առձեռնն Բառարանն նաւոր կը մեկնէ : Հ. Սրապիոն Էմիլեան
ալ գղ. Cal, Cor, Durillon, Oignon բառերուն առջեւ կը
գնէ. «Բւլեմէն. (նաւոր)» :

Ըստ իս՝ Բւլեմէն է գղ. Fenugrec կոչուած տունկն, որ
հայերէն կ'ըսուի նաեւ Բւլեմէն, Հացհամեմ : Գաղիանոսի
բառերուն մէջ կը գրուի. «Տեղիս. Բւլեմէն». Տեղիս է յն.
բե'լե'ն և լատ. Telis կոչուած անկոյն անունն, որու գղ. կ'ը-
սեն Fenugrec. բայց Նոր Հայկազեանն կը սխալի կարծե-
լով թէ Տեղիս ըլլայ յն. բե'լե', որ է գղ. Callosité, այս-
ինքն կոչուած կամ բրաւայեալ մասունք մարմնոյ :
Բւլեմէն կը յիշուի Ամիրատուլաթի Անգիտաց անպէտ գրոյ մէջ.
«Բւլեմէն, որ է հացհամեմն, որ է հապաթ ըլ սալտան» : - Իսկ
տճ. նաւոր բառի համար ունինք գաւառական կանկրուկ :

9. Գեփնախնոյն : Ստեփանոս կամենիցացի կը գրէ. «Գեփ-
նախնոյն. խոտ որ զհոտ խնձորոյ ունի. լատ. Unedo, Tuber,
Arbutum, Chamaemelon. Գաղիանոսի բառք» : - Մխիթար
Արքահօր աշակերտաց բառարանն, Հ. Բ. էջ 106. «Գեփնա-
խնոյն. պտուղ ինչ ուտելի խորտաբորտ խնձորանման բու-
սեալ յարմատս սղտանման բուսոյ իրիք որ յաճախ լինի ի
կողմանս Արդրումոյ. ռուս. գետնախնձոր. և տճ. եեր էլմալ.
ի հին բժշկարանս» : Թուի թէ հոս Գեփնախնոյն հասկցուած
է գղ. Topinambour տունկն : - Իսկ Նոր Հայկազեանն, Զախ-
ջախեան և Առձեռնն Բառարանն երկու նշանակութիւն կու-
տան այս բառիս. 1^o գղ. Pomme de terre, տճ. եեր էլմալ.
2^o գղ. Camomille, տճ. փոփնեա :

Ըստ իս՝ Գեփնախնոյն, որ է բառական թարգմանութիւն
յն. Խոտի՛ Բլեմէն բառին, (Խոտի՛ գետին, Բլեմէն՝ խնձոր), կը նշանակէ
միայն գղ. Camomille ըսուած ծաղիկը, զոր հայերէն կը կո-
չենք նաեւ խնձորխոտ կամ երիցուկ. Յոյնք փոփնէ խնոյն անուա-
նած են երիցուկը՝ իւր ծաղկանց խնձորի հոտ ունենալուն
պատճառաւ. գղ. Camomille բառն ալ յն. Խոտի՛ Բլեմէն է :
Գաղիանոսի բառերուն մէջ ուր գրուած է. «Քամեմեղոն.

Գեորգիանյոր», Camomille տունկը հասկնայու է, և ոչ թէ Pomme de terre, որ Ամերիկայի յատուկ բոյս մ'է, Եւրոպա ժ.Ձ դարու մէջ մտած է, և կարծեմ թէ Գաղղիանոսի անձանօթ էր և թէ իւր հայ թարգմանչին: Pomme de terreի կրնանք ըսել Գեորգիանյոր, բայց նոր առամմը. հետեւաբար այն բառարանք որ միայն նախնեաց բառերը և բառից նշանակութիւնքը կը յիշատակեն, պէտք չէ որ դնեն բառի մը այժմեան առումը, որմէ շփոթութիւնք կրնան առաջ գալ, ինչպէս որ Հրացան ամականէն ետքը չեն դներ Հրացան գոյական, իբր գլ. Fusil, տճ. Բի-ֆէ+, և այլն և այլն:

10. Զոյգութիւնք: Ստեփանոս կամենիցացի կը գրէ. «Զոյգութիւնք. Յունաց բառ. կըռապետ. առ հինն էր, որ նախքան զգտանիլն արծաթեայ և ոսկեայ դրամացն, զպղինձ ի թոշակ զինուորաց կըռէր, և հայէր զի մի խաբէութիւն ինչ ի դրամն լինէր. լա. Libripens, Zygostata. Մ. Խորեն. Բ. կ. «Ընդ այն ժամանակս առաքեաց (Սդրիանոս) զօր ծանր զկողմամբք Ասորեստանեաց, և մերոյն Արտաշիսի հրամայեաց երթալ ի Պարսս հանդերձ իւրովք շէ-գոյգութիւնք. զորոյ զհետ քարտուղարութեամբ լեալ այս այր, որ զայս պատմութիւնս ետ մեզ, հանդիպի Արտաշիսի ի Մարսս, ի Սոհունդ անուանեալ տեղով» : - Նոր Հայկազեանն կը գրէ. «Զոյգութիւնք. բառ անյայտ. թուի Զոյգ ոստանիկաց, կամ զոյգ ոստուցեալ ի գործ պատերազմի. այսինքն՝ նիզակակից, հեծեալ, ասպետ, ազատորեար, համհարզ, համահարզ. եօլալ» : - Հ. Ման. Զախջախեան. «Զոյգութիւնք. թուի զոյգ ոստանիկաց, կամ ազատորեար, գունդազատաց, ասպետաց. իտ. Corpo de' nobili, corpo di guardia reale» : - Իսկ Առձեռն Բառարանն. «Զոյգութիւնք. պատերազմակից» : - Հ. Արսէն Բագրատունի իւր Գաղղիերէն ֆերականութեան մէջ (Ս. Ղազար, 1821) երես 99, Aide de camp բառի առջեւ կը դնէ Զոյգութիւնք, (որմէ կ'առնու նաեւ Ա. Գալֆա իւր Հայերէն - Գաղղիերէն բառարանին մէջ),

և ի Հայկ Դիւցազներգութեան եւս, Զ. տող 743, Զայֆապար գործածած է նոյնպիսի մտքով .

«Ելցես ապա, Մանաւաղ, վաղիւ վաղ քաջ ընդ առաւօտս ի տուն նորա զհետ նորին քոյովդ արի զայֆապար» :

Ըստ իս՝ ուղիղ է Ստեփանոսի կամենիցացւոյ տուած մեկնութիւնն, և սխալ միւս երեք բառարանացը : Զայֆապար* է բառ յոյն շիշապարէն կամ շիշապարոս, որ կը նշանակէ՝ կշռող, շիշ՝ բառէն որ է կշիռ : Նոյն է և լատ. Zygostata, Zygostates, զոր այսպէս կը մեկնէ Տիւ Գանժ իւր Միջին և Ստորին Լատիններէնի բառարանին մէջ (Glossarium mediae et infimae latinitatis) . «magistratus per singulas civitates a Juliano constitutus qui exortas de solidis controversias dirimeret» : Իսկ վիկտոր Լանկլուա Խորենացւոյն վերոյիշեալ հատուածը այսպէս կը թարգմանէ . «Adrien ordonna à notre Ardaschès d'aller en Perse avec les nobles de sa garde», և ի ծանօթութեան կ'ըսէ . «Le mot Zioukosdad, qui ne se rencontre que dans Moïse de Khorène, n'a pas de signification bien précise» :

11. Թաթար : Միսիթար Աբբահօր աշակերտաց բառարանն կը գրէ, Հ. Բ. էջ 142 . «Թաթար . կնճիթ ամպոց որ իբրեւ զբազուկ երկայնացեալ յերկնից՝ առնու ի ծովէ կամ ի գետոց զչուր իբրեւ թաթիւ . առկ . ամպի խօրթում . ըստ այնմ ի գիրս Սարգսի ի ձեռագիրն . Եւ հանէր իբր Թաթարով իմն շուր ի ծովէն» : - Նոր Հայկազեանն . «Թաթար . լաւ եւս Թաթարն, ըստ Գ. Թագ. Ժր. 4 . կամ Թաթար, Թար, ով . որ կարծի նշանակել զվայրիշեալ թաթածեւ կնճիթ ամպոյ . «Ահա ամպ փոքրիկ ի վերայ ծովուն, և հանէր իբր Թաթարով իմն շուր ի ծովէն» . Սարգիս, մեկն. Յակ. ԺԱ. ումկ. Խօրթար . ով . բայց գուցէ գրելի էր Թաթարով իմն, որ միաբանի ընդ-

* Այս է հարազատ ընթերցուածն ըստ ընտրելագոյն օրինակաց Խորենացւոյ Պատմութեան, համեմատ ուղղագրութեան յոյն բառին, և ոչ թէ Զայֆապար :

պատմութեան գրոց» : - Հ. Ման. Զախճախեան կը դնէ իբր նորահնար բառ . «Թախու . կնճիթ ամպոյ ի ձեւ թաթի իջեալ յերկիր կամ ի ջուրս . տճ . Խորխուճ . Իա . Tromba di nuvola, Turbine, Vortice d'aria» : Նոյնպէս Առձեռն Բառարանն կը գրէ Թախու կամ Թախիւ , և կը մեկնէ Խորխուճ : Հ. Սրապիոն Լախնեանն ալ գլ . Siphon և Trombe բառերու առջեւ կը գրէ Թախիւ :

Ըստ իս՝ չիք բառ Թախու , որով և ոչ Խորխուճի նշանակութիւն , իբր գլ . Trombe : Սարգսի օրինակին մէջ դրուած գործիական լատին բառին ուղղականն կամ Թախիւ է կամ Թախու , իսկ նշանակութիւնն հետազոտելի : Այս լատին գործիականն , յար և նման Սարգսի ըսածին «Խախու իմն» , կը գտնուի նաեւ «Առ որս անպատում է բանն զոր եցոյց աեսողն» կանոնագլխին մէջ . «Եւ այրն վառագգեստ ի ներքոյ միջնաթեւին Խախու իմն առնոյր զհրատն շագըռովըն» . աես Բազմալէպ 1862 ամին , էջ 10 :

12. Թախ : Նոր Հայկազեանն կը գրէ . «Թախ» . ազգ ժժմակի կամ խեցեմորթի . թերեւս իբր թոնժ անդամօք . «Եւ նշանակ խեցեմորթացդ կատարելագոյն է , որոց մարմինն սւտելի է . դարանամուտ լինի երկուք պատենիւք . միտլն ի միջէ կողմանէ , և միստլն ի միջէ՝ որք զնովաւ անկեալ սնդեն պատեանքն : Արգ զսոսա վասն զի քակել անհնար էր , որ ասին Թախ* գիւրահնարաբար կլանեն յառաջագոյն , զի կոկորդին ջերմութեամբ հալեացի՝ որ զպատեանսն պինդ պահէ սինձն , և սակաւ (չարբա տակաւ) թուլացեալ արձակեացին աղիքն . յայնժամ ի դուրս ընկեցեալ ի ձեռն ընդարձակութեան՝ զուտելին ի ներքս կորզեալ մատուցանեն անձանց» . Փիլոն , յլ . բան ունել և անասուն կենդանեացդ , էջ 139-140 . ի լուսանցին նշանակեալ պեղախու՝ բառ ի համար ալ կ'ըսէ Նոր Հայկազեանն . «Թերեւս իբր պեղագոսեանք ,

* ի լուսանցի Փիլոնի ձեռագրին Թախ՝ բառն կը մեկնուի Պեղախու :

ծովականք կամ պողիպողք» : - Հ. Ման. ԶախՂախեան . «Թռչն» . ազգ ինչ ծովային խեցեմորթից . կոչի և Պեղական . իտ . Sorta di conchiglia marina » : - Առձեռն Բառարանն . «Թռչն» . ծովու ժժմակ կամ խեցեմորթ մը» :

Ըստ իս՝ Թռչն է յն . Բէլէֆոնուս և գղ . Pélican կոչուած թռչունն , որ ի մեզ կ'ըսուի և Հաւալուսն կամ փորահաւ : Յայտնի է ի յաջորդ վկայութենէ Գէորգեայ Պիսիդէսի վեցօրէին , յորում ինչ որ կ'ըսէ փիլոն Թռչն ի համար՝ նոյնը կ'ըսէ Պիսիդէս Փորահաւու համար (յոյն բնագիրն կը գնէ Բէլէֆոնուս) . և փիլոնի ձեռագրին լուսանցին մէջ ալ իբրեւ մեկնութիւն Թռչն բառի նշանակեալ Պեղական ուրիշ բան չէ բայց եթէ հայ տառագարձութիւն յունարէն Բէլէֆոնուսի .

«Ո՞վ բանայ զբերան փորահաւուցն
 Փոխանակ սուսերի սքանչելի իմն գործեալ երկայն սէգս ,
 Բացեալ զնոսա ամենակեր բերան
 Անյագաբար յափշտակիչ ձկանց :
 Դժբեն իմաստութեամբ զգաղտակուբն
 Յորժամ յիւրեանց խեցեղէն տիփան ամիտիին ,
 Ստուգեալ ճարտարութեամբ բանան զնոսա .
 Քանզի փակեալ գոլով խեցեղէն թերթիցն
 Եւ անհնարին առ ի բանալ ,
 Կլանեն զնոսա ի խարոյկ սրովայնին ,
 Եւ լուծումն կրեալ կարծրութեանն նոցա
 Ի ջերձութենէն թուլացուցեալ վաղվաղակի
 Ի բաց փսխեն , եւ մերկ գտեալ զկապս նոցա
 Յափշտակեն զմարմինն , ոչ ունելով նոցա զխեցեղէն զգեսան» .
 յոյն բնագիրն Պիսիդէայ վեցօրէին , սող 1098-1112 :

Տես Թռչն , ազգ ջրային թռչնոյ , և ի Պատմութեանն Ղ . փարպեցւոյ , էջ 26 . «Այլ և զջրասուզակ մամուռախնդիր խօզակեր մեծանձունք և յաղթամարմինք հաւքն , փորն և Թռչն և սագն , և կամ այլ բազում և անհամար ցամաքայնոցն և ջրայնոցն ջուկք թռչնոցն» : Թերեւս այս Թռչն ի ուղիղ ընթերցուածն ըլլայ Թռչն կամ Թռչն :

13. Խաբէ : Ստեփանոս Կամենիցացի կը գրէ . «Խաբէ . խոտ նման լախանայի . ի թաւոտ տեղիս լինի . լա . Anchusa, Brenthia . Գաղիանոսի բառք» : - Նոր Հայկազեանն . «Խաբէ . արութիւն մարդոյ . առնի անդամ . պրս . Կէր . յն . անի'րս . Գաղիանոս» : - Առձեռն Բառարանի երկրորդ տպագրութիւնն . «Խաբէ . պոչ» (այսինքն առնի անդամ) :

Ըստ իս՝ ուղիղ է Ստեփանոսի Կամենիցացւոյ տուած մեկնութիւնն , և բոլորովին անընդունելի Նոր Հայկազեան և Առձեռն բառարանաց գրածը : Գաղիանոսի բառերուն մէջ կը կարդանք . «Անի'րս (կամ Անի'րս) . Խարի» . Նոր Հայկազեանն կը սխալի իմանալով յն . անի'րս , առնի անդամ , փոխանակ իմանալու յն . Կ'նի'րս , լա . Anchusa , որ է գլ . Orcanète կոչուած արմատն , որմէ կ'եղնէ կարմիր ներկ : Խաբէ կ'ըսուի նաեւ Շէի Խաբէ , այսինքն՝ կարմիր խարի , ի բառարանին Ստեփանոսի Կամենիցացւոյ , որ կը գրէ . «Շէի'րս , բոյ . խոտ որով կանայք զերեսս իւրեանց կարմիրս առնեն . լա . Enchusa . Յակ . ճառ . ԺԳ . Մի՛ ըստ Եզրբելի շէի'րս գրէմս այլադունել» :

14. Կոչ : Ստեփանոս Կամենիցացի կը գրէ . «Կոչ , կոչի . որովայնի շատ հոսումն , բայց առանց խոցման . լա . Diarrhaea . Գաղիանոսի բառք» : - Նոր Հայկազեանն . «Կոչ . լուծումն որովայնի . տճ . Խոչ . որպէս յն . Կոչ'րս . Գաղիանոս» : Նոյնպէս լուծումն որովայնի կը մեկնեն Հ . Ման . Զտխջախեան և Առձեռն Բառարանն :

Ըստ իս՝ Կոչ կամ Կոչ , (և ոչ թէ Կոչ , և գիրն սխալմամբ և կարդացուած է . տես Բառաքննութեանս Ա մասին մէջ 61 երրորդ ուղղութիւնը ,) է տեսակ մի որդ : Գաղիանոսի բառերուն մէջ կը գրուի . «Դարիրէ . Կոչ (կարդա՛ Կոչ)» . այս Դարիրէ բառը Ստեփանոս Կամենիցացի և Նոր Հայկազեանն սխալմամբ կ'իմանան յունարէն Կոչ'րս , որով լուծումն որովայնի կը մեկնեն . բայց ԺԳ գարու մէջ գրուած բժշկարան մը կ'ըսէ . «Դարահրեհ . Կոչ» . և Ամիր

տողվաթ Ամասիացի հետեւեալ պատուական տեղեկութիւնը կուտայ մեզ իւր Անդիտաց Անպէտ մատենին մէջ. «Չարարեհ, որ Հայերն կու կու ասեն, և թուրքն հասարակ ասէ. ինքն ազգի ազգի է, տաք է և չոր է յերկրորդ տարածան. օգտէ տայուսայլապին և մազ կու բուսցնէ, և այրող է, և զտղան ի փորուն կու ձգէ, և զգողն և զկանաց արունն կու յորդորէ, և զքարն ի բշտէն կու հալէ. և օգտէ սնկան, և զչտկներն կու լաւցնէ, և զպեղծ ըզունկն կու հանէ, և օգտէ պիսակին և հերքունին և բորին. և զան ուռեցն որ սարատան ասեն՝ հալէ, և թէ օծեն՝ օգտէ յերդնիսայի, և զիր շարութիւնն տանի կաթն և վարդի ձէթն, և իր փոխանն պալատուրն է: Իպն Պայտարն ասէ. թէ քացխով խառնեն և ի յանձն օծեն՝ զըջիլն սպաննէ, և թէ հոռոմ՝ ձիթով խառնեն և զան հոռոմ ձէթն օծեն տայուսայլապին՝ օգտէ մազ կու բուսցնէ. և օգտէ պարասին. և թէ ի ձէթն ձգեն և մէկ շարաթ յարեւն դնեն և յետեւ ի յականջն կաթեցնեն որ ցաւ ունի՝ օգտէ և զցաւն տանի և զխլութիւնն այլ տանի. և թէ ի պախրու մսին ի շուրվան խառնեն և տան ան մարդոյն որ կատղած շուն լինի խածեւ որ խմէ՝ օգտէ: Եւ այսոր կերպն այս է որ ինքն սեւ գլուխ որդկներ է, որ վերեւն կարմիր և մէջն սեւ լինի. և զան ի հոռոմ ձէթն դնեն և ի յարեւն կախեն վեց ամիս կենայ. և զան եզն քալ գլխուն օծեն՝ օգտէ. և եթէ զան մէկայն այն մարդն խմէ որ ի բուշտն ցաւ ունի՝ օգտէ. և զիր շարութիւնն տանի սամթին ջուրն և արդար եզն որ ի վերայ խմեն օգտէ: Ստէ Պատեհին թէ ինքն կենդանի է, և ի ճանձէն մեծ է, մեղուի չափ կայ, և կարմիր է, և բարակ է, սեւ կէտեր կայ ի վերայ, և ինքն սպաննող է. և ի Համատանա բոլորն շատ կու լինի. ամէն մէկն քան մեղու մն է, և ի շարմին վերայ կու նստի, և իր կերակուրն շիպրբմն է. և յանապատն ի դաշտերն շատ կու լինի. և թէ ուզես որ ի գործ արկանես, գիր զինքն ի նոր պատուկ մին, և զբերանն կապէ քթանէ լաթով, և զքացխին

զըողին յինքն բռնէ որ մտնու ի մէջն և զխուչակն բռնէ և ապա ի գործ արկ. և լաւն այն է որ ոսկեգոյն լինայ. տաք է և չոր է» :

Արարերէն լեզուի մէջ քննելով դարբեր, դարանբեր կամ դարբեր բառը, կրնայ ստուգուիլ հայերէն կու ըսուած որ զին նշանակութիւնն :

15. Հօրորդոմբեան : Նոր Հայկազեանն կը մեկնէ զայո բառ. «ընտանութիւն սիրոյ ի մէջ մեծի ուրուք և փոքու՝ իբրեւ ընդ հայր և ընդ զաւակ. տճ. պապալքի օղուլուք հիսապը. Այդ քո հօրորդոմբեանդ չվայելէ. Զաքարիա Ծործորեցի» : Նոյնպէս Առձեռն բառարանն կը մեկնէ. «ընտանի սէր» :

Ըստ իս՝ Հօրորդոմբեան Ստորին հայերէնի մէջ կը նշանակէ ազնուականութիւն. «Այդ քո հօրորդոմբեանդ չվայելէ», ըսել է՝ ասի քու ազնուականութեանդ չի վայլեր : Կայ և Հօրորդի, այսինքն ազնուական, զոր չի յիշեր Նոր Հայկազեանն. «Եւ բազում հօրորդի և մեծազգիք եկին զհետ նորա ի Հռովմայ». Մատթէոս Ուռհայեցի, (տպ. Երուսաղէմ, 1869) էջ 460 : Մինչեւ հիմա Պօլսոյ աշխարհագրարին մէջ կը գործածուի «Հօրորդի զաւակ է», այսինքն մարդու զաւակ է, ազնուական ծնունդ ունի, հասարակ տնէ չէ :

16. Ծափանակ : Ստեփանոս Կամենիցացի կը յիշէ զայո բառ յԱշխարհագրութենէ Մովսիսի խորենացոյ, բայց չի գներ նշանակութիւնը. յայտնի է որ տճ. Կեփանէ չի հասկընար, վասն զի առանձինն կը յիշատակէ իւր բառարանին մէջ Կաստանայ՝ պտուղ, Կաստանէնի՝ ծառ, և Կաստանոյ՝ կաստանենեաց ծառաստան. ահաւասիկ վկայութիւնքն. «Կաստանայ. ծանօթ պտուղն, զոր արեւելեանք շահապալութ կուչեն, մեք՝ կաստանայ. ամենայն լեզուաւ բաց յեբրայեցոցն կաստանայ ասի. լատ. Castanea, Balanus. Բժշկ. «Մի կերիւցէ զկաստանայ մաղաստն» . - «Կաստանէնի. ծառ յորմէ կաստանայ պտուղն ելանէ. լատ. Castanea. Քաղ. «ընդ ծմակաւ

կաստանենւոյն նստեալ» . - «Կաստանայ . տեղի կաստանենեօք տնկեալ . ըստ Castanetum . Տաղ . «Ի կաստանոցն երթեալ խաղան , իբր» : - Մխիթար Աբբահօր աշակերտաց բառարանն կը գրէ , Հ . Ս . էջ 782 . «Շաֆանայ . է ազգ ինչ կաղնոյ այսինքն կարծրակեղեւ պտղոյ , պատեալ թխագոյն կեղեւանօք , որ արտագրի ի վշալից պատեանս իբրեւ ի փոքրիկ տուփս : Չսա այլազգական բառիւ կոչեմք Շահպալուտ . ումկ . Կաստանէ . խորեն . յԱշխարհագրութեան» : - Նոր Հայկազեանն և Հ . Ման . Զախջախեան երկբայանօք կը գրեն այս բառիս ընթերցուածը , Շաֆանայ , Շաղֆանայ , Շաղբանայ , և կարծեօք միայն տճ . Կաստանէ բառին նշանակութիւնը կուտան . առաջինն վկայութիւն կը բերէ խորենացւոյն Աշխարհագրութեանէն . «Կորճայք . . . ունի զառիկ , և ի մրգոց շաֆանայ» . բայց Ս . Ղազարու տպագիրն , էջ 608 , կը դնէ շահնդանայ , և ի ծանօթութեան կ'ըսէ . «Հին տպագիրն շաֆանայ . երկու օրինակը շաղբանայ . միւս եւս մեկնութեամբ աշահնդանայ , այսինքն Գանգար ինչ սերմն» : - Առձեռն Բառարանի երկրորդ տպագրութիւնն կը դնէ . «Շաֆանայ . կաստանա կամ անոր նման պտուղ . տճ . Կաստանէ .» - «Շահնդանայ . պտուղ մը» : Իմ խուզարկութեանցս համեմատ՝ Շաֆանայ բառն Կաստանէի նշանակութեամբ հարիւր երեսուն տարիէ ի վեր մուտ գտած է մեր այժմեան հայերէնին մէջ , շնորհիւ Մխիթար Աբբահօր աշակերտաց Հայկազեան բառարանին (տպ . յամին 1749) , որոյ տուած բացատրութիւնը տեսանք վերագոյն : Շաֆանայէն շինած ենք նաեւ Շաֆանակէնի , Շաֆանակագոյն , և թէ ի խօսս թէ ի դիրս առ հասարակ կը գործածենք այս երեք բառերը , զորս նուիրագործած են իրենց գրուածոց մէջ առաջին կարգի հայագէտք , օրինակ իմն Հ . Արսէն Բագրատունի ի թարգմանութեան Մշակականացն վերգիրեայ , Բ . տող 15 .

«Իսկ ոմանք յառնեն կանգնին ի սերմանէն արկանելոյ , Զերգ երկնուղէչ շաֆանայ , և ի մայրիս յաղթ վարսաւոր Տերեւեալն Արամազդայ շոճ և կաղնիք հելլէն դաբիր» :

Նոյնպէս Գեր. Եղուարդ Հիւրմիւզեան ի թարգմանութեան Տելեմաքայ, ԺԲ. էջ 366. «Պատրաստէ պանիր, շահանայ և միրգ դալար իբր այն ինչ ի ծառոց կթեալ» :

Ըստ իս՝ անվաւեր է թէ Շահանայ ընթերցուածն և թէ +եֆանէի նշանակութիւնն : Հարազատ բառն ի վերողրեալ վկայութեան Աշխարհագրութեան խորենացւոյն ըստ ընտրելագոյն ձեռագորաց թուի Շահանայ կամ Շահրանայ, որոյ մերձաւոր է ձայնիւ, և թերեւս նշանակութեամբ, պարսկերէն շահանայ կոչուած պտուղն : Բեֆանէի համար Ստորին հայերէնի մէջ սովորական եղած է ըսել օտար բառով Շահալուի, կամ Կասթանայ՝ ինչպէս տեսանք ի վեր անդր ի վկայութիւնս Ստեփաննոսի Կամենիցացւոյ, որ ունի նաեւ Կասթանէնի, Կասթանոց. նոյնպէս ի գիրս վաստակոց կը գրանենք Կասթանայ, և ծառն՝ Կասթանայէ կամ Կասթանի. «վասն որ զԿասթանայն պահես» . Մի. էջ 136. - «Կաղնին և Կասթանային (խնդրեն) զանձրեւային (վայրս)» . անդ. Դ. էջ 4. - «Հնդի այսօքիկ են լաւ, ընկուզենի, նշենի, Կասթանի, դեղձի» . անդ. ՄԻԸ. էջ 143: Կրնանք համարձակ գործածել Կասթանայ և Կասթանայի կամ Կասթանէնի բառերը, որ կը ծագին թեսաղիոց և Պոնտոսի կաստանոն և կաստանա քաղաքաց անուաններէն*, +եֆանէի ծառեր առատ գտնուելով այս քաղաքներուս մօտ : Արդէն հայ լեզուի մէջ ունինք ուրիշ բառեր որ յատուկ անուաններէ յառաջ եկած են, ինչպէս փասեան՝ փասիս գետէն, թասուն (գինի)՝ թասոս կղզիէն, Շերամ կամ Շերամ՝ հին Սերաց աղգէն, եւայլն . բայց +եֆանէն հայեցի անուն մ'ալ ունի, այն է՝ Մաշհաֆրէ, իբր մաշկով պատած միրգ : ՅԱշխարհագրութեան խորենացւոյն կը կարդանք. «Տուրուբերան . . . ունի և դաղպէն և մեղր և մաշհաֆրէ և սպիտակ (կամ պիտակ) նաւթ և երկաթ» . էջ 608. ուրիշ օրինակ մը, որ կը գտնուի ի մատենադարանի Յ. Յ. Մխիթարեան Հարց վենետկոյ,

* Տես Châtaigne ի Գաղղիերէն բառարանն Վիդրէի :

այսպէս կը գրէ : «Գտանի (ի Տուրուբերան) պստակ և կաստանոն որ է ճաշօտիբէ (կարգա ճաշօտիբէ), և մեղր անոյշքան զամենայն երկրի, և երկաթ» : Մինչեւ այսօր խոտը ըրեցիք Մաշիօրէ անունը կու տան +եմանէ պողոյն . իսկ Պոնտահայք, եթէ հաւաստի է առած տեղեկութիւնս, ուղիղ եւս կ'արտասանեն Մաշիօրէ : Անշուշտ մեր նախնիք ծառին համար ալ ըսած են Մաշիօրէի, ինչպէս արդէն ունինք Հասաօրէի :

17. Ուստի՛ն է Նոր Հայկազեանն կը մեկնէ զայս բառ . «որոյ ուռքն նմանականք են միջակ . միջասահման ըստ անդամոց ձեռաց և ոտից . կամ պարարակ միջով .

«Այն ճորտն ճոխ էր եւ ճապուկ,
 Ուստի՛ն հաստաբազուկ,
 Լայնաթիկունք խարտեշագեղ» .

Գր . Նարեկացի, Տաղ Սայլին, էջ 473 :
 Իսկ Առձեռն Բառարանն կը մեկնէ . «միջակ հասակով» :
 Ըստ իս՝ Ուստի՛ն կը նշանակէ՝ ուռւոյ պէս բարակ կամ ձկուն մէջք ունեցող : Հետագայ վկայութիւնք կարծեմ բաւականապէս կ'արդարացնեն իմ կարծիքս .

«Ով ուստի՛ն ճշկացեղ գիրկ ածէ
 Կանաչ մնայ քան զնրչտարեմին» .

Յոհ . կթ . Թուրկուրանցի, Տաղ սիրոյ .

«Քո յիշիք է բարակ քան զուստի վարոյ» .

Գր . կթ . Աղթամարցի, Տաղ սիրոյ .

«Միջկուսնիք է ուստի ու սալվի չինար» .

Ղազար, Տաղ սիրոյ .

«Գրրկեմ զայս ուստի յիշկուսնիք որ հագեր ես շար կապանի» .

Տաղ սիրոյ .

18. Տարան առնեմ : Այս բառս կը յիշուի միայն Առձեռն

Բառարանի երկրորդ տպագրութեան մէջ, և կը մեկնուի ճշորեւ, այսինքն գլ. se Balancer, «սալնակի խաղալ» :

Ըստ իս՝ Տարան աստի՛, բայ Ստորին հայերէնի, որ կը գտնուի Մխիթար Հերացւոյ Զերմանց մխիթարութեան մէջ, ԽՍ. էջ 125, «Եւ յայն երկու օրն որ հանկիստ լինի, ի ձի հեծնելն և զտարան արնէն մի արգելեա») , կը նշանակէ շարժում ընել, քալել, պըտըտիլ, faire de l'exercice, ինչպէս կ'ըսեն Գաղղիացիք : Մխիթար Հերացւոյ բժշկարանին ուրիշ ձեռագրի մը մէջ սոյն հատուածս կը գրուի . «Եւ յայն երկու օրն որ զնուպան չուննա, ի ձի հեծնել և արնէն մեծ օգուտ է» : Ստորին հայերէնի մէջ Անցնիցեւ կը նշանակէ պըտըտիլ, ժուռ գալ . իսկ Անցնիցեւեւ պըտըտընել, ժուռ ածել :

19. Տե՛ս : Նոր Հայկազեանն կը յիշէ զայս բառ յեփրեմի մեկնութենէն Աւետարանի և կը մեկնէ «կնիք կուսութեան» . իսկ Առձեռն Բառարանի երկրորդ տպագրութիւնն կը մեկնէ ոչ միայն «կնիք կուսութեան (գլ. Hymen)», այլ և «բոլոր իգական անդամը (գլ. Vulve)» :

Ըստ իս՝ Եփրեմայ Աւետարանի մեկնութեան մէջ, կամ թէ աւելի ճիշդ խօսելով՝ «ի Մարգարիտն յայտնութիւն» ճառին մէջ, Հ. Բ. էջ 351 - 358, Տե՛ս բառն կը նշանակէ խեցեմորթներու, ոտարէներու, գաղտալրերու խեցին կամ պատեանն . ընթերցողն կրնայ տեսնել զայս հետագայ օրինակներէն . «կոնքն բարբառեսցին զձնունդն մարգարտին . ասացէ զյղացումն արնի . արնի եղիցին վարդապետք՝ որ ի ջուրսն են՝ մարդկան, որք կարծեցին յերկինս բնակել . (էջ 351) . . . մարգարիտս քար է ի մարմնոյ ծնեալ, զի ի պարանից ելեալ երեւի . (էջ 352) . . . ոչ ցանկալից եղև արնի յղացեալ զմարգարիտն, բայց միայն զգայութիւն յաւելուածոյ իմացաւ . և Մարիամ առանց ցանկութեան ծընաւ զբրիտոսս . . . թագեաւ իբրեւ յարգանդի ի խորշ արնի, և իբրեւ բնութեամբ ազդեցաւ առ ի կատարելու»

Թիւն հասակին . (էջ 353) . . . վասն որոյ ի ներկայ զօրու-
 թենէն կոյս իբրեւ րիւր ծնաւ բնութեամբ, և իբրեւ կին
 ոչ ամենեւիմբ չարչարեցաւ : Դարձեալ միակացութիւնն
 եկեալ բնութեանն, որպէս րիւր ստորէիցս, ի կուսական
 կարգն . (էջ 355) . . . որպէս րիւր կոնքացն յառաջ բե-
 րելով զմարդարիան . (էջ 356) . . . : Հայեցարուք ի մար-
 ցարիան և մի մօլորիք . . . րիւր ջրով, և ձեռն ջրով ա-
 ձեն . ոչ կիզուն փայլատակունքն զրիւր մարմինն : Զիարդ-
 ի գոյութիւն եկին միութեամբ հուրն և ջուրն . եկելոց
 րիւր անշէջ պահեաց զթոյլ բնութիւնն . (էջ 357) . . . րիւր
 յայտնեցան, զի ոչ ի ձեռն կանացի անդամոց յղացաւ . զի
 ամենայն մարմին երաց զերկու րիւր, և ոչ ետուն մարմնա-
 կան կարգքն . րիւր անհոգութեամբ արձակ ունելով զմար-
 մին՝ յանկարծակի ի փայլակմանէն լցան . (էջ 358) . . .
 րիւր րիւր բանան, բայց մարդարիան չափ անքակ է . .
 ահաւասիկ րիւր և մարդարիան, զորս միաբան էած
 Քրիստոս ի ձեռն շնորհին» . էջ 358 : Իսկ ի Պիսիդեայ վե-
 ցօրէին կը գրուի Յէ՛ Նոյնպիսի իմաստով .

«Իժերն իմաստութեամբ զգաղտակուրան

Յորժամ յիւրեանց խեցեղէն րիւր ամիտիին» .

տես ամբողջ վկայութիւնը ի բառն թիւ), էջ 116 :

20. Բերեւէ : Ստեփանոս կամենիցացի կը գրէ . «Բերեւէ,
 Ինչ, շուր . որ զանուշահոտ արմատս ունի, բայց կծուս . ի
 ճախինս լինի, դեղ է սրաի . լատ . Acorum, Acorus . Գաղիա-
 նոսի բառք : Սխալին որ զկեղն Իբերեւ մեկնեն, զի Իբերեւէ
 բայ է» - Նոր Հայկազեանն . «Բերեւէ, խոտ և արմատ բը-
 ժըշկական . յն . րիւր . լատ . Acorum, Acorus . ած . Ինչ օն .
 Գաղիանոս» : Նոյնպէս Հ. Ման . Զախճախեան և Սոճեան
 Բառարանն Ինչ օն կը մեկնեն : Հ. Սրապիոն Էմինեան ալ
 գլ . Iris des marais ջրային բոյսը կ'անուանէ «Սուտ Իբերեւ .
 (րիւր Ինչ Ինչ օն - Էնչէն)» :

Ըստ իսկ կը սխալին ամենայն բառարանք . Բերեւէ է

տեսակ մը վէրք կամ կեղ երեսաց և գլխու, յն. «ի՛՛»,
լտ. Achores, իտ. A'cori, գղ. Achores, տճ. ۱۰۰-۱۱۰: Գա-
ղիանոսի բառերուն մէջ կը գրուի «Աքորում (Կարթա-
Պքորոս, « և ՚ կը շիօթին ի ձեռագիրս, ինչպէս ընդար-
ձակօրէն խօսեցայ Բառաքննութեանս սկիզբը, Գլ. Ա.
յօդ. ա. էջ 11)». Քերէշ»։ Ստեփանոս Կամենիցացի, և ըստ
նմանէ՝ Եր Հայկազեանն և միւս բառարանք փոխանակ
իմանալու լտ. Achores կոչուած կեղը, կ'իմանան լտ. Aco-
rum կամ Acorus բոյսը, որով Քերէշ և Բաշի կամ Բաշիտի
կ'ըլլան նոյնանշան։ Քերէշ կը գտնուի նաեւ ի գիրս Երե-
միա Մեղրեցւոյ. «Կեղ և խաղաւարան. Կերէշ խոցն է, որ
եռացուցանէ և մորմոքեցուցանէ զմարմինն»։ Կան դար-
ձեալ Քերէշի՝ և Քերէշիտի՝ բայք. «Կեղն Կերէշու մոր-
թոյ երեսաց, ձեռաց և ոտից»։ Վարդան, մեկնութիւն
Ելից. - «Վեցերորդ հարուած էր կեղն և խաղաւարան,
զի Կերէշը զմորթն, և խաղաւարան մորմոքէր զմարմինս
նոցա»։ այս վկայութիւնս կը գտնուի Ստեփանոսի Կամե-
նիցացւոյ բառարանին մէջ։ - «Հրց. Պաղպաջն (այսինքն՝
Ձինչ է պաղպաջն)։ Պտտ. Սպիտակադոյն Կերէշիտի, ոչ
հաւասար բոլոր և ոչ երկայն, կունճկընջոտ»։ Վանական
վարդապետ, Հարցմունք։

Քերէշ բառի նշանակութիւնը արդէն ուղղած էի Գաղ-
ղիերէն - Հայերէն Բառարանիս Յայտարարութեան մէջ։
Գերապատիւ Վահան վարդապետ Բաստամեանց, Վանա-
հայր Ս. Գայիանեան վանից, որ կարգացեր էր իմ Յայտա-
րարութիւնս Տփլիսիսու Մշակ լրագրին մէջ, ուրախակցու-
թեան ազնիւ նամակ մը գրեց ինձ 1879 յունիս 29 թը-
ւականաւ, յորում կ'ըսէ. «Իմ անկեղծ համակրութիւնս
յայտնելուց յետոյ՝ աւելորդ չեմ համարում հաղորդել
Ձեզ և մի փոքրիկ տեղեկութիւն, որ գուցէ հետաքրքրո-
ղական լինի Ձեզ համար։ Ձեր Յայտարարութեան մէջ
յիշած էք ի միջի այլոց և Քերէշ բառը, որ նշանակում է,
որպէս Դուք բացատրում էք, մի տեսակ վէրք կամ կեղ

երեսի, գլխի, և այլն : Այդ բացատրութիւնը շատ ուղիղ է և ճիշդ, վասն զի +երեւել բառը մինչեւ այժմ գործածվում է Տփլիսի Հայերի և մանաւանդ վրացիների մէջ նոյն նշանակութեամբ, հասկանալով աւելի այն սպիտակ և չոր թեւը կամ բարակ կաշին, որ պոկվում է երեսից մանր վէրքերից յետոյ և մանաւանդ արեգակի այրածից յետոյ. զոր օրինակ ասում են. «Արեգակից երես +երեւել է Բուսել, երեսից +երեւել է վեր կենում» և այլն : Իսկ վրացիք բառի վերջը աւելացնում են մի ի, +երեւելի, և գործածում են նոյն մտքով, որպէս և Հայերը» :



Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ծ

Ասպորդան ծաղիկ . էջ 5 : - Մխիթար Գոշի վկայութենէն զի-
տէինք միայն որ Ասպորդան լեռնական ծաղիկ մ'է . բայց Գաւիթ
Սալաճորեցի սարկաւազն իւր Ծաղկանց Տաղին մէջ, (զոր հազոր-
դեց ինձ ազնուութեամբ Հ. Ստեփանոս Վ. Եազրճեան,) կը սորվե-
ցնէ մեզի որ Ասպորդան ծաղիկն գեղեցիկ կապոյտ գունով է եւ
սակաւահոտ .

«Ան աբօսան ծաղիկ մի կայ,
Իսկի վար չի գար լեռներուն,
Վառ կապուտ է, հոտն է սակաւ,
Ի սահանդ եղեր է իղներուն (?)» .

Եօրինակին գրեալ էր մի բառ Անաբօսան, բայց յայտնի վրիպակ է,
վասն զի նոյն Տաղին մէջ կ'ըսուի ուրիշ երեք տեղ . «Այն պալա-
սան ծաղիկն որ կայ» . - «Այն սուսամբար ծաղիկն որ կայ» .
- «Այն համասիւբու ծաղիկն որ կայ» :

Ընդ Բնաս . էջ 27-28 : - Ահաւասիկ վեցերորդ վկայութիւն մի
եզակի ընդ Բնաս ի յՈսկերեբանի Եփեսացոց թղթոյն մեկնութե-
նէն, Ը . էջ 763 . «Մանաւանդ թէ ընդ Բնաս իսկ տարածեցան ար-
քունի հրովարտաօքն, եւ վարատեցին զխաւարն որ ընդ հանուր
տարածեալ մածեալ կայր» : Թէ այս եւ թէ միւս հինգ վկայու-
թեանց մէջ, զորս յիշած եմ գրուածոյս 28 երեսը, ընդ Բնաս կը
նշանակէ՝ ընդ ամենայն տեղիս, գղ . Partout . բայց ընդ Բնաս,
միշտ եզակի, կը նշանակէ եւս՝ ընդ ամենայն, ամէնը մէկէն, բո-
լոր բոլոր, գղ . En tout . ահաւասիկ երեք վկայութիւնք այս
նշանակութեան . «Ընդ ամենայն քառասուն եւ երեք ողոմպիադք
եւ ամք երկու, եւ ընդ Բնաս ամք հարիւր եօթանասուն եւ չորք» .
Եւս . Քրոնիկոն, Հ . Ա . էջ 557 . - «Եին թուով ընդ Բնաս չորեքհա-
րիւր այր» . Ղ . Փարպեցի, Պամ . էջ 574 . - «Եւ այլ թուով արք՝
որք ի յազատաց եւ որ իւր իսկ ի Մամիկոնէից տանէն, ընդ Բնաս
որպէս թէ քառասնիւք կամ նուազիւք եւս» . անդ . էջ 465 :

Հ . Արսէն Բագրատունի իւր գրուածոց եւ թարգմանութեանց
մէջ ուրեք ուրեք կը գործածէ ընդ Բնաս, օրինակ իմն ի թարգ-
մանութեան Պոսիւէի դամբանականին ի Մարիամ Թերեզա . «Եւ
գալլիականն արութիւնն ընդ Բնաս տարեալ ամէ զահ եւ զերկիւղ

անուամբն Լուդուիկոսի» : էջ 92 . Ինագիրն կ'ըսէ . «Et la hardiesse française porte partout la terreur avec le nom de Louis.» Անշուշտ Բագրատունին կը յենու ի ծանօթ վկայութիւնն Յգնրկայ . «Ընդ հանուր արշաւին, եւ ընդ քնաս սլանան» . բայց ըստ իս ընդօրինակութեան սխալ է ընդ քնաս, յաջորդ «լանան բայի առաջին գիրն » անմտադրութեամբ կրկնուած ըլլալով ընդ քնաս-ի ծայրը : Նթէ օրէն էր ըսել ընդ քնաս, ինչո՞ւ Ոսկերեւանի եւ Յւսերեայ Քրոնիկոնին ոսկեղինիկ թարգմանութեանց մէջ վեց անգամ գրեալ կը տեսնենք ընդ քնաս, եւ ոչ մի անգամ ընդ քնաս : Նթէ ոք ի հայազիտաց հանդիպած է ընտիր նախնեաց ուրիշ մատենագրութեանց մէջ յոգնակի ընդ քնաս-ի, եւ եթէ չէ հանդիպած՝ համայն եւ այնպէս ուղիղ կը համարի ըսել յոգնականօրէն ընդ քնաս, ինչպէս նաեւ ընդ հանաս : (զոր ստէպ կը գործածեն ժամանակակից գրաբարողք), կը խնդրեմ որ հաղորդէ ինձ իւր կարծիքը եւ փարատէ իմ տարակուսանքս :



